





# ԶԱՌԱՇԻՆ

1984

9



ԽԱ

ՏԱՐԻ



# ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ՅուՆիս

1984



ՀՐԱՄԱՆԱԻ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ՝  
ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ ԿԱԹՈՂԻԿԵ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(24 հունիսի 1984 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այսօր մեր Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբում է Ս. Էջմիածնի, այս նվիրական տաճարի հիմնադրոյթյան տարեդարձը: Մոտ հազար յոթ հարյուր տարիներ առաջ հիմնվեց այս աղոթքի տունը, մայրը բոլոր Հայաստանայց Առաքելական եկեղեցիների, եկեղեցիներ, որոնք այսօր էլ կանգուն են ու գործում՝ սփռված Հայաստանի ամբողջ տարածքի վրա ու նաև արտասահմանում, այնտեղ, որտեղ ապրում են հայեր:

Այսօր, հայոց ողբերգական ճակատագրի հետևանքով, մեր ազգի համարյա կեսը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս:

Ամենուր, որտեղ համախմբվել են առավել կամ նվազ թվով հայեր, նրանց առաջին մտածումն է եղել կառուցել իրենց աղոթքի տունը, և ապա, նրա կողքին՝ մի դպրոց, որպեսզի այս երկու հաստատությունների շնորհիվ պահպանվի, ապահովվի գոյատևումը, վարճացումը և ծաղկումը մեր քրիստոնեական հավատքի և մեր մայրենի ազգային լեզվի:

Ճշմարիտ է այն պայծառ դատողությունը Առաքել Դավրիժեցի պատմագրի, որն ասում է. «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կա-

պեալ կայ», այսինքն համայն հայ ժողովուրդը մնում է կապված Ս. Գրիգոր Լուսավորչի Աջույն և Ս. Էջմիածնի վերա: Ահա խորհուրդը, նշանակությունը այսօրվա տոնախմբում: Աշխարհով մեկ, որտեղ որ կանգուն են Հայաստանյայց եկեղեցիներ, այսօր նշվում է մեծ հիշատակը Սուրբ Էջմիածին տաճարի հիմնադրության:

Դուք անշուշտ ծանոթ եք մեր պատմությունից, այս բեմից խոսված ուրիշ քարոզներից, Ս. Էջմիածնի հիմնադրության պատմությանը: 301 թվականին Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի օրոք, Հայաստանը ամբողջ ընդունեց նոր և փրկարար հավատքը Քրիստոսի ու դարձավ առաջին քրիստոնյա երկրներից մեկը: Հայ ժողովուրդը առաջիններից եղավ, որ իր սիրտը բացեց Քրիստոսի Ավետարանի լույսին և այդպես ապրեց այդ լույսով լուսավորված, ապրեց դարեր շարունակ մինչև մեր օրերը: Մեր սրբապան պարտականությունն է հավատարիմ մնալ մեր նախնիների ուխտին, հավատարիմ մնալ մեր քրիստոնեական հավատքին, հավատարիմ մնալ Քրիստոսի լույսին և վառ պահել դրանք մեր ժողովրդի թե՛ անհատական, թե՛ ընտանեական և թե՛ ընկերային կյանքում:

Սիրելի հավատացյալներ, ինչպես գիտեք երևի, Մենք նոր ենք վերադարձել Մեր վերջին ուղևորությունից, այս անգամ դեպի Հարավային Ամերիկա: Այնտեղ՝ այդ հեռավոր ափերին Ատլանտյան օվկիանոսի, ապրում են ավելի քան հարյուր քսան հազար հայեր՝ երեք երկրներում, Արգենտինայում՝ շուրջ ութսուն հազար, Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում՝ ավելի քան տասնհինգ հազար և շուրջ քսան հազար էլ Բրավիլում Սան-Պաուլո քաղաքում:

Այն բոլոր վայրերը, որ Մենք այցելեցինք, մեր ժողովուրդը խանդավառությամբ ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետին, որը գալիս էր Ս. Էջմիածնից Աստուծո օրհնությունը բաշխելու բոլորին: Ամեն տեղ այդ երկրներում հայերն ունեն բազմաթիվ եկեղեցիներ, ունեն բազմաթիվ կրթական հաստատություններ: Օրինակ՝ Բուենոս-Այրես քաղաքում կան հինգ հայկական եկեղեցիներ, հինգ նախակրթարաններ և չորս միջնակարգ ամբողջական վարժարաններ. ընդհանուր թվով՝ շուրջ երկու հազար հինգ հարյուր երեխաներ սովորում են Բուենոս-Այրեսի հայկական վարժարաններում: Սա մի նշանակալից երեւոյթ է գաղթաշխարհի կյանքի պայմաններում:

Այս երեք երկրներում կան նաև հայ մշակութային միություններ, հաստատություններ, շենքեր, ակումբներ, դահլիճներ, մարզասրահներ, նույնիսկ լողավազաններ երիտասարդության համար: Այսպիսով, հայկական կյանքը բավականին աշխույժ և եռուն վիճակի մեջ է գտնվում այդ հեռավոր ափերում: Եվ նրանք հոգով-սրտով կապված են մեր մայր Եկեղեցուն և մեր մայր Եկեղեցու կենտրոն Ս. Էջմիածնին: Ս. Էջմիածինը նրանց համար էլ սրբություն սրբոց է, գերագույն գրավականը իրենց կյանքի գոյատևման:

Բնականաբար Մեր այցելությանը ընթացքում տեղի ունեցան նաև պաշտոնական հանդիպումներ: Հայոց Հայրապետին ընդունեցին և հյուրասիրություններ կազմակերպեցին տվյալ հանրապետությանը նախագահները, բազմաթիվ նախագահներ և քաղաքագուխներ՝ միշտ դրվատական խոսքեր ուղղելով այնտեղ բնակվող հայերի հասցեին, որոնք ապրում են և գործում իբրև հարապատ զավակները մեր Եկեղեցու և մեր ժողովրդի՝ մնալով հավատարիմ, օրինապահ և շինարար քաղաքացիները այդ երկրների, իրենց նպաստը բերելով տվյալ երկրների տնտեսական, մշակութային կյանքի առաջընթացին:

Հատկապես չափազանց հուպիչ էր Մեզ համար Բուենոս-Այրեսում այն

պահը, երբ այդ քաղաքի քաղաքապետի ներկայությամբ իսկ, ինչպես նաև բազմահազար ժողովրդի, նոր անուն տվեցին այն փողոցին, ուր գտնվում են Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և հայկական վարժարաններից երեքը: Այդ փողոցը, որը մինչև այժմ կոչվում էր Ասեվեդո, քաղաքապետարանի հատուկ որոշումով, մեր այցելության առթիվ, ստացավ նոր անուն՝ Արմենիա: Եվ իմ ներկայությամբ տեղի ունեցավ բացման հանդիսությունը: Սքանչելի ճառեր խոսվեցին այդ առթիվ՝ վեր հանելով Հայ եկեղեցու և հայ ժողովրդի դերը Բուենոս-Այրեսի հայոց կյանքում:


Ահա այսպիսի խանդավառ տպավորություններով և հուշերով Մենք վերադարձանք Մայր Աթոռ Փարիզի վրայով, որտեղ նույնպես մի քանի օր մնացինք: Վերադարձանք մի անգամ ևս վերանորոգելով Մեր համույումը, թե իսկապես՝ «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապելու կայ»:


Թող Աստված անսասան պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ սրբություն սրբոցը համայն հայ ազգի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Թող Աստված միշտ խաղաղության և բարօրության մեջ պահպանի մեր վերածնված մայր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Թող միշտ խաղաղության և ծաղկումի՝ մեջ պահի նաև սփյուռքի մեր զավակներին, իրենց աղոթքի տներով, իրենց կրթական հաստատություններով և իրենց մշակութային գործունեությամբ:

Թող Աստված մշտական, տևական ու ամուր խաղաղության մեջ պահի համայն աշխարհը՝ փոխադարձ եղբայրական սեր ու համագործակցության ոգի ներշնչելով բոլոր ժողովուրդներին. ամեն:





ԱՅՑՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ  
ՖԱԴԵՅ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հունիսի 25-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Տ. Սարգսյանին, Երևանում, Կառավարական պալատում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի պարոն նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ պրույց, որին ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ Հրաչիկ Վարդանյանը և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ Անդրանիկ Հասրաթյանն ու Ռաֆիկ Զարգարյանը:

Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահին հալոդդեց սփյուռքի հայրենակարոտ հայ ժողովրդի ողջույններն ու բարեմաղթությունները և պատմեց տպավորություններ Հարավային Ամերիկա կատարած իր ուղևորությունից:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
Տ. ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇՅԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԻՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԳԱՇՅԱՆԻՆ,  
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԻ,  
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ  
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՓԱՐԻԶ

Բարին Աստուած միշտ իր հովանու տակ է պահպանում մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ հաւատարիմ իր պատմական առաքելութեան, մնում է մայր դաստիարակը մեր հաւատաւոր ազգի, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Մենք երջանիկ ենք, որ նաև Ֆրանսիայում, հայոց եկեղեցիները ջէն ու գործօն վիճակում, շարունակում են իրենց հոգեշէն սպասաւորութիւնը և վերջին շրջանում լծուած են իրենց կրօնական համայնքային կեանքը առաւել ամուր հիմքերի վրայ կազմակերպելու աշխատանքին:

Այդ կազմակերպչական գործունէութեան առաջին կարևոր արտայայտութիւնը եղաւ Ձերդ Սրբազնութեան ընտրութիւնը իբրև առաջնորդ հայոց Փարիզի շրջանի, համաձայն այդ շրջանի Կրօնական Ընկերակցութեան կանոնագրութեան տրամադրութեանց:

Սոյն Մեր կոնդակով ուրախ ենք հաստատելու և շնորհաւորելու Ձեր ընտրութիւնը, մաղթելով ի սրտե, որ Տէրը Ձեզ պարզևի եկեղեցանուէր աշխատանքի երկար տարիներ, շինարար բեղուն արդիւնատրումով:

Մենք վստահ ենք, թէ մօտ ապագայում վերակազմակերպչական աշխատանքները ի կատար պիտի ածուեն նաև Լիոնի և Մարսելլի շրջաններում, որով Ֆրանսիայի երեք շրջանները պիտի ունենան իրենց եկեղեցական վարչական կառոյցը, համապատասխան բարեփոխուած կանոնագրութիւնների, ի գլուխ ունենալով իրենց շրջանների վիճակաւոր եպիսկոպոսներին:

Ինչպէս ծանօթ է Ձեզ, Մեր նախատեսումն է, որ Փարիզի, Լիոնի և Մար-

սեյի շրջանների պատգամաւորները կազմեն Ֆրանսիայի թեմական պատգամաւորական ժողովը, որը պէտք է ընտրի ամբողջ Ֆրանսիայի թեմակալ առաջնորդին և թեմական խորհուրդը, համաձայն յատուկ մի կանոնագրութեան նախատեսութեանց, որը պիտի կոչուի «Կանոնագրութիւն Ֆրանսիայի Հայ Առաքելական Եկեղեցու Թեմական Կազմակերպութեան»:

Մենք կարծում ենք, որ սոյն թեմական կազմակերպութեան կառույցը իր վերջնական ձևը կը գտնի առաջիկայ մի տարուայ ընթացքում:

Մինչ այդ լիազօրում ենք Ձերոյ Սրբազնութեանը ժամանակատրապէս վարելու Ֆրանսիայի և Արևմտեան Եւրոպայի եկեղեցական ընթացիկ գործերը, Փարիսի հանգուցեալ հայրապետական պատուիրակի փոխանորդի հանգամանքով, սերտ ու համերաշխ գործակցութեամբ Մարսէյի և Լիոնի վիճակների Գերաշնորհ Տ. Յակոբ և Տ. Նորվան սրբազան եպիսկոպոսների:

Մնում ենք աղօթող, որ Ֆրանսիայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու թեմական կազմակերպութիւնը շուտով կը հաստատուի եկեղեցական կանոնական ամուր հիմքերի վրայ, համաձայն ժողովրդավարական սկզբունքների և կրօնական դասնութեանց վերաբերեալ ձեր երկրի օրէնքների:

Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձերոյ Սրբազնութեանը Մեր գնահատանքը և հայրական սէրը, ինչպէս և Մեր օրհնութիւնները համայն ֆրանսահայ մեր հաւատացեալ վարակներին:


«Եւ արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ և բանի շնորհաց նորա, որ կարողն է շինել և տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան» (Գործք առաք. Ի 32): Ամէն:

*Կապիտէ Լ.*

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 5 Յուլիսի  
1984 Փրկչական ամի,  
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԳ  
ի սայրավանս Սրբոյ Էջմիածնի:  
Հմր. 1271





## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վապգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Հարավային Ամերիկայի հայոց թեմակալ առաջնորդների և եկեղեցական կենտրոնական վարչությանց հրավերներին, ս. թ. ապրիլի 30-ից մինչև հունիսի 1-ը հովվապետական այցելությամբ եղավ հայաշատ գաղութներում՝ Արգենտինայում, Բրազիլիայում և Ուրուգվայում:

Սույն այցելության ընթացքում Նորին Սրբությանը, որպես նրա շքախմբի անդամներ, ուղեկցում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պուլապալյանը և Մայր Աթոռի միաբան Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը՝ գավապանակիր:

Իր ուղևորության օրերին Հայոց Հայրապետը մի քանի ժամով կանգ առավ Ֆրանսիայում, որտեղ ապրիլի 29-ին Ալֆորվիլ քաղաքում նախագահեց 1915 թվականի ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված հուշարձանի բացման հանդիսավոր արարողությանը:

Իր այցելած երկրներում Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունվեց իբրև պետական հյուր և պաշտոնական հանդիպումներ ունեցավ հանրապետությանց նախագահների, մինիստրների, նահանգապետների և պետական, քաղաքային ու կրոնական իշխանությանց բարձրաստիճան անձնավորությունների հետ՝ ամենուրեք արժանանալով բարձր պատիվների և հարգալից ընդունելությանց:

Հարավային Ամերիկայի հայոց թեմական իշխանությանց կողմից նախօրոք կազմված ծրագրերի համաձայն, Հայ եկեղեցու Գահակալը հաջորդաբար այցելեց Բուենոս-Այրեսի, Մոնտեվիդեոյի, Կորդոբայի, Սան-Պաուլոյի, Օվասկոյի և Ռիո դե Ժանեյրոյի հայոց եկեղեցական համայնքներ, որտեղ տեղի ունեցան հայրապետական հանդիսավոր պատարագներ բազմահազար հայ հավատացյալների ներկայությամբ: Հիշյալ բոլոր քաղաքներում Վեհափառ Հայրապետը ներկա եղավ և նախագահեց տեղի հայկական համայնքների կրթական, բարեգործական, մշակութային վանական կազմակերպությունների, ինչպես նաև ազգային այլ հաստատությունների ու միությունների կողմից իր պատվին կազմակերպված հանդիսություններին՝ ամենուրեք և ամեն առթիվ իր հոգևոր պավակներին բաշխելով իր հայրական ու հայրապետական օրհնությունները:

Իր ուղևորության ընթացքում Հայոց Հայրապետը հանդիպումներ ու պրույցներ ունեցավ նաև օտար բարձրաստիճան հոգևորականների հետ էկումենիկ ոգով:

Հայ Եկեղեցու Գահակալի՝ Լատինական Ամերիկա կատարած այցի առթիվ տեղական մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը կազմակերպեցին մամուլ ասուլիսներ և հարցազրույցներ Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

Դեպի Մայր Աթոռ իր վերադարձի ճանապարհին Վեհափառ Հայրապետը հունիսի 2—16-ը մնաց Փարիզում: Այստեղ հունիսի 4-ին Նորին Սրբությունը այցելեց Փարիզի քաղաքապետարան, որտեղ տեղի ունեցած պաշտոնական ընդունելության ընթացքում փոխանակվեցին ճառեր Փարիզի քաղաքագլուխ Ժակ Շիրակի և Հայոց Հայրապետի միջև:

Նորին Սրբությունը Փարիզի հայոց Մայր եկեղեցում հանդիպում ունեցավ ֆրանսահայ հոգևորականության, Փարիզի հայոց կրոնական Ընկերակցության և եկեղեցական վարչությանց անդամների հետ: Հանդիպման ընթացքում քննության առնվեցին ֆրանսահայ թեմին վերաբերող մի շարք կարևոր հարցեր:

Փարիզում գտնվելու օրերին Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպումներ և անձնական տեսակցություններ ունեցավ նաև Մեծի Տանն Կիլիկիո Ս. Տ. Գարեգին Բ կաթողիկոսի հետ: Կարծիքներ փոխանակվեցին Հայ Եկեղեցու ներքին միության վերականգնման և եկեղեցական ու ազգային այլ հարցերի շուրջ: Այս առթիվ կազմվեց և հրապարակվեց համատեղ հաղորդագրություն:


Հունիսի 16-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Մոսկվա, իսկ 19-ին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Հայոց Հայրապետի հովվապետական սույն օրհնաբեր այցելությունը Հայրավային Ամերիկա՝ նոր խանդավառություն, նոր շունչ ու ոգի հաղորդեց այդ շրջանի հայությանը՝ ջերմացնելով նրանց կրոնական ու հայրենասիրական զգացումները, ամրապնդելով նրանց հոգևոր կապը մայր հայրենիքի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ և դրանով իսկ նպաստելով հայապահպանման սրբական գործին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

Ս. Էջմիածին,  
26 հունիս 1984 թ.





## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նախապես կայացած համաձայնության վրա, 1984 թ. հունիսի 13-ին, 14-ին և 15-ին Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս և Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Գարեգին Բ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո եղբայրական անձնական հանդիպումներ ունեցան Փարիզի մեջ:

Վեհափառ Հայրապետները ունեցան մտերմական զրույցներ մեր Եկեղեցին հուզող հարցերուն շուրջ և իրենց մտածումներու փոխանակման լույսին տակ եկան այն եզրակացության, որ անհրաժեշտ է որ հառաջիկային տեղի ունենան նման հանդիպումներ, ջարտնակվին բանակցությունները երկու Կաթողիկոսական Աթոռներու միջև և հարթվին գոյություն ունեցող տարակարծությունները, որպեսզի առավել ևս ամրանա Հայաստանյայց Եկեղեցվո միությունը և առավել արդյունավորությամբ պսակվի անոր ազգային-եկեղեցական սպասավորությունը:

Եղբայրական հանդիպումի ավարտին, Վեհափառ Հայրապետները սիրո և հայրախնամ հոգածության զգացումներով կողջունեն հայ ժողովուրդի բոլոր զավակները ի Մայր Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Կաղոթեն որ Բարձրության Աստված զորացնե հայ ժողովուրդը ի խնամա մարդասիրության յուրո:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎՐԴ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Քարտուղար

Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո  
կաթողիկոսի

ԱՍՈՂԻԿ ԱԲՂ. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ


Քարտուղար

Վազգեն Ա Ամենայն Հայոց  
կաթողիկոսի

Փարիզ,

15 հունիս 1984 թ.





## ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ

Սույն թվականի հունիսի 27-ին, չորեքշաբթի օրը, Մայր Աթոռ ժամանեց ԱՄՆ-ի հայոց արևելյան և արևմտյան թեմերի պատվիրակությունը՝ գլխավորությամբ արևելյան թեմի առաջնորդ Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի և արևմտյան թեմի առաջնորդ Ս. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանի:

Պատվիրակության կազմում էին Կանադայի հայոց առաջնորդական փոխանորդ Ս. Վազգեն ծայրագույն վարդապետ Քեջիշյանը, Բոստոնի հայոց Ս. Երրորդության եկեղեցու հոգևոր հովիվ և ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի թեմական խորհրդի ատենապետ Ս. Մամբրե ավագ քահանա Գուգույանը, փոխատենապետ պրն. Ջավեն Գասպարյանը և թեմական խորհրդի անդամ, դատավոր պրն. Վինսենտ Կյուրադյանը:

Նույն օրը Վեհարանում պատվիրակությանը ընդունեց և բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը:

Հունիսի 28—30 օրերին Վեհարանի ընդունելությանը սրահում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ խորհրդակցական ժողով պատվիրակության անդամների և Մայր Աթոռի ներկայացուցիչների միջև: Մայր Աթոռից խորհրդակցությանը մասնակցում էին Գերագույն Հոգևոր

խորհրդի ատենապետ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը և Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես եպիսկոպոս Պոպապայանը:


Հաջորդական երեք նիստերի ընթացքում քննության առնվեցին Միացյալ Նահանգներում եկեղեցական միության վերականգնման, Կանադայի հայոց թեմի կազմակերպման և Հայ եկեղեցու ներքին կյանքի վերաբերյալ մի շարք կարևոր հարցեր: Վերջում, քննարկված հարցերի վերաբերյալ Վեհափառ Հայրապետը Իր հորդորները և թելադրությունները ներկայացրեց առաջնորդ սրբապան հայրերին:

Հայաստանում գտնվելու օրերին Մայր Աթոռի հյուրերն այցելեցին Սևան, Ս. Գեղարդի և Խորվիրապի վանքեր, Լենինականի Սուրբ Աստվածածին եկեղեցի և հանրապետության այլ տեսարժան վայրեր:


Հուլիսի 3-ին, երեքշաբթի օրը, Վեհարանի սեղանատանը Ամենայն Հայոց կաթողիկոսը հյուրերի պատվին տվեց ողջերթի ճաշկերույթ:

Հուլիսի 5-ին և 6-ին պատվիրակության անդամները հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին և Ս. Էջմիածնին ու մեկնեցին լավագույն տպավորություններով:





ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ  
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԵՐԻ ՊԱՏՎՈՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՆԴԱՄՆԵՐՈՎ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ



## ՀԱՎԱՔՈՒՅԹ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Սույն թվականի հունիսի 27-ին Մայր Աթոռի հոգևոր ձեմարանի հանդիսությանը դահլիճում տեղի է ունենում հավաքույթ Վեհափառ Հայրապետի՝ Լատինական Ամերիկա՝ Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ և ապա Ֆրանսիա ուղևորության առիթով:

Հավաքույթին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հայ Եկեղեցու ներքին թեմերի թեմակալ առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնախումբը, Մայրավանքի պաշտոնեությունը, հոգեվոր ձեմարանի դասախոսական կապմը, Էջմիածին քաղաքի, Գեղարդա և Խորվիրապի վանքերի վանահայրերը, Արարատյան թեմի թեմական խորհրդի և եկեղեցական վարչությունների անդամները և այլ հյուրեր:

Հավաքույթին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տե-

ղակալներ Անդրանիկ Հասրաթյանը և Ռ. Զարգարյանը:


Հավաքույթը բաց է անում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի ուղևորության մանրամասն նկարագրությունն է տալիս Հայոց Հայրապետի ջբախմբի անդամ, գավազանակիր Տ. Ասողիկ արքեպ. Արիստակեսյանը:

Արտասահմանյան ուղևորության ընթացքում Հայոց Հայրապետի պաշտոնական հանդիպումների մասին բովանդակալից խոսքով հանդես է գալիս Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոպապայանը:

Հավաքույթի վերջում Վեհափառ Հայրապետը խոսում է Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Ֆրանսիայի հայ գաղթօջախների եկեղեցական, կրթական և մշակութային կյանքի հարցերի շուրջ:





## ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԴՊՐԱՑ ԴԱՍԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ

Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի դպրաց դասերի միության կենտրոնական խորհրդի նախաձեռնությամբ և Ամենայն Հայոց Հայրապետի բարեհաճ հավանությամբ ու հրավերով սույն թվականի մայիսի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեցին ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի դպրաց դասերի մի խումբ անդամներ՝ հետևելու հատուկ դասընթացների և կատարելագործելու ու խորացնելու իրենց գիտելիքները հայ եկեղեցական երաժշտության, ժամակարգության, հայ ժողովրդի պատմության վերաբերյալ, ինչպես նաև ծանոթանալու Մայր Աթոռում և Մայր Հայրենիքում բարգավաճող կյանքին և հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումներին: Խմբի առաջնորդն էր ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի հայոց Սուրբ Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ Ս. Արսեն քահանա Պարսամյանը:

Մայիսի 18-ին, առավոտյան, Վեհարանում խմբի անդամներին ընդունեց Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը: Նա ջերմ խոսքերով ողջունեց նրանց գալուստը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և հաջողություններ ցանկացավ իրենց հետագա աշխատանքներում:

Հետևյալ օրը, մայիսի 19-ին, ըստ նախօրոք կազմված ծրագրի, Ս. Էջմիածնի հոգեվոր ճեմարանի հարկի տակ սկսվեցին պարապմունքները: Դպրաց դասերի անդամները ամեն օր կանոնավոր կերպով դասախոսություններ էին լսում ուսումնական հետևյալ առարկաներից՝ հայ եկեղեցական երաժշտություն (դասախոս՝ բարեջնորհ Հայկ սարկա-

վազ Ֆրունջյան), հայ ժողովրդական երաժշտություն (դասախոս՝ Ս. Ղևոնդ քահանա Հարությունյան), հայ ժողովրդի պատմություն և Հայաստանի աշխարհագրություն (դասախոս՝ Ս. Արսեն քահանա Պարսամյան):

Բացի ամենօրյա պարապմունքներից, ուսման ծրագրին մաս էին կապմում նաև կազմակերպված այցելությունները Մայր Հայրենիքի պատմական և տեսարժան վայրերը: Անցնող երկու շաբաթվա ընթացքում խմբի անդամները հնարավորություն ունեցան այցելելու Ս. Հովսիսիմե, Ս. Գայանե, Ս. Գեղարդ, Խորվիրապ վանքերը, եղան Գառնիում, Տեղերում, Սաղմոսավանքում, Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում դիտեցին «Անտունի», «Գայանե» բալետները և «Անուշ» օպերան: Ամենուրեք նրանք մեծապես հրճվում, խանդավառվում և հոգեպես մխիթարվում էին վերածնված հայ ժողովրդի աննախընթաց հաջողություններով:

Հունիսի 1-ին Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը Մայր Աթոռի դիվանատանը կրկին հանդիպում ունեցավ խմբի անդամների հետ նրանց մեկնման նախօրյակին: Ս. Արսեն քահանա Պարսամյանը ողջ խմբի անունից խորին շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռի կողմից ցուցաբերված ուշադրության և ջերմ ընդունելության համար՝ խնդրելով իրենց որդիական սիրո և երախտագիտության զգացումները փոխանցել Նորին Սուրբ Օծություն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին, որի հայրական հոգատար վերաբերմունքի շնորհիվ բախտ վիճակվեց իրենց այցելելու Մայր Հայրենիք

և իրագործելու իրենց տարիների իղձն ու երազանքները: Արժանապատիվ տեղ հայրը ավելացրեց նաև, որ խմբի անդամները վերադառնում են տուն քաղցր ու անջնջելի տպավորություններով՝ իմացապես և հոգեպես նպաստավորված սույն շահեկան այցելությունից:

## ՖՐԱՆՍԻԱՅԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՅՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ

Սույն թվականի մայիսի 31-ին, Համբարձման տոնի օրը, Մայր Աթոռ այցելեց Լիոն քաղաքի Սուրբ Իրենեոս Էկումենիկ կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված ֆրանսիացի ուխտավորների մի մեծ խումբ՝ գլխավորությամբ Լիոնի թեմի կաթողիկոսի հոգեվորական հայր Ռընե Օբուայեի և Ֆրանսիայի Վերակազմակերպության հոգևոր հովիվ Ժերար Կադիեի: Խումբը, որը բաղկացած էր Ֆրանսիայի տարբեր շրջանների հռոմեական կաթողիկոս և ավետարանական Եկեղեցիների հավատացյալներից, Էկումենիկ ճանապարհորդություն է կատարում քրիստոնեական տարբեր Եկեղեցիների կենտրոններ՝ նպատակ ունենալով Էկումենիկ շարժմանը գործնական մասնակցություն բերելու միջոցով նպաստել միջեկեղեցական հարաբերությունների ամրապնդմանը:

Առավոտյան ժամը 10-ին, ի բացակայությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի, հյուրերին ընդունեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը և բարի գալուստ մաղթեց նրանց Հայ Եկեղեցու կենտրոն ի Սուրբ Էջմիածին:

Ուխտավորների անունից ողջույնի խոսք ասաց հայր Ռընե Օբուայեն՝ ծանոթացնելով խմբի անդամներին և նշելով, որ իրենց սույն ուղևորության նպատակն է մոտիկից ծանոթանալ Հայ Եկեղեցու և քրիստոնյա հայ ժողովրդի ներկա կյանքին, ինչպես նաև այցելել Հայաստանում գտնվող պատմական սրբավայրերը: Նա ուրախություն հայտնեց, որ Մայր Աթոռ իրենց սույն այցելությունը պուգադիպում է Քրիստոսի Համբարձման տոնին, և իրենց երջանիկ են, որ հնարավորություն են ունենալու Մայր տաճարում մասնակցելու սուրբ պատարագի արարողությանը և հաղորդվելու:

Իր պատասխան խոսքում Տ. Սիոն արքեպիսկոպոսը նշեց, որ ներկա դարաշրջանում Եկեղեցիների մերձեցումն ու նրանց եղբայրական գործակցությունը կարևոր անկյունաքար է քրիստոնեական Եկեղեցիների

Հունիսի 2-ին դարաց դասերի անդամները, տեղ հոր գլխավորությամբ, հրաժեշտ տվեցին Մայր Աթոռին և մեկնեցին իրենց բնակավայրերը՝ հայապահպանման սրբազան գործին առավել եռանդով լծվելու վճռականությամբ:

պատմության մեջ և որ Էկումենիկ շարժումն այդ տեսակետից նշանակալի առաքելություն ունի կատարելիք ոչ միայն եկեղեցական շրջանակներում, այլև դրանցից դուրս՝ ժողովուրդների բարեկամության և աջակցության խաղաղության պահպանման գործում: Իր խոսքի վերջում սրբազան հայրը հաջողություն ցանկացավ միջեկեղեցական հարաբերությունների վարձագմանը նպաստող նրանց սպնիք ջանքերին:


Ընդունելության ավարտին փոխանակվեցին հուշանվերներ:

Այնուհետև ֆրանսիացի ուխտավորներն առաջնորդվեցին Մայր տաճար՝ ներկա լինելու Համբարձման տոնի առթիվ Ավագ խորանի առաջ մատուցվող սուրբ պատարագին: Նրանք խոր հավատով ու երկյուղածությամբ հետևեցին հայոց պատարագի արարողությանը և պատարագիչ հոր ձեռքից ստացան սուրբ հաղորդություն:

Պատարագն ավարտվելուց հետո Մայր Աթոռի հյուրերը մեծ հետաքրքրությամբ ծանոթացան մայրավանքի շրջափակում գտնվող հուշարձաններին: Նրանք այցելեցին Ալեք և Մարի Մանուկյանների անունը կրող նորակառույց Գանձատուն, Մայր տաճարին կից եկեղեցական արվեստի թանգարան, Հին և Նոր Վեհարանների ցուցասրահներ և իրենց անկեղծ հիացմունքն արտահայտեցին հայ ժողովրդի ստեղծագործ տաղանդի նկատմամբ, ժողովուրդ, որ կարողացել է սրբությամբ պահպանել իր կրոնական և ազգային դարավոր ավանդները՝ ժամանակի փոթորիկների միջից դրանք ապահով բերել—հանձնելու համար նոր սերունդներին:

Սույն օրը, երեկոյան, ֆրանսիացի ուխտավորները հոգեպես լիցքավորված, գոհունակ սրտով և ջնդիրակալ պզգույններով մեկնեցին Սուրբ Էջմիածին:

Հետագա օրերին նրանք կուղևորվեն հանրապետության հեռավոր շրջանները՝ ծանոթանալու Սանահնի, Հաղբատի, Օձունի պատմական վանքերին և այլ եկեղեցական հուշարձանների:



## ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 9-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի հոգևոր ձեմարանի հանդիսությանց դահլիճում տեղ ունեցավ հոգևոր ձեմարանի 1983—84 ուսումնական տարվա ամավերջի հանդեսը՝ նախագահությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Ս. Սիոն արքեպ. Մանուկյանի:

Վեհափառ Հայրապետը, դեպի Հարավային Ամերիկա հովվապետական այցելության մեկնած լինելու պատճառով, բացակայում էր Մայր Աթոռից:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, ձեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր:

Սույն հանդիսությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

«Հայր մեր»-ից հետո հնչում է Հայկական ՍՍՀ պետական հիմնը, որին հաջորդում է «ձեմարանի քայերգ» խմբերգը՝ ձեմարանի ուսանողների կատարմամբ:

Հանդիսությունը բաց է անում հոգևոր ձեմարանի փոխտեսուջ Ս. Հակապուն վրդ. Նաջարյանը:

Գեղարվեստական բաժնում ելույթ է ունենում ձեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ հոգևոր ձեմարանի երաժշտության դասախոս Ս. Ղևոնդ քին. Հարությունյանի: Երգչախումբը հանդիսավորությամբ կատա-

րում է «Որք վարդաբեցին», «Էջ Միածինն ի Հօրե» շարականները և մի հատված «Վարինե» օպերետից:

Այնուհետև Արամ Խաչատրյանի «Սուներով պար» ստեղծագործության դաշնամուրային համատեղ կատարումով հանդես են գալիս հոգևոր ձեմարանի ուսուցիչ Թադևոս Ասմարյանը և Ե լսարանի սան Սարգիս Գուտույանը:

Ուսանողության անունից Ե լսարանի սան Գուրգեն սրկ. Մարտիրոսյանը ջնորհակալական իր խոսքում ասում է. «Այսօր մեր հոգեվոր ձեմարանի բազմամյա պատմության մեջ արձանագրվում է մի նոր էջ ևս, որը ամփոփում է 1983—84 ուսումնական տարում կատարված աշխատանքները: Կարելի է ասել, որ այդ աշխատանքները պսակվեցին հաջողությամբ, քանի որ ձեմարանը այս տարի ունեցավ առատ բերք՝ ութ շրջանավարտներ»: Շարունակելով իր խոսքը՝ Գուրգեն սարկավագը նշում է, որ ինչպես ինքը, այնպես էլ իր շրջանավարտ սարկավագ եղբայրները վաղուց էին սպասում այս ուրախ պահին. թեև պահը ուրախալի է, բայց միևնույն ժամանակ տխրություն կա շրջանավարտների սրտերում, քանի որ նրանք բաժանվում են հոգևոր ձեմարանից, բաժանվում կրթական այն ջերմ օջախից, որն այնքան նվիրական ու հարապատ է եղել իրենց հոգուն: Իր և ընկերների անունից ջնորհակալություն հայտնելով հոգևոր ձեմարանի տեսչությանը և

դասախոսական կազմին, Գուրգեն սրկ. Մարտիրոսյանը առանձնահատուկ կերպով նշում է, որ իրենք սրտագին պարտք ունեն իրենց որդիական երախտագիտության խոր պզա-ցումներն արտահայտելու Ամենայն Հայոց Հայրապետին, որը, հակառակ իր բավա-պեաղ վիճակին, երկու տարի դասախոսել է իրենց լսարանում, և իրենք էլ ավելի պա-ցել են Վեհափառ Հայրապետի հայրական խնամքը, հոգատարությունը և սերը դեպի հոգևոր ճեմարանն ու ուսանողությունը: «Մենք՝ ուսանողներս,—նշում է Գուրգեն սարկավազը,—հատկապես ավարտական լը-սարանը, բավմիցս վանապան խնդրանքե-րով և հարցերով անհանգստացնում էինք Վեհափառ Հայրապետին, բայց նա, ինչքան էլ պեղծված լինեք, երբեք չէր դժգոհում և ոչ մի հարցում չէր մերժում մեզ»: Իր խոս-քի վերջում Գուրգեն սարկավազն ասում է. «Այս նվիրական պահին կամենում եմ իմ և ընկերներիս անունից հավաստիացնել, որ մենք Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի համար կլինենք նվիրված սպասավորներ՝ սրբու-թյամբ պահելով այն ամեն ավանդականը, որ մեզ ժառանգեցին մեր նախնիները»:

Գուրգեն սրկ. Մարտիրոսյանի ուղերձից հետո, Ալ. Հարությունյանի «Սասունցիների պարը» ստեղծագործության դաշնամուրային կատարումով հանդես է գալիս հոգևոր ճե-մարանի Գ լսարանի սան Հովակիմ Քիլեջ-յանը:

Հոգևոր ճեմարանի ուսումնա-դաստիարակ-չական աշխատանքների մասին հաշվետու պեկուցմամբ ելույթ է ունենում ճեմարանի տեսուչ Ս. Եվսիկ քին. Պետրոսյանը: Ստորև տպագրում ենք տեսչի պեկուցումը կրճա-տումներով:

«Աստուծո ողորմությամբ հավաքվել ենք այս նվիրական կամարների տակ՝ հոգևոր ճեմարանի 1983—84 ուսումնական տարվա աշխատանքի արդյունքներն ամփոփելու և տարեշրջանը փակելու համար:

Կարծեք դեռ երեկ էր, որ հնչեց տարվա առաջին վանգը, և ճեմարանը թևակոխեց աշխատանքի մի նոր փուլ: Ժամանակը լը-րացավ, բայց գործերը շարունակվելու են:

1983—84 ուսումնական տարին հոգևոր ճեմարանը իր աշխատանքներն սկսեց 44 ուսանողներով: Տարին ավարտեցին 36 ու-սանող: Լսարանների պատկերը հետևյալն է.

Ե լսարան՝ 9 ուսանող.

Դ լսարան՝ 7 ուսանող.

Գ լսարան՝ 7 ուսանող.

Բ լսարան՝ 6 ուսանող.

Ա լսարան՝ 5 ուսանող:

6 ուսանող մեկնել են պիևկորական ծառա-յության, իսկ երկուսը՝ հեռացվել:

Անցնող ուսումնական տարվա սկզբին հոգևոր ճեմարանում կատարվել է մի հիմնա-կան փոփոխություն, դասարանների և լը-սարանների փոխարեն այժմ ճեմարանում գործում են միայն լսարաններ՝ 5-ամյա միա-նվազ ուսուցմամբ: Ներկայումս ճեմարանը ունի հինգ լսարաններ, և ճեմարան կարող են ընդունվել միայն նրանք, ովքեր ունեն միջնակարգ կրթություն:

Անցնող ուսումնական տարում հոգևոր ճեմարանի ուսումնական աշխատանքը պետք է համարել գոհացուցիչ: Ուրախությամբ պետք է նշել նաև, որ ձախողված քննություն-ներ չեն արձանագրվել:

Գերաշնորհ սրբապան հայր, թույլ տվեք ըն-թերցել հոգևոր ճեմարանի ուսման առաջա-վորների անունները և խնդրել Ձերդ Սրբապ-նությանը տալ նրանց տեսչության կողմից սահմանված պարգևները.

Ե լսարան.—4,77 միջինով առաջինն է հանդիսանում Մկրտիչ սրկ. Ներսիսյանը.

4,59 միջինով երկրորդն է հանդիսանում Գուրգեն սրկ. Մարտիրոսյանը:

Դ լսարան.—4,56 միջինով առաջինն է հանդիսանում Սամվել Կճոյանը.

4,32 միջինով երկրորդն է հանդիսանում Հայկ Չուլյանը:

Գ լսարան.—4,66 միջինով առաջինն է հանդիսանում Գևորգ Մկրտչյանը.

4,40 միջինով երկրորդն է հանդիսանում Հովակիմ Քիլեջյանը:

Բ լսարան.—4,55 միջինով առաջինն է հանդիսանում Անդրանիկ Տերտերյանը.

4,23 միջինով և 4,20-ով երկրորդն են հանդիսանում Գառնիկ Կարապետյանը և Վազգեն Բերբերյանը:


Ա լսարան.—4,66 միջինով առաջինն է հանդիսանում Տիգրան Աբեյանը.

4,36 միջինով երկրորդն է հանդիսանում Մուրադ Սողոմոնյանը:

Օրինակելի վարքի համար տեսչությունը պարգևատրում է Ա լսարանի սան Սարգիս Ղանդիյանին»:

Ապա տեսուչ տեր հայրը հրավիրում է հանդիսությանը նախագահող Ս. Միոն արքեպ. Մանուկյանին, որ հանուն Վեհա-փառ Հայրապետի օրհնի ճեմարանի ուսա-նողությանը և բարի խրատականով փակի ուսումնական տարին:

Սրբապան հայրը, դիմելով ներկաներին, ասում է, որ այսօր հոգևոր ճեմարանի հունձ-քի օր է, և ինչպես երկրագործը մշակելով հողը սերմ է ցանում և ամբողջ տարին աշ-խատում այդ հողի վրա՝ առատ բերք ստա-




նալու համար, այնպես էլ հոգևոր ճեմարանի կրթական մշակները տարվա ինն ամիսը կրթելով և դաստիարակելով սաներին՝ այսօր տեսնում են իրենց աշխատանքի պտուղները: Շարունակելով իր խոսքը՝ սրբազան հայրը նշում է այն ուրախալի հանգամանքը, որ այս տարի իրոք հոգևոր ճեմարանի հունձքը առատ էր, քանի որ Մայր Աթոռի հոգևոր հաստատությունը տալիս է ութ սարկավագ-շրջանավարտներ: Եվ այս պարագան ուրախությամբ է լցնում թե՛ Վեհափառ Հայրապետի և թե՛ Մայր Աթոռի միաբանության սրտերը:


Ելույթի վերջում Ս. Սիոն արքեպ. Մանուկյանը ասումը է. «Հանուն Վեհափառ Հայրա-

պետին կշնորհավորեմ հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կապը և ուսանողությունը այս առատ բերքին և հունձքին համար: Մայր Աթոռը ուրախ և հպարտ է հոգևոր ճեմարանով, և երբ Վեհափառ Հայրապետը վերադառնա, սիրով պիտի ընդունի իր հոգևոր զավակները՝ շրջանավարտ սարկավագները, որոնք անոր հայրական խնամքին տակ պիտի պատրաստվին հոգևոր ծառայության»:

Ամսվերջի հանդեսն ավարտվում է սրբազանի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՁՅԱՆ





## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հունիսի 3-ին, կիրակի.—Երկրորդ Ծագ-կապարդ.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Խաչատուր քին. Ֆրանգյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այսօր հրեշտակք ի բարձունս ուրախանան ընդ մարդկան, որ իջեալ ի յերկնից, տան պառետիս աշխարհի» (ջարական) բնաբանով:

\*  
\*  
\*

**Հունիսի 10-ին, կիրակի.—Հոգեգալուստ.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Ս. Արսեն եպս. Բերբերյանը:

Ի ժամ պատարագի պատարագիչ սրբական հայրը քարոզում է Հոգեգալստյան խորհրդի մասին:

\*  
\*  
\*

**Հունիսի 11-ին, երկուշաբթի.—Այսօր հոգեվոր ճեմարանի սաները, առաջնորդությամբ տեսուչ Ս. Եկնիկ քին. Պետրոսյանի, մեկնում են Իջևան՝ երեքօրյա հանգստի:**

\*  
\*  
\*

**Հունիսի 12-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ է այցելում ԱՄՆ-ի Քրիստոնեական Եկեղեցիների Ազգային Խորհրդի պատվիրակությունը՝ գլխավորությամբ Խորհրդի աշխատակից հայր Ջոն Լինդների: Պատվիրակության կազմում էին Հռոմեական Կաթոլիկ, Ասորական, Մեթոդական, Պրեսբիտերական և Եպիսկոպոսական Եկեղեցիների հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ՝ թվով 26 հոգի:**

Պատվիրակությանը, որը Սովետական Միությունում էր գտնվում ԱՄՆ և ՍՍՀՄ Եկեղեցիների փոխհարաբերությունների կոորդինացման ծրագրով, Վեհարանում ընդունեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Ս. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Քրիստոնեական եղբայրական սիրո մըթևոլորտում տեղի ունեցավ ջերմ կրույց Ս. Սիոն արքեպիսկոպոսի և պատվիրակության անդամների միջև:

Պատվիրակությունն այնուհետև այցելեց Մայր տաճար, եղավ նրան կից թանգարանում, նորակառույց «Ալեք և Մարի Մանուկյան գանձատանը», ինչպես նաև Ս. Հռիփսիմե վանքում:

\* \* \*

**Հունիսի 14-ին, հինգշաբթի.**—Այսօր Մայր Աթոռ են այցելում Անգլիայի Քուաքենների խաղաղության ջարժման կազմակերպության մի խումբ անդամներ:

Վեհարանում հյուրերին ընդունում և բարի գալուստ է մաղթում Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես եպս. Պոպապայանը: Սրբապան հոր և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում բարեկամական ջերմ կրոնց՝ էկոմենիկ ոգով:

\* \* \*

**Հունիսի 17-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վար, ս. պատարագ է մատուցում Ս. Ընորիք արեղա Բաղդասարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոչում հավիտյա պատշաճի:

\* \* \*

**Հունիսի 18-ին, երկուշաբթի.**—Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց:

Այսօր Ս. Հռիփսիմե տաճարում ս. պատարագ է մատուցում Ս. Մասիս վրդ. Գալստյանը:

«Հայր մեր»-ից առաջ Ս. Հայկապուն վրդ. Նաջարյանը քարոչում է «Հռիփսիմե մեծ խորհուրդ և անուն ցանկալի, եղեր օրինակ սրբութեան կուսանաց» (շարական) բնաբանով:

\* \* \*

**Հունիսի 19-ին, երեքշաբթի.**—Սրբոց կուսանացն Գայիանեանց:

Այսօր Ս. Գայանե տաճարում ս. պատարագ է մատուցում Ս. Գուրգեն քին. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոչում «Րաբունոյն հրամանալ աներևոյթ ապրմամբ. յարևմտից յարևելս եկեալ հասին. զի լուսով

հրեշտակական վարուք կուսութեան. փարատեցին վխաւար դիւապաշտ մոլորութեանց» (շարական) բնաբանով:

\* \* \*

**Հունիսի 21-ին, հինգշաբթի.**—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանգինեայ եպիսկոպոսին:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ է մատուցում Ս. Ղևոնդ քին. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոչում «Ընորհեցաւ մեզ դեղ կենաց սորին նշխարաց ի ձեռն Ս. Գրիգոր Լուսաւորչին Հայաստանեայց աշխարհի» (շարական) բնաբանով:

\* \* \*

**Հունիսի 22-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագոյն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

\* \* \*

**Հունիսի 23-ին, շաբաթ.**—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եղն ի Վիրապէն:


Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Հովսէփ արեղա Հակոբյանը:


\* \* \*

**Հունիսի 24-ին, կիրակի.**—Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Ս. Հովակ արքեպ. Սանթրոյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոչ է խոսում Վեհափառ Հայրապետը (քարոչը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):





ՇԵՆ ՄԱՀ (ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)

### ԶԱՎԱԿ ՀԱՅՈՒՆ

Զավակ սիրուն  
Ու տարագիր,  
Գուրգուրանքով ես կնայիմ  
Տակավ աճող հասակիդ,  
Տարվան ամբողջ տարածքին:

Զմեռն ըլլա թող քեզ համար  
Պատսպարան.  
Հայ Հոգիի հունտը հավերժ  
Արտուն՝ որ ցանվի քու մեջ  
Հատիկներու պես ցորենի:  
Դուն խնամե՛ գուրգուրանքով  
Չանոնք մտքիդ ու հոգիիդ  
Վկոսներուն հողին ներքև,  
Հեռու ամեն փորձանքներն:


Գարնան՝ թո՛ւյլ տուր  
Հայ Հոգիի հատիկներուն  
Փթթիլ, ծաղկիլ  
Մտքիդ, սրտիդ դաշտին վրա,  
Ու թող մարդերն շուրջդ համայն  
Ծաղկապարդված տեսնեն միայն,  
Գեղեցկությամբը հասակիդ  
Ու նայվածքիդ շնորհներուն,  
Զերթ պատմություն մեր պապերուն:

Հրապույրին հետ ամառվան  
Քու ալ Հոգիդ վեա, հայկական  
Թող առինքնե ջերմորեն  
Աջխարին ամբողջ, ու նորեն  
Ճառագայթներ քու դեմքեն  
Ուժի, գեղի, կորովի,  
Երթան մարդոց սրտերուն,  
Ու սիրեն քեզ—վավակդ հայուն:

Աշնան՝ հովե՛րը թող փչեն...  
Քեզ վախճնել կարող չեն:  
Դուն թներուն վրա բոլոր  
Սորվածներուդ,  
Հոգիիդ մեջ ամուր գրկած  
Հայոց լեզուն,  
Երգ, պար, աղոթք  
Ու պատմություն,  
Իբրև ավանդ պիտի տանիս  
Հորիզոնե հորիզոն, չորս ծագերուն  
Ցրված բոլոր հայերուն,  
Որ կորանան ալ իրարմով  
Ընդելուզված,  
Որ տարածեն ջունջը հայուն,  
Ամրապնդեն հույսը հայուն՝  
Հայ մնալուն, հայ ապրելուն:

3 հունիս 1984 թ.





## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Սույն թվականի հունիսի 3—6 օրերին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախաձեռնությամբ տեղի է ունեցել ժողով՝ նվիրված մարդու իրավունքների պաշտպանությանը: Ժողովին մասնակցել են Բուլղարիայում, Ռումինիայում, Հարավսլավիայում, Սովետական Միությունում գործող Եկեղեցիների շուրջ 20 ներկայացուցիչներ:

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, սույն ժողովին իր մասնակցությունն է բերել նաև Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Ս. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը:


Հունիսի 3-ին, կիրակի օրը, առավոտյան, Սովետական Միությունում գործող Եկեղեցիների ներկայացուցիչները, Ս. Անանիա եպիսկոպոսի առաջնորդությամբ, այցելություն են տվել Սոֆիայի հայոց առաջնորդանիստ եկեղեցի, որտեղ նրանց ընդունել և բարի գալուստ է մաղթել տեղի հայոց հոգևոր հովիվ Ս. Մեսրոպ քահանա Բենիկյանը:

Երեքօրյա ժողովը, որին նախագահել է

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի քարտուղար դոկտոր Թեո Չուն (Շվեյցարիա), ընդունել է մի շարք կարևոր որոշումներ արտասահմանյան որոշ երկրներում մարդու իրավունքների ոտնահարման, սպառնալիքությունների մրցավազքի, ցեղային խտրականության ու ճնշման, կանանց իրավունքների պաշտպանության և այլ հարցերի վերաբերյալ:

Հունիսի 5-ին ժողովի մասնակիցներին ընդունել է Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու պետ, Նորին Սրբություն Ս. Մաքսիմ Պատրիարքը, որը ողջունել է նրանց և իր գոհունակությունը հայտնել ժողովի բարեհաջող ավարտի կապակցությամբ՝ կամենալով հետագա հաջողություններ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի աստվածահաճո աշխատանքներին: Այս առթիվ Նորին Սրբությունը Ս. Անանիա եպիսկոպոսին խնդրել է Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին փոխանցել իր եղբայրական ջերմ ողջույններն ու հաջողության բարեմաղթությունները:





ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ  
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ  
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (1956—1980)\*

ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի վերը հիշատակված եկեղեցիներում իրականացված հիմնական վերաշինության աշխատանքներից, մասնակի վերաշինության և բարեկարգման աշխատանքներ կատարվեցին նաև այլ եկեղեցիներում, գլխավորապես թեմական:

1. Ս. ՄԱՐԻՆԵ եկեղեցին Աշտարակում (13-րդ դար) մեկն է դրանցից: 1976—1977 թվականներին այստեղ որոշ աշխատանքներ իրականացվեցին: Վերատաշելու միջոցով թարմացվեցին պատերի ներսի հարթություններն ու մակերևույթները, վերանորոգվեց ավազ խորանի հատակը և տեղադրվեց նոր սեղան, տեղադրվեց քանդակավարդ նոր դուռ:

Չուգահեռաբար, քաղաքային իշխանությունը հոգ տարավ բնակավայրի կենտրոնում գտնվող այս հուշարձանի շրջապատը բարեկարգելու ուղղությամբ: Վերաշինվեցին եկեղեցու բակն ու ամփոփող պարսպապատերը, ստեղծվեցին դարավանդների երիկապատեր, կառուցվեցին դարպասներ, կատարվեցին ծառատնկումներ:

2. Ս. ՀԱԿՈԲ եկեղեցին (Արտաշատի շրջանի Մրգավան գյուղ), կառուցված 20-րդ դարի սկզբին, թեև պահպանվել էր համեմատաբար լավ վիճակում, այնուհանդերձ, կա-

րիք ուներ որոշ վերանորոգումների: Աշխատանքներն սկսվեցին կտուրի լանջերի և գմբեթի վեղարի թիթեղապատման նորոգումից: Ապա ներսի պատերից, կամարներից, թաղերից ու գմբեթից մաքրվեց ծեփը, քարերը վերատաշելու միջոցով բոլոր հարթություններն ու մակերևույթները թարմացվեցին: Եկեղեցու ներսում և արտաքին նախամուտքում (արևմտյան կողմից) պատրաստվեց բետոնե հատակ և մույախկապատվեց:

Ծրագրվում է հետագայում, համաձայն նախագծի, ավարտել եկեղեցու թերավարտ թողնված զանգակատան կառուցումը:

3. ԿԱՄՈ (ՆՈՐ ԲԱՅԱԶԵԴ) քաղաքի եկեղեցին կառուցվել է 20-րդ դարի սկզբին և պահպանվել համեմատաբար լավ վիճակում: Կարիք կար նորոգելու եկեղեցու կտուրը և առանձին մասերը: 1959—1960 թվականների ընթացքում կապմակերպվեցին հիմնական վերանորոգման աշխատանքներ, որոնք իրականացվեցին քաղաքի շին. վերանորոգման, ապա Մայր Աթոռ շինարարական գրասենյակների միջոցով:

Նախապես նորոգվեցին տանիքի փայտյա մասերը, նորերով փոխարինվեցին վնասված ծպեղները և նրանց վրայի փայտածածկը: Այնուհետև ողջ կտուրը ծածկվեց ցինկապատ թիթեղով, դրվեցին ջրահեռացման նոր խողովակներ: Եկեղեցու ներսում ամբողջապես հեռացվեց պատերի և առաստաղի քայքայված ծեփը, նորից սվաղվեց ու ներկվեց սպիտակ ջրաներկով: Պատերի ստորին մասը 2 մ. բարձրությամբ ներկվեց յուղաներկով: Փոխ-

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1983 թվականի № 8 ԺԱ—ԺԲ-ից և 1984 թվականի № 8 Ա—Ե-ից:

վեցին գմբեթի թմբուկի լուսամուտները, նորոգվեցին դռներն ու լուսամուտները, որոնց հնացած փեղկերը փոխարինվեցին նորերով, ապակեպատվեցին, ներկվեցին ու դրսից ցանցապատվեցին:

Որոշ միջոցներ ձեռք առնվեցին նաև եկեղեցու արևելյան կողմից անցնող ջրանցքից խոնավության ներծծումը կասեցնելու նպատակով:

4. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցում (Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղ) իրականացվեցին փլված թաղակապ առաստաղի և կտուրի վերաշինության աշխատանքները: Տեղադրվեցին նոր լուսամուտներ ու դռներ, պատերը երեսապատվեցին Հոկտեմբերյանի կարմիր տուֆով, պատրաստվեց բետոնյա հատակ և մուկաիկապատվեց, ավագ խորանում տեղադրվեց տուֆակերտ նոր սեղան:

5. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ եկեղեցին (Էջմիածնի քաղաք) նույնպես կարիք ուներ վերանորոգության: Անհրաժեշտ էր նորոգել ու բարեկարգել եկեղեցին, բարեկարգել նրա շրջապատը, որը հրապարակի նկատմամբ ցածրադիր նիշ էր ընդունել: Դրա հետ մեկտեղ, պահանջ էր կցացվում եկեղեցու ծավալաւարածական ուրվագծին առավել ցայտուն տեսք հաղորդել քաղաքի նոր առաջացած վարչա-հասարակական կենտրոնի ընդհանուր համայնապատկերում: Առաջարկվում էր նաև 1832 թ. կառուցված այս եկեղեցին վերակառուցել ու պատկել գմբեթային ծավալով:

Սույն եկեղեցու վերանորոգման աշխատանքները հանձնվեցին ՀՍՍՀ Պետշինի ճարտարապետության և շինարարության գիտա-հետապոստական ինստիտուտի մասնագետներին: 1977—1979 թվականների ընթացքում Մայր Աթոռի շինարարական գրասենյակի միջոցով իրականացվեցին եկեղեցու շրջապատի բարեկարգման միջոցառումներ: Բակի պարագծով կառուցվեց տուֆակերտ ցածր պատ՝ արևմտյան կողմից դարպասով, եկեղեցու շուրջը պատրաստվեցին տուֆով սալարկված մայթեր, մնացած տարածությունը կանաչապատվեց, պատրաստվեցին ծաղկամարգեր:

Որոշ վերաշինական աշխատանքներ կատարվեցին նաև Լենինականի և Ստեփանավանի հետկյալ եկեղեցիներում:

6. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ կամ ՅՈԹ-ՎԵՐՔ եկեղեցին (Լենինականում), որպես Շիրակի թեմի առաջնորդանիստ տաճար, նույնպես կարիք ուներ որոշ նորոգումների ու բարեկարգման: Այս կապակցությամբ 1973 թվականի մարտի 3-ին Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի անդամներ Վ. Հարությունյանը, Ռ. Իսրայելյանը, Գ. Խանջյանը, Բ. Արզումանյանը և Ա. Գալիկյանը մեկ-

նեցին Լենինական և մասնակցությամբ քաղաքապետարանի ներկայացուցիչ Ա. Մաթոս-օղյանի, քաղաքի գլխավոր ճարտարապետ Ռ. Եղոյանի, տեղում ուսումնասիրություն կատարեցին ու մշակեցին վերաշինական աշխատանքների մի ծավալուն ծրագիր, որը նախատեսում է եկեղեցու ներքին ձևավորման նպատակով շինարարական որոշ աշխատանքների իրականացում և եկեղեցու շրջապատի բարեկարգում: Նախագիծ կազմելու համար անհրաժեշտ էր մանրամասնորեն չափագրել եկեղեցին: Այդ աշխատանքը հանձնարարվեց տեղի ճարտարապետներին:

Հետագա տարիներին սակայն կատարվեցին միայն մանր վերանորոգումներ և ներկարարական աշխատանքներ:

7. ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ եկեղեցին անցած դարի վերջում կառուցված պարզ ու անպաճույճ մի շենք էր՝ խիստ կարոտ խնամքի, վերանորոգումների ու բարեկարգման:

1976 թ. Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի Ստեփանավան կատարած այցելությունից հետո, նախաձեռնվեցին վերաշինական միջոցառումներ: 1977—1978 թվականների ընթացքում իրականացվեցին որոշ աշխատանքներ: Վերաշարվեց և նորոգվեց եկեղեցու բազալտյա հատակը, բեմի հատակը և աստիճանները մարմարապատվեցին, բեմում տեղադրվեց տուֆակերտ սեղան: Ներսի պատերը (ներառյալ նաև բեմի) երեսապատվեցին տուֆի սալիկներով: Պատրաստվեցին ու տեղադրվեցին նոր դուռ և լուսամուտներ, եկեղեցին չորս կողմից շրջապատվեց տուֆով սալարկված մայթերով, ներարկման միջոցով ամրացվեց արևմտյան պատը, որը ջրերի ներթափանցման պատճառով նստվածք էր ստացել ու նրա մեջ առաջացել էր վտանգավոր ճեղք:

#### ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ-ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Վեհափառ Հայրապետի շինարարական-վերանորոգչական գործունեության մեջ կարևոր տեղ էր հատկացվել նաև վրահայոց թեմի մի շարք եկեղեցիների վերանորոգմանն ու բարեկարգմանը: Այս ուղղությամբ կատարվեցին հետևյալ աշխատանքները.

1. Ախալցխայի Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ եկեղեցու ներսում կատարվեցին մասնակի վերանորոգություններ: Նոր մայթ կառուցվեց դեպի եկեղեցին տանող ճանապարհին:

2. Ախալքալաքի Ս. ԽԱՉ եկեղեցու ներսում կատարվեցին խիստ անհրաժեշտ մասնակի վերանորոգություններ: Նախատեսվում է մոտ ապագայում լուծել եկեղեցու ջեռուցման հարցը: Ավելի մեծածավալ աշխատանք-

ներ իրականացվեցին տեղական իշխանությունների ջանքերով ու միջոցներով: Եկեղեցու շրջակայքում եղած խարխուլ տները վերացվեցին և նրանց տեղում ստեղծվեցին ծաղկանոցներ:

3. Թբիլիսիի Ս. ԷԶՄԻԱԾԻՆ եկեղեցու ներքին վերանորոգության աշխատանքները կատարվեցին հիմնականում հետապնդելով բարեպարզման նպատակ: Կատարվեց վերնատան նորոգություն և հատակի պարկետապատում: Պարկետապատվեց նաև եկեղեցու արևմտյան մասի հատակը, իսկ սեղանը մարմարապատվեց: Յուղաներկով վերաներկվեցին բոլոր պատերը, մաքրվեցին որմնակարները: Նորովի կապակերպվեց ներսի էլեկտրալուսավորումը (պատերի մեջ ծածկված լարերով), կախվեց բյուրեղապակյա ջահ: Եկեղեցում տեղադրվեցին նոր մոմակալներ, էլեկտրական երգեհոն: Վերանորոգման ենթարկվեց նաև տանիքը, որի բոլոր լանջերը ծածկվեցին ցինկապատ թիթեղով:

4. Թբիլիսիի Ս. ԳԵՎՈՐԳ եկեղեցում, որը հանդիսանում է վրահայոց թեմի առաջնորդանիստ Մայր եկեղեցին, հիմքերից ներծծվող խոնավությունը ժամանակի ընթացքում պակաս վնաս էր պատճառում քայքայելով պատերի ծեփը և նրանց վրայի բարձրարվեստ որմնակարները (դրանցից չորսը պատկանում են մեծատաղանդ նկարիչ Գևորգ Բաշինջադյանի վրձինին): Այդ անցանկալի երեվոյթը կասեցնելու նպատակով, խոնավության ներծծման դեմ կիրառվեցին հիմքերի ջրամեկուսացման անհրաժեշտ միջոցառումներ: Դրա հետ մեկտեղ, խոնավության ներծծումից ապահովվեց նաև կտուրը, որը ամբողջապես վերստին թիթեղապատվեց:

Եկեղեցու ներսում կատարված վերանորոգությունների ընթացքում, պատերի յուղաներկ հին շերտերը մաքրելիս, նրանց տակ հայտնաբերվեցին հայկական ոճին բնորոշ ու հայերեն մակագրություններ ունեցող գեղեցիկ և մեծադիր որմնակարներ: Ավելի փոքր չափի որմնակարներ ի հայտ եկան նաև եկեղեցու մույթերի վերնամասում: Նորահայտ այս որմնակարների նախնական ուսումնասիրությունը մասնագետներին բերեց այն եզրակացության, որ դրանք պատկանում են 18-րդ դարի հանրահայտ հայ նկարիչ Հակոբի որդի Հովնաթան Հովնաթանյանի վրձինին: Ուստի, նկատի ունենալով նորահայտ որմնակարների պատմա-գեղարվեստական մեծ նշանակությունը, հրավիրված մասնագետների միջոցով դրանք մաքրվեցին և վերանորոգվեցին:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին, Նրա թելադրությամբ, վերանորոգչական կարևոր աշխատանքներ կատար-

վեցին Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում: Մարմարապատվեցին ավագ սեղանն ու բեմը, ամրացվեցին եկեղեցու չորս մույթերը, մարմարապատվեցին եկեղեցու ձախակողմյան խորանը, ավանդատունը, եկեղեցում անցկացվեց նոր լուսավորություն, եկեղեցու տանիքը ենթարկվեց հիմնական վերանորոգման և գրմբեթի վրա հաստատվեց երկաթյա մի մեծ խաչ: Եկեղեցու պանգակատան փայտյա հին հենակների փոխարեն դրվեցին երկաթյա հենակներ:

Բարեկարգվեց և սալահատակվեց նաև եկեղեցու շրջապատը: Եկեղեցուց ներս, պատերի վրա տեղադրվեցին Աստվածածնի, ս. Թադևոս, ս. Բարթողիմեոս առաքյալների և ս. Գրիգոր Լուսավորչի յուղաներկ նոր նկարները:

Նույն տարիներին նորոգություններ կատարվեցին նաև Կիրովաբադի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Վերանորոգվեց եկեղեցու ավագ սեղանը, շրջափակում կառուցվեցին երիցատան երեք սենյակներ՝ իրենց բոլոր հարմարություններով, ինչպես նաև ուխտավորական սենյակներ և նոր մատաղատուն:

#### Առաջիկայում կատարվելիք վերանորոգչական աշխատանքների ծրագրեր

Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ, հետագա տարիներին նախատեսվում է շինարարական-վերանորոգչական աշխատանքներ կատարել նաև Հայաստանի հետևյալ եկեղեցիներում.

1. Քասախի բազիլիկայում:
2. Երևանի ս. Հովհաննես եկեղեցում:

#### Նոր շենքերի շինարարություն

Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի շինարարական գործունեության մեջ կարևոր տեղ գրավեց նաև նոր շենքերի կառուցումը թե՛ Մայր Աթոռում և թե՛ նրա շրջապատից դուրս: Վերն արդեն հիշատակել ենք ճարտարապետական փոքր ձևերի, ինչպես օրինակ՝ աղբյուր-հուշարձանների կառուցման մասին, ուստի ստորև հատկապես կանդորառնանք վանական և մշակութային շենքերի շինարարությանը:

#### ա. Գեղարդա վանքի վանատուն

Գեղարդա վանքի հյուրատան շինարարությունը մաս կազմեց վերաշինական այն աշխատանքներին, որոնք այստեղ ծավալվեցին 1960-ական թվականների սկզբից: Վեհափառ

Հայրապետի ծրագրով կարիք էր պահպանում ոչ միայն կարգի բերել եկեղեցական և վանական շենքերը, այլև խարխված հին հյուրատան տեղում կառուցել նորը:

Առաջին քայլերն այդ ուղղությամբ կատարվեցին 1962 թ. օգոստոսին: Վանքի հյուրանոցի նոր շենքի կառուցումը լուրջ և պատասխանատու խնդիր էր: Այդ շենքի հավելումը պետք է կատարվեր պահպանողական, այնպես որ այն լրացներ վանական մյուս շենքերի շարքը, առանց անջատվելու ճարտարապետական կազմավորված միջավայրից ու բնական շրջապատից իր մասշտաբով, հարկերի համաչափությամբ, իր նյութով ու կառուցողական ոճով՝ ներկայացնելով մի ներդաշնակ ամբողջություն գոյություն ունեցող շենքերի ու պարսպապատի հետ:

Այդ մտահոգությունը նկատի առնվեց ու ելակետ հանդիսացավ հյուրատան վերջնական նախագիծը մշակելիս (հեղինակ՝ ճարտարապետ Ա. Գալիկյան): Համաձայն այդ նախագծի, երկհարկանի հյուրատունը տեղադրվեց վանքի շրջափակի հարավ-արևմտյան անկյունում, գլխավոր դարպասից աջ, հին շենքի տեղում: Առաջին հարկը հատկացվելու էր ուխտավորներին, իսկ երկրորդ հարկը ծառայելու էր որպես հյուրանոց ու վանքի միաբնության բնակարաններ: Ենթադրվեց, որ ունենար կենցաղային բոլոր հարմարությունները, օժտված լիներ ջրամատակարարմամբ, կոյուղով, ջեռուցմամբ ու էլեկտրական լուսավորությամբ: Հյուրանոցի շենքի պատերը մեծ խնամքով կառուցվեցին բալախյան անձե քարերով (մասամբ օգտագործվել էին շենքերից մնացածները), իսկ շարվածքը կատարվեց կողքի պարսպապատի շարվածքի հնարավոր նմանությամբ: Ու թիթեղապատվեց: Այդ առթիվ շենքի ներդաշնակ, պատուհաններով դեպի կիրճն ուղղված ճակատի միակ վարդը հանդիսացավ շենքի ձախ թևում, երկրորդ հարկի կախովի փայտաշեն պատշգամբը:

Կառուցումը հաջողությամբ ավարտվեց: Ենթադրվեց, որ նախապես կառուցվեց հարթ, սակայն հետագայում այն դարձվեց երկլանջ ու թիթեղապատվեց: Այդ առթիվ շենքի ներսում, դահլիճի պատին ամրացվեց մարմարյա տախտակ՝ հետևյալ արձանագրությամբ.

«Ի Հայրապետության S. S. Վազգենի Հայոց Կաթողիկոսի կառուցարարական փորձի շնորհիվ 1971 արդեն Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կտակաւն Ներկարարեան ի վայելումն ազգիս հայոց»:

Նույն տարիներին, վերանորոգման աշխատանքներին չուղղնթաց, Գեղարդա վանքում կատարվեց պտղատու այգիների մշակում և

ծառատնկում, ինչպես նաև վանքի ընդհատակյա ջրերի հեռացում՝ եկեղեցական կառույցներն ու վանական շենքերը պահպանելու համար խոնավությունից և ինտագա քայքայումից:

#### բ. «Հայկաշեն» ամառանոց

Վեհափառ Հայրապետը ծրագրել էր միաբնության անդամների ու Հոգևոր ճեմարանի սաների ամառային հանգստի համար մի ամառանոց կառուցել: Երևանից ոչ հեռու, Արագածի հարավային լանջին տեղավորված օղավետ, գեղահայաց ու սառնորակ ջրերով հարուստ Բյուրականը անցյալում ծառայել է որպես հայ կաթողիկոսների ամառանոց: Այստեղ կառուցվելիք ամառանոցի հողամասը, 2,5 հկտ. տարածությամբ, Վեհափառ Հայրապետին տրամադրեց Հայաստանի կառավարությունը Նրա ծննդյան 50-ամյակի առթիվ: Սույն հողամասը գտնվում է գյուղից դուրս, մի բարձրադիր տեղում, որտեղից հոյակապ համայնապատկերներ են բացվում դեպի Արարատյան դաշտն ու այն պսակող լեռան ձյունափայլ գագաթները:

Հայրապետական ամառանոցի շենքի կառուցման նախագիծը ճաշակով և սիրով կազմեց ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը 1968 թ. դեկտեմբերին: Ներկայացված նախագիծն արժանացավ Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի հավանությանը:

Ընդհանուր ճարտարապետի մտահղացմամբ, «Հայկաշեն» ամառանոցը երկհարկանի է՝ աջ թևում վերապաց աշտարակով: Զգված լինելով արևելքից արևմուտք՝ շենքն իր գլխավոր ճակատով ուղղված է դեպի հարավ՝ Արարատյան դաշտի կողմը: Առաջին հարկի աջ թևում գտնվում է նախասրահը հետնամասի սանդղաթափով: Սույն նախասրահից ձախ գտնվում են հինգ. ննջասենյակների մուտքերը, որոնց հաջորդում են երկրորդ նախասենյակը, ընդունելությունների դահլիճը և ճաշասրահը: Բակի կողմից վերջինիս կից է խոհանոցը, իսկ սրան՝ գարձը: Բակի կողմից են նաև սանդղաթները, որոնք տանում են դեպի գետնահարկում տեղավորված կաթսայատունը:

Երկրորդ հարկն ամբողջապես հատկացված է ննջասենյակներին, որոնք օժտված են նախամուտքերով և սանիտարական հանգույցներով: Սրանցից դեպի ձախ ընկած ընդարձակ դահլիճը ծառայում է որպես հանրակացարան: Երկրորդ հարկից (կամարային բացվածքի վրայով) անցում է կատարվում դեպի աշտարակը և նրա վերնամասում տեղավորված մատուռը: Ենթադրվեց, որ կա-

րևոր մասերը՝ ընդունելությունների դահլիճն ու կից ճաշարանը, ձևավորված են ճաշակով, նրանցում ստեղծված է հայաշունչ և մտերմիկ միջավայր:

Ընդհանուր առմամբ պարզ լուծված այս շենքի արտաքին ճարտարապետությունը հրնչում է արտահայտիչ, շնորհիվ իր ծավալատարածական հետաքրքիր հորինվածքի (որի շեշտը գմբեթով պսակված վերձիգ աշտարակի ծավալն է), ձախակողմյան երկհարկ կամարակապ սրահների, ինչպես նաև ճարտարապետական առանձին մանրամասների ներքին մշակման:

Ամառանոցի կառուցումը հաջողությամբ իր ավարտին հասցվեց: Նրա շուրջը բարեկարգվեց, ստեղծվեցին ծաղկանոցներ, տրևկվեցին դեկորատիվ և պտղատու ծառեր: Ողջ հողամասը ցանկապատվեց՝ հյուսիսային կողմից քարե պատով, որտեղ և գտնվում է մուտքի գլխավոր դարպասը: Հայրապետական սույն ամառանոցը կոչվեց «Հայկաշեն»՝ ամերիկահայ ազգային բարերար Հայկ Գալուկյանի անունով: Նա էր հոգացել ամառանոցի շինության ծախսի կարևոր մասը: Բարերարի անունը փորագրվել է աշտարակի արևելյան պատին ամփոփված արծվաքանդակ էմբլեմի տակ: Ենթը կահավորելուց հետո նրա բացումը կատարվեց 1972 թ.:

#### գ. Մատաղատուն

Վեհափառ Հայրապետի առաջարկով, ինչպես նշվեց, Մայր Աթոռի շրջափակում գրտնվող մատաղատունը տեղափոխվեց ս. Գայանեի վանքի բակը, որտեղ կառուցվեց մատաղատան նոր շենք:

Ըստ կազմված նախագծի, մատաղատունը միահարկ կառույց է՝ հատակագծում անկյունաձև: Այն գտնվում է վանքի շրջափակի հյուսիս-արևելյան անկյունում, վանքի երբեմնի գոմանոցի տեղում: Մատաղատունը բաղկացած է երեք հիմնական մասից: Կենտրոնում տեղավորված է բավականաչափ մեծ (100 ք. մ. մակերեսով) սեղանատունը, որի աջ և ձախ կողմերում գտնվում են մեկական սենյակներ: Սեղանատան մուտքը լուծված է կենտրոնական կամարակապ բացվածքի ձևով: Ներսում՝ սեղանատան կենտրոնում տեղավորված վեց պյունների վրա առաստաղի կենտրոնական մասը վեցանկյան ձևով վեր է բարձրանում և պսակվում երդիկավոր կոնաձև ծածկով: Աջակողմյան սենյակը ծառայում է որպես մատաղատուն, ձախակողմյանը՝ որպես ամանեղենի պահեստ: Մատաղատունը

ապահովված է ջրամատակարարման, կոյուղու և էլեկտրական լուսավորության համակարգով, ինչպես նաև աղբահեռացման հարմարություններով:

#### դ. Մայր Աթոռի նոր վանատան կառուցումը

Մայր Աթոռի նոր վանատան շինարարությունը կատարվեց նվիրատվությամբ «Գալուստ Կիլիկյենկյան» հիմնարկության:

Հյուրանոցը գտնվում է ս. Էջմիածնի Մայր տաճարի բակի հարավ-արևելյան կողմում և կազմում է Ղապարապատի շենքի շարունակությունը: Նոր վանատան շենքի նախագծի մշակումը հանձնարարվեց ճարտարապետ Բ. Արզումանյանին, որն ամեն կերպ ձգտեց չխաթարել մայրավանքի պարագծի այս մասի ճարտարապետական լուծումը՝ պահպանելով հարկերի համաչափությունը այն հաշվով, որ հյուրանոցի նոր շենքը ներդաշնակվի Ղապարապատին և ընկալվի որպես նրա բնական շարունակությունը:

Պահպանելով այդ սկզբունքը, նունյիսկ քիվի բարձրությունն ու ձևը, հեղինակը արևելյան ծայրում (որտեղ հյուրանոցի մուտքն է) ճակատի ճարտարապետական մշակումն ընդգծել է եռահարկ ու ճակտոնով պսակված մի ելուստով (ռիդոլիտով), որի կենտրոնում տեղավորված է հարուստ ձևերով բնորոշ շքամուտքը:

Իր բնության համապատասխան է շենքի ներքին ճարտարապետական հորինվածքը: Առաջին հարկում գլխավոր մուտքին հաջորդում է նախաարան, որի հետնամասում գտնվում է սանդղաքատունը: Աջակողմյան միջանցքից մուտքեր են բացվում դեպի նրա երկու կողմերի ննջասենյակները: Երկրորդ և ռիդոլիտային մասի երրորդ հարկերն ամբողջովին հատկացված են ննջասենյակներին՝ բոլորն էլ (թվով 28 ննջասենյակ) օժտված նախամուտքերով, սանիտարական հանգույցներով և համապատասխան կահավորմամբ:

Վանատան շինարարությունն ավարտվեց 1978 թ. աշնանը: Ենթի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի ծննդյան 70-ամյակի առթիվ կազմակերպված հանդիսությունների օրերին: Շքամուտքի վերնամասում փորագրվեց հետևյալ արձանագրությունը.

«Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի Ա Կաթողիկոսի Ամենայն Հայոց կառուցաւ վանատունս արդեամբ Գալուստ Կիլիկյենկեան Հիմնարկութեանն ի Լիլպոն, ՌՆԻԵ»:

## Ե. Ալեքս և Մարի Մանուկյան գանձատան կառուցում

Ստացված նվերների և կատարված գնումների ընդհանուր Մայր Աթոռում հետզհետե ավելանում էին թանգարանային արժեք ունեցող նյութերը: Դրանց պահպանության և ցուցադրման համար Հին և Նոր վեհարանների ցուցասրահները չէին բավարարում, իսկ «Հայրիկյան» թանգարանի շենքը օգտագործվում էր տնտեսական նպատակների համար:

Արդիական պահանջներին բավարարող գանձատան շենք կառուցելու հարցը գործնական ընթացք ստացավ, երբ սփյուռքի հանրաժանությամբ ապագային գործիչ և բարերար, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության ցկյանս նախագահ Ալեքս Մանուկյանը գանձատան կառուցման համար տրամադրեց նյութական անհրաժեշտ միջոցները: Գանձատան շենքը նպատակահարմար համարվեց կառուցել Նոր վեհարանին մոտ, բակի հարավ-արևմտյան անկյունում եղած ազատ հողամասի վրա, այն հաշվով, որ այն ոճական և մասշտաբային ներդաշնակություն կավի Նոր վեհարանի և «Հայրիկյան» թանգարանի շենքերի հետ:

Ճարտարապետ Բ. Արզումանյանին հանձնարարվեց մշակել այս նորակառույցի նախագիծը: Ըստ նախագծի, գանձատան շենքը, չհաշված գետնահարկը, հիմնականում երկհարկանի է: Նրա ձգված ուղղանկյունաձև հատակագիծը  $19,35 \times 62,0$  մ. չափեր ունի: Տեղադրությունը կատարվել է այնպես, որ նրա հարավային և արևմտյան ճակատները մոտ լինեն համապատասխան կողմերի պարսպապատերին՝ ընդամենը 4,5—5 մ. հեռավորությամբ: Շենքի գետնահարկը ամբողջովին հատկացվելու է տնտեսական և տեխնիկական նպատակներին: Այստեղ տեղավորվելու են արհեստական կլիմա ստեղծող սարքավորումները, այստեղով են անցնելու տեխնիկական այլ համակարգերի ցանցերը: Առաջին հարկից գետնահարկ են տանում շենքի երկու ծայրերի սանդղատները:

Շենքի հիմնական հարկերը հատակազգծված են թանգարան-մատենադարանի առանձնահատուկ պահանջներին համապատասխան: Առաջին հարկի նախասրահից ձախ տեղավորված երկու ցուցասրահները (450 ք. մ. ընդհանուր մակերեսով) նախատեսված են հատկացնել ոսկերչական իրերի, ձեռագործների և եկեղեցական սպասքների ցուցադրմանը: Նախասրահից աջ տեղավորված մի քառակուսի տարածություն (140 ք. մ. մակերեսով) ծառայելու է Հայաստանում քրիստոնեության տարածման պատմությունը լուսաբանող նյութերի ցուցադրմանը:

Նախասրահի ետևում, գլխավոր մուտքի առանցքով տեղադրված լայն սանդուղքները տանում են դեպի երկրորդ հարկ: Այստեղ, նախասրահի ուղիղ վերևում, նույն չափի մի սրահ է լինելու՝ խաչվող կամարներով: Չախակողմյան երկու ցուցասրահները (յուրաքանչյուրը 250 ք. մ. մակերեսով) հատկացվելու են գեղանկարչական, քանդակագործական և գորգագործական նմուշների, վարագույրների ու գեղարվեստական այլ կարգի գործվածքների ցուցադրմանը:

Շենքի ձախ (հարավային) թևի երեք հարկերում, որոնց ընդհանուր բարձրությունը հավասար է լինելու ցուցասրահների երկու հարկերի բարձրությանը, տեղավորվելու են թանգարանային տարբեր արհեստանոցները: Շենքի աջ (հյուսիսային) թևում, կրոնական իրերի թանգարանի վրա, տեղավորվելու է մատենադարան-ընթերցարանի երկհարկ մասը, որը իր բարձրությամբ հավասար է լինելու երկրորդ հարկի ցուցասրահի բարձրությանը: Ունենալով ինքնուրույն մուտք առաջին հարկից՝ մատենադարան-ընթերցարանը հաղորդակցվելու է երկրորդ հարկի սրահի հետ:

Շենքի ներքին և արտաքին ճարտարապետական ձևավորումը համահնչուն է նրա բովանդակությանը: Ներսում, հարդարման համար օգտագործվելու են հիմնականում ավանդական շինանյութեր: Հատակները սալարկվելու են մարմարով, պատերն ու կամարները երեսապատվելու են տարբեր տեսակի ու երանգի տուֆերով: Բացի բնական քարերից, ներսի հարդարման համար օգտագործվելու են փայտ, մետաղ, պլաստիկատներ: Կրոնական բովանդակությամբ թեմատիկ բարձրաքանդակներ ծառայելու են որպես գեղարվեստական արտահայտչամիջոցներ:

Երկաթ-բետոնե կմախքային կոնստրուկցիա ունեցող այս շենքի բոլոր ճակատները արտաքուստ տուֆապատ են: Նկատի ունենալով, որ, ըստ տեղադրության, շենքը դիտվելու է միայն գլխավոր (արևելյան) ճակատի կողմից, հիմնական ուղադրություն է դարձվել նրա ճարտարապետական մշակմանը: Հարուստ ձևերով ընդգծված են գլխավոր մուտքը և նրա վերնամասի կամարակապ լուսամուտները: Ձախ կողմից զգալի երկարությամբ ձգվում է կամարակապ սրահը:

Երկրորդ հարկի խոլ պատը պլաստիկորեն աշխուժացնում են համաչափ տեղավորված կամարակապ լուսամուտները: Շենքը պսակող քիվը գլխավոր մուտքի վերնամասում ճակտոնի է վերածվում՝ շեջտելու համար ռիլդիտի առանցքը, ինչպես նաև ընդգծելու երկրորդ հարկի սրահը պսակող կենտրոնադիր զմբեթի տեղը:

Ընթիվ ձախ թևի վերջավորության վրա, քիվից վեր բարձրացող աշտարակը, ծավալա-տարածական հավասարակշռություն ստեղծելով աջ թևի հետ, միևնույն ժամանակ կարող է ծառայել համայնապատկերներ դիտելուն:

Այսպիսին է կառուցվող գանձատան ընդհանուր ճարտարապետական նկարագիրը: Այն, ավարտվելուց հետո, կկապի Վեհափառ Հայրապետի շինարարական բեղմնավոր գործունեության մեջ կարևորագույն նվաճումներից մեկը:

Շինարարության ընթացքում են մշակվելու նաև շենքի ներքին կահավորման ու ցուցադրումների կազմակերպման նախագծերը: Այնքա և Մարի Մանուկյան գանձատան կառուցումը նախատեսված է իր ավարտին հասցնել մինչև 1983 թվականը\*:

### Հայրապետական հյուրանոց (վիլլա) Երևանում

Հայաստանի կառավարությունը 1958 թ., Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակի առթիվ, նրան էր նվիրել Երևանում երկհարկանի մի վիլլա: Հետագայում Մայր Աթոռի շինարարական գրասենյակի միջոցով վիլլայի ներսում փոփոխություններ ու լրացումներ արվեցին, և այդպիսով վիլլան ենթարկվեց ամբողջական նորոգման:

### Գարաժներ

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին Մայր Աթոռը դարձավ տնտեսական լուրջ և կարևոր մի հաստատություն: Շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ էին փոխադրամիջոցներ, իսկ Մայր Աթոռի կարիքների, ուխտավորների և հյուրերի փոխադրման համար՝ նաև մարդատար ավտոմեքենաներ: Այդ նպատակով Մայր Աթոռի շրջափակում, Ղազարապատի շենքի ետևում գտնվող ապատ հողամասում կառուցվեց մի մեծ գարաժ՝ բաղկացած յոթ բոքսից և վերանորոգման մեկ արհեստանոցից: Այստեղ տեղադրվեց նաև բենզինալցման կետ: Կառուցվեց նույնպես մի փոքր գարաժ «Հայրիկյան» թանգարանի արևելյան կողմում:

\* Գանձատան շենքի կառուցումն ու ներքին ձևավորումն ավարտվել է 1982 թվականին: Ընթիվ հանդիսավոր բացումը տեղի է ունեցել նույն թվականի հոկտեմբերի 11-ին Գանձատան բարերարներ Ալեքս և Մարի Մանուկյանների ներկայությամբ (ծանոթ. խմբ.):

### Նախագծեր սփյուռքահայ թեմերի նոր եկեղեցիների շինության վերաբերյալ

Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության տարիներին սփյուռքի ողջ տարածքի վրա նոր թափ ստացավ հայկական նոր եկեղեցիների շինության գործը: Վեհափառ Հայրապետի սրտի ջերմ փափագն էր, որ նոր կառուցվելիք այդ աղոթքի տները լինեն մեր եկեղեցական դասական ճարտարապետության ավանդույթներին և ոճին համապատասխան շինություններ: Այդ ուղղությամբ Նորին Սրբությունը արժեքավոր խորհուրդներ և թելադրություններ էր տալիս սփյուռքի թեմական առաջնորդներին և թեմական կապմակերպություններին:

Մայր Աթոռում ստացվում էին պաշտոնական նամակներ ու գրություններ, որոնցում խնդրանք էր ներկայացվում Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովին, որպեսզի օգնեն նոր եկեղեցիների շինության համար նախագծեր կազմելու կամ իրենց կապմած նախագծերը վերանայելու և մասնագիտական կարծիք հայտնելու համար:

Ստորև ներկայացնում ենք համառոտ տեղեկություններ Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի կողմից շինության առնված այդ նախագծերի մասին:

### 1. Միլանյի հայոց ս. Քառասուն Մանկանց եկեղեցու շինության նախագիծը

Սա առաջին նախագիծն էր, որ մշակվեց Մայր Աթոռի աջակցությամբ: Այս եկեղեցու նախագծի մշակումը հանձնարարվեց ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանին: Հեղինակը հմտորեն օգտագործելով հայկական եկեղեցական ճարտարապետության ավանդույթները՝ կարողացել է նորովի մեկնաբանել դրանք, հորինելով արդիական նկարագիր ունեցող եկեղեցական մի շենք: Նախագիծը որոշ փոփոխություններով իրականացվել է:

Միլանյի ս. Քառասուն Մանկանց եկեղեցին կառուցվել է արգենտինահայ Հովհաննես և Սարգիս Դիարեքիդյան եղբայրների նվիրատվությամբ:

### 2. Մոնտեվիդեոյի (Ուրուգվայ) հայոց եկեղեցու նախագիծը

1960 թ. Վեհափառ Հայրապետի դեպի Հարավային Ամերիկա կատարած ուղևորության ժամանակ Մոնտեվիդեոյի հայկական համայնքի ներկայացուցիչները խնդրել էին Նրան կարծիք հայտնել նոր կառուցվելիք հայկական եկեղեցու նախագծի մասին, որը

կապմե էր տեղացի մի ճարտարապետ: Վեհափառ Հայրապետը նպատակահարմար էր համարել նախագիծը Մայր Աթոռ բերել: 1960 թ. հոկտեմբերի 13-ին Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարված ճարտարապետների հանձնաժողովը քննության առավ նախագիծը և անհրաժեշտ համարեց այն մասնակի վերամշակման ենթարկել հայկական եկեղեցական ճարտարապետության ավանդույթներին համապատասխան՝ անփոփոխ պահելով ընդհանուր չափերը, հատակագծային լուծումը ու տարածական ձևերը:

Սույն աշխատանքները կատարեցին ճարտարապետներ Ռ. Իսրայելյանը և Վ. Հարությունյանը:

### 3. Նյու-Յորքի և Վարդան եկեղեցու նախագիծը

Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդարանը որոշել էր Նյու-Յորքի կենտրոնում ձեռք բերված հողամասի վրա պատշաճ ճարտարապետությամբ ու հայաոճ մի եկեղեցի կառուցել:

Եկեղեցու նախագիծը հայրենի ճարտարապետների միջոցով մշակելու մասին թեմի ցանկության ընդառաջելով՝ Վեհափառ Հայրապետը հարմար գտավ ճարտարապետ Ռ. Իսրայելյանին հանձնարարել հիմնականում այդ դժվարին ու պատասխանատու պատվերի կատարումը:

Տաղանդաշատ ճարտարապետը Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռին առնթեր ճարտարապետների հանձնաժողովին ներկայացրեց նախագծերի վեց տարբերակ: ճարտարապետների հանձնաժողովի մի քանի անդամների ու հայրենի արվեստագետների աջակցությամբ գլխի բերվեց Նյու-Յորքի Մայր եկեղեցու կառուցման նախագծի գործը, որը կատարվեց հայրենասիրաբար, եռանդով ու նվիրումով:

Թվում էր, թե եկեղեցու շենքի և նրա քանդակների նախագիծը պատրաստող հեղինակները, ըստ պայմանավորվածության, կհրավիրվեն Նյու-Յորք և մասնակից կդառնան նաև կառուցմանը: Սակայն դրա փոխարեն տաճարի շինարարության հանձնախումբը նախագծի հետագա բախտը վստահեց այլ մասնագետների, որոնք որոշ փոփոխություններ մտցնելով նրանցում (ճարտարապետ Էդվարդ Ութուջյան) և կապմելով աշխատանքային գծագրերը ու հաշվարկելով կոնստրուկցիաները (տեղի մասնագետների միջոցով)՝ ավարտին հասցրին եկեղեցու շինարարությունը:

Օծման հանդիսավոր արարողությունը Վեհափառ Հայրապետը կատարեց 1968 թվականի ապրիլի 28-ին:

### Ստամբուլի եկեղեցու նախագիծը

Ստամբուլի հայկական համայնքը նախաձեռնելով մի նոր եկեղեցու կառուցման աշխատանքը, համաքաղաքացի ճարտարապետ Պետրոս Չոբյանին էր պատվիրել կապմել նախագիծ, որով շինարարությունն արդեն սկսված էր: Ցանկանալով ունենալ հայաոճ մի եկեղեցի՝ նախագիծն ուղարկվեց Մայր Աթոռ և Էջմիածին, Վեհափառ Հայրապետին, որպեսզի Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը այն քննության առնի ու հնարավոր բարեփոխությունների ուղղությամբ իր առաջարկներն անի:

Հանձնաժողովն իր 1962 թ. փետրվարի 7-ի նիստում ճարտարապետներ Ռ. Իսրայելյանին և Վ. Հարությունյանին հանձնարարեց ծանոթանալ նախագծին: Նախագիծը, բարեփոխման ենթարկվելուց հետո, ուղարկվեց Ստամբուլ:


### Վիեննայի և Հռիփսիմե եկեղեցու կառուցման նախագիծը

Վիեննայի եկեղեցական համայնքը, նախագահությամբ պ. Սարգիս Կարապետյանի, նպատակադրվել էր Ավստրիայի մայրաքաղաքում մի եկեղեցի կառուցել՝ դրա համար օգտագործելով լոնդոնաբնակ տիկ. Հռիփսիմե Հալաճյանի (ամուսնու ապգանունով՝ Ռոյ Թրիկի) նվիրատվությունը:

Երբ կատարվում էր եկեղեցու հիմնարկեքը, այդ օրերին Վիեննայում էր գտնվում սովետական ճարտարապետների տուրիստական խումբը և նրա կապմում Երևանի գլխավոր ճարտարապետ Էդվարդ Սարապյանը, որը, ընդառաջելով իրեն արված առաջարկին, սիրահոժար հանձն է առնում եկեղեցու նախագծի մշակումը և՛ այն կատարում մասնագիտական հմտությամբ ու պատվով: Նորովի մեկնաբանված եկեղեցական այս շենքը, շնորհիվ կիրառված ճարտարապետական մանրամասների (քիվերի, գոտիների, դռան և լուսամուտների պսակների, կամարային բացվածքների, քանաշտարակի ձևի և այլն), ունի հայ ճարտարապետության ավանդույթներից սերված ազգային նկարագիր:

Ճարտարապետ Էդվարդ Սարապյանի մշակած նախագիծը ուղարկվեց Մայր Աթոռ, Վեհափառ Հայրապետին և ճարտարապետների հանձնաժողովին ի հաստատում: Շինարարությունն ավարտվելուց հետո եկեղեցու հանդիսավոր օծումը՝ ձեռամբ Ամենայն Հայոց Վաչգեն Ա կաթողիկոսի ու մասնակցությամբ Կ. Պոլսի հայոց պատրիարք տ. Ընդրիք Գալստյանի, տեղի ունեցավ 1968 թվականի ապրիլի 21-ին:

(Շարունակելի)



Ա. Վ. ԿԱՐԵԿ

## ՔՐԻՍՏՈՍԻ ՅՈԹ ԽՈՍՔԵՐԸ ԳՈՂԳՈԹԱՅՈՒՄ

### ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՍՔԸ ԳՈՂԳՈԹԱՅՈՒՄ

«Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն» (Ղուկ. ԻԳ 34): Այն ամենը, ինչ աշխարհում կատարվում է, մարդկանց վրա ունենում է տարբեր ազդեցություն: Միևնույն իրադարձությունը տարբեր ձևով է անդրադառնում մարդկանց մտքերում և սրտերում: Չինվորները, փարիսեցիներն ու դպիրները, Գողգոթայում ներկա եղող Քրիստոսի բարեկամների խումբը, Քրիստոսի չարչարանքներն ու մահը ընկալեցին տարբեր ձևով: Թող Տերն օգնի մեզ ճիշտ հասկանալու այն ամենը, ինչ տեղի է ունեցել Գողգոթայում, և թող Ս. Հոգին առավել բացահայտի մեզ Քրիստոսի յոթ խոսքերի իմաստը՝ արտասանված խաչի վրա:

Երբ մենք կանգնած ենք Գողգոթայի խաչի պատվանդանի մոտ, խաչյալ Փրկչին տեսնում ենք երկու կողմից՝ արտաքին և ներքին: Արտաքին կողմը խաչյալ Քրիստոսն է, որի վերքերից արյան ջիթեր են հոսում... Իսկ Գողգոթայի ներքին կողմը... խաչյալ Քրիստոսի մտքերն են, նրա զգացմունքները:

Այդ դեպքում ինչպե՞ս կարող ենք հասու լինել խաչյալ Քրիստոսի մտքերին ու զգացմունքներին: Այն խոսքերը, որ նա արտասանել է խաչի վրայից, նրա սրտի, մտքերի

և զգացմունքների բացահայտումն են: Ահա թե ինչու Գողգոթայում խաչի վրայից արտասանված յոթ խոսքերից ամեն մեկը մի թանկարժեք աղանդ է:

Քրիստոսի առաջին խոսքը աղոթք է: Ինչպիսի՞ դաս կա նրանում իր հետևորդների համար: Նախ աղոթք՝ մեր վշտերի, մեր տառապանքների, մեր Գեթսեմանիների և Գողգոթաների մեջ:

Գողգոթայի պահին ամեն ինչ այնպես խավարով էր պատած, որ ամեն ինչ կարծես երերվում էր ու օրորվում... Սակայն կար մի ամուր բան, հավիտենական ու անդավաճան. դա Աստված էր, երկնավոր Հայրը և Արարիչը երկրի: Միայն նա էր փայլում Գողգոթայի խավարում: Քրիստոսի աչքերը տեսնում էին նրան այդ խավարում, և նրա ջրթունքներից լսվում էր՝ «Հայր, ներիր»: Ո՛ւմ բոլորին, ովքեր անպատվել էին իրեն: Ե՛վ Հուդային, որ դավաճանել էր իրեն, և՛ սինեդրիոնի անդամներին, որոնք ծաղրում էին իրեն, և՛ իրեն հայիոյող Գողգոթայի ամբոխին, և՛ զինվորներին, որ խաչին էին գամել իրեն: Քրիստոսի պատասխանը այս բոլոր վիրավորանքների դիմաց մի աղոթք էր՝ «Հայր, ներիր նրանց»:

Քրիստոս իր Լեռան քարոզում ասել է. «Միրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարություն արեք ձեզ ատող-

ներին և աղոթեցե՛ք նրանց համար, որ չար-  
չարում են ձեզ և հալածում» (Մատթ. Ե 44):  
Քրիստոսի Լեռան քարույի նշանավոր այս  
խոսքերն արտասանելը դյուրին է, բայց որ-  
քա՞ն դժվար է դրանք մեր կյանքում կիրա-  
ռելը: Սակայն մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս,  
ապրել է այնպես, ինչպես ուսուցանել է:  
Նրա ողջ կյանքն ու վարդապետությունը եղել  
են ամբողջական մի ներդաշնակություն: Խա-  
չի վրա նրա առաջին խոսքը դրա ապա-  
ցույցն է:

Աստված սիրեց աշխարհը, մարդկությունը  
համայն՝ թշնամանքով լցված կամ անտար-  
բեր դեպի Արարիչը: Խաչյալ Քրիստոսի  
գլխավերևում Պիղատոսի կախած գրության  
կողքին կարելի էր դնել ևս երեք բառ՝  
«Աստված սեր է»:

«Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն,  
թե ինչ են անում»: Քրիստոսին ծաղրողները  
մի՞թե չգիտեին, թե ինչ են անում: Հուդան  
Քրիստոսին մատնելիս մի՞թե չգիտեր, թե ինչ  
է անում: Սինեդրիոնի անդամներն էլ Քրիս-  
տոսին դեպի Պոնտացի Պիղատոսի ատյանը  
առաջնորդելիս, չգիտեի՞ն, թե ինչ են անում:  
Իհարկե, Քրիստոսի թշնամիների մոտ միա-  
տեսակ չէր իրենց արածի գիտակցումն ու  
անգիտությունը: Պոնտացի Պիղատոսն ու  
նրա անխոս պինդորները նվազ բան գիտեին,  
քան քահանայապետներն ու քահանաները,  
փարիսեցիներն ու դպիրները՝ հրեա ժողովրդի  
այդ առաջնորդները: Մարդիկ մինչև Քրիս-  
տոսին չեն հավատում, գտնվում են հոգևոր  
կուրության և անգիտության մեջ: Ահա թե  
ինչու Պետրոս առաքյալը Հոգեգալստյան  
օրը հրեաներին ասում էր. «Գիտեմ, որ ան-  
գիտությամբ արեցիք դուք, ինչպես որ ձեր  
իշխանավորները» (Գործք Բ 17): Իսկ Պե-  
ղոս առաքյալը, որ ժամանակին Քրիստոսին  
թշնամի էր, Ա Տիմ. Ա գլխի 13-րդ համարում,  
խոսելով իր մասին, գրում է. «Ինձ, որ նա-  
խօրոք հայիոյիչ էի և հալածիչ և անարգող.  
բայց ես ողորմություն գտա, որովհետև այն  
անում էի անգիտության և անհավատու-  
թյան մեջ»:

Խաչյալ Քրիստոսի աղոթքը, ներելու իր  
թշնամիներին, ոչ միայն վերաբերում է նը-  
րանց, որոնք շրջապատել էին նրան Գողգո-  
թայում, այլև անխտիր բոլորին, ովքեր «խոր-  
հորդով մի գործն չարութեան» (Կող. Ա  
21) հանդիսանում են նրա թշնամիները:  
Ահա թե ինչու, երբ և ուր ուզում է լինի,  
Գողգոթայում Քրիստոսի արտասանած ա-  
ղոթքով Աստուծո մոտ մեղավոր ճանաչված-  
ներ ներում են ստանում:

Քրիստոսի թշնամիների ապաշխարությունն  
ու ներումը սկսվել է դեռևս Գողգոթայով:  
Ներում ստացավ ապաշխարած ավազակը:

Գողգոթայում ներում ստացավ Աստուծո  
փառաբանած հարյուրապետը: Կասկած չկա,  
Գողգոթայում ներում ստացան նաև բոլոր  
նրանք, ովքեր դառնորեն ծեծում էին իրենց  
կուրծքը (Ղուկ. ԻԳ 49): Մենք տարբեր  
վայրերում ենք դիմում Տիրոջը, սակայն  
Քրիստոսի հետ մեր հաշտությունը տեղի է  
ունենում մեկ և նույն վայրում՝ Գողգոթա-  
յում, Քրիստոսի խաչի պատվանդանի մոտ,  
որտեղ գտնվում է մեղք և անմաքրություն  
սրբող հրաշագործ «Աղբյուրը» (Չաք. ԺԳ  
1): Ծանոթ ենք, արդյոք, կենդանարար  
«ջուր» ունեցող այդ բացառիկ Աղբյուրին,  
որը Գողգոթայում մահացած Քրիստոսի ար-  
յունն է: Թող մեզանից որևէ մեկի համար  
«չորացած» չլինի Գողգոթայում թափված  
Քրիստոսի այդ արյունը: Մեր բոլորի հա-  
մար թող այն մնա հավիտենական փրկու-  
թյան ու սրբացումի կենսաբար Աղբյուր:

#### ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՍՔԸ ԳՈՂԳՈԹԱՅՈՒՄ

«Ամեն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ի  
դրախտում» (Ղուկ. ԻԳ 43): Մեր առջև կա  
զարմանալի մի պատկեր. Քրիստոս երկու  
ավազակների միջև: Ինչպե՞ս հայտնվեց նա  
այդ ոճրագործների մեջ: Ոմանք պիտի ասեն՝  
Պիղատոսի կարգադրությամբ, ուրիշներ, թե՛  
հրեա մեծամեծների խնդրանքն էր, իսկ ո-  
մանք էլ պիտի ասեն՝ պինդորների նախա-  
ձեռնությունն էր: Իհարկե, դա մարդկանց  
չարությունն էր, նրանց ձգտումը, ինչքան  
հնարավոր է, Քրիստոսին գցելու աչքից:  
Նրան խաչեցին մեջտեղի խաչի վրա: Ճիշտ  
է, այդ այդպես է, սակայն մարդկանց ցան-  
կությունից այն կողմ, անկասկած, կար նաև  
Աստուծո նախասահմանումը:

Երկու ավազակների միջև խաչված Քրիս-  
տոսի հետ կապված են մի քանի շատ ար-  
ժեքավոր մտքեր: Քրիստոսի երկրային կյան-  
քըն ամբողջ անցել էր մեծ մեղսագործների  
մեջ, որոնց փրկելու ծարավն ուներ նա և  
որոնց ներկայանում էր իր երկնային լույսով:  
Եվ այդ իսկ պատճառով բնական է, որ նա,  
ով կործանվող հոգիներին այդպես մոտ էր  
եղել, Գողգոթայում էլ գտնվեց երկու մեծ  
մեղսագործների միջև:

Քրիստոսի մեկ և մյուս կողմում խաչված  
ավազակները երկու տեսակ մեղավորների  
ներկայացուցիչներ են՝ ապաշխարող և չա-  
պաշխարող: Եվ այդ երկու տեսակ մեղավոր-  
ները վերջին դատաստանի օրն էլ լինելու են  
Քրիստոսի աջ և ձախ կողմերում: Մատթեո-  
սի ավետարանում կարդում ենք. «Այն ժա-  
մանակ թագավորը պիտի ասի նրանց, որ իր  
աջին են, Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ»

(Մատթ. ԻԵ 34): «Այն ժամանակ նա պիտի ապի նրանց, որ իր ձախին են. Անիծյալներ, գնացե՛ք ինձից» (Մատթ. ԻԵ 41): Քրիստոսի այս խոսքերը հիմնապես խորհրդածելու առիթ են տալիս, քանզի ապաշխարած ավազակը Քրիստոսի աջ կողմում էր խաչված, իսկ չապաշխարածը՝ նրա ձախ կողմում:

Սկզբում երկու ավազակներն էլ հայիոյում էին Քրիստոսին: Նրանցից մեկը հետո «ծնվեց ի վերուստ» և դարձավ նոր արարած Քրիստոսով: Երկու ավազակներից մեկի այս վերածնունդը Գողգոթայի խավարում մի պայծառ ճառագայթ է՝ մի շատ քաղցր կաթիլ Քրիստոսի չարչարանքների բաժակում:

Ավազակի դիմումը Քրիստոսին արդյոք «պահի ապեցության տակ դիմում» պետք է համարել: Զե՛ որ նա Քրիստոսի հետ էր Պոնտացի Պիղատոսի ատյանում. նա տեսավ Գողգոթա գնացող Քրիստոսին և լսեց նրա խոսքերը՝ ուղղված լացող կանանց, նրա խոսքերը «կանաչող ծառի» մասին: Ապաշխարած ավազակը, հանձին խաչյալի՝ իր կողքին, Քրիստոսին ուներ և լսում էր նրա աղոթքը՝ ուղղված իրեն խաչողներին: Նա լսել կարողացել էր Քրիստոսին դեռ մինչև Պոնտացի Պիղատոսը, տեսնել նրա և՛ այս, և՛ այն հրաշքները: Եվ, վերջապես, նա կարող էր բարի և պատվավոր մայր ունենալ. գուցե և տեսել էր նրա լացը Գողգոթայում:

Ավազակը դարձի եկավ Քրիստոսին դիտելուց, նրա բնավորության, նրա ներքին գեղեցկության ապեցության տակ: Այն ամենը, ինչ նա գտնում էր Քրիստոսի մեջ, վկայում էր, որ նա Թագավորն է երկնքի արքայության: Հակառակ այն բանի, որ Քրիստոս Գողգոթայի բարձունքի վրա տեսք և վեհություն չունեց, հակառակ որ մարդիկ ծիծաղել էին նրա վրա, հայիոյված էր ու ծայրաստիճան նվաստացած, այնուամենայնիվ ավազակը կարողանում էր տեսնել Քրիստոսի ներքին աշխարհը, նրա ամբողջական փառքն ու մեծությունը և դիմում էր նրան՝ խնդրելով թագավորաց Թագավորին. «Հիշիր ինձ, Տե՛ր, երբ գաս քո արքայությամբ»: Աստուծո առաջ ունեցած իր սարսափելի մեղքի ծանրությունը ավազակը Քրիստոսի վրա էր դնում, և Քրիստոս քավում էր այն:

Քրիստոսի պատասխանը ավազակին, իրոք, ցույց է տալիս, որ Քրիստոս Աստուծո թագավորությանն առաջնորդող «Դուռն» է, ինչպես ասել էր նա դեռ մինչև Գողգոթան: «Ես եմ դուռը. եթե մեկը իմ միջով մտնի, կփրկվի» (Հովհ. Ժ 9):

Այդուհանդերձ մի խումբ քրիստոնյաներ նկատում են, որ փրկության ճանապարհը արդար գործերի միջոցով է լինում: Արդար-

բության գործերը անշուշտ մեծ նշանակություն ունեն մեր քրիստոնեական կյանքում, երբ դրանք հանդիսանում են պոտոլը Քրիստոսից եկող փրկության:

Արդար գործերի նշանակությունը այն բանում է, որ դրանով մենք կարող ենք և պարտավոր ենք փառաբանել անունը մեր Տե՛ր Հիսուս Քրիստոսի: Արդար գործերը մեզ դեպի փրկություն տանել չեն կարող և չեն կարող բացել դրախտի դռները, քանզի փրկության ճանապարհը, որիակ մուտքը արքայության՝ հավատքն է և միայն հավատքը առ Հիսուս Քրիստոս (Գործք ԺԶ 30—31): Արդար գործերը, սակայն, հանդիսանում են մի գեղեցիկ ճանապարհ, որպեսզի մեր աշխարհում արտացոլվի Քրիստոսի լույսը, ըստ նրա խոսքերի. «Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքումն է» (Մատթ. Ե 16): Այսպիսով՝ հավատքը փրկություն ստանալու համար է, իսկ արդար գործերը՝ Քրիստոսին փառաբանելու: Ինչպիսի՞ հիմնալի ներդաշնակություն հավատքի ու գործի:

Ավազակը հավատաց և Քրիստոսի հետ տեղ ունեցավ դրախտում: Սակայն արդար գործի համար նրա ժամանակը քիչ էր. մահը արդեն նրա գլխավերևում էր: Այնուհանդերձ նա փառաբանեց Քրիստոսին՝ հրաշալի վզվայությամբ: Խաչյալ Փրկչին ծաղրող հոծ ամբողջի առջև, Գողգոթայում, Քրիստոսի մասին իր բերանով նա ասաց. «...Սա որևէ վատ բան չի արել» (Ղուկ. ԻԳ 41): Եվ այս վկայությունը խաչյալ Քրիստոսի մասին հանդիսանում է ավազակի կողմից նրա փառաբանումը Գողգոթայում:

#### ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԼՈՐԴ ԽՈՍՔԸ ԳՈՂԳՈԹԱՅՈՒՄ

«Կին դու, ահա՛ որդի քո..., ահա՛ մայր քո» (Հովհ. ԺԺ 26—27): «Հիսուսի խաչի մոտ կանգնած էին նրա մայրը...»: Մեծ նըկարիչները, բանաստեղծներն ու երգահանները օգտագործել են իրենց տաղանդը՝ հաղորդելու համար այն ապրումները, որ Հիսուսի մայրն ունեցել էր իր որդու խաչի մոտ:

Մինչև այս աննկարագրելի վիշտը, երեսուն տարի առաջ, Երուսաղեմի տաճարում, Սիմեոն Ծերունին, մանուկ Հիսուսին վերցնելով իր ձեռքերի մեջ, նրա մորը՝ Մարիամին, ասել էր այսպիսի խոսքեր. «Եվ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի» (Ղուկ. Բ 35): Մարիամն այդ օրը խորհրդավոր այս խոսքերից դժվար թե մի որևէ բան հասկացած լիներ: Շատ տարիներ հետո էլ մարգարեական այս խոսքերից նա ոչինչ չէր

հասկանում: Սակայն այնտեղ, իր որդու խաչի մոտ, նա վերջապես հասկացավ այդ բոլորը, երբ մայրական կակիծի սուր վենքը մտավ նրա սրտի վերքի մեջ:

Ամեն մի մոր համար աննկարագրելիորեն ծանր է տեսնել իր որդու մահը, եթե անգամ նա ամենալավ պայմաններում մահանա. մաքրամաքուր մահճի մեջ, հոգատար բարեկամների հայացքի տակ: Սակայն տեսնել իր որդու այնպիսի մահը, ինչպիսին Քրիստոսի մահն է, ո՞ր մայրական սիրտը կարող է դիմանալ դրան: Ահա Քրիստոս կախված է մոր աչքերի առջև, և նա ուժ չունի օգնելու նրան: Նա տեսնում է նրա վերքերը և սակայն դրանք կապել չի կարող: Նա տեսնում է, թե ինչպես այրվում են նրա շրթունքները, սակայն չի կարող օգնել նրան ոչ մի ձևով: Նա չի կարող հանել գամերը, որոնք երևում են որդու ձեռքին, և իրեն թվում է, որ այդ գամերը իր սեփական ձեռքերին են գամված: Տեսնում է փշե պսակը իր որդու գլխին, բայց ի վիճակի չէ այն հանելու, և իրեն թվում է, որ այդ փշե պսակը իր ճակատին է խրված: Նա լսում է ամեն կողմից իր որդուն ուղղված թունալից ծաղրեր և պզուժ է, թե դրանք որքան խորն են խոցում իր սիրտը:

Գողգոթայում Քրիստոսի չարչարանքների պահին շատ հիշողություններ կարող էին արթնանալ Մարիամի հոգում. նա կարող էր հիշել Գաբրիել հրեշտակին՝ իրեն ուղղված խոսքերը, երբ ինքը դեռևս աղջնակ էր. «Կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի և Բարձրալի որդի կկոչվի: Եվ Տեր Աստված նրան կտա նրա հոր՝ Դավթի պթողը, և նա հավիտյան կըթագավորի Հակոբի տան վրա, ու նրա թագավորությունը վախճան չի ունենա» (Ղուկ. Ա 31—33): Մարիամը նայում է խաչին գամված իր որդուն... ո՞ր է նրա մեծությունը, ո՞ր է նրա գահը, ո՞ր է նրա հավիտենական թագավորությունը: Նա հետո միայն հասկացավ, որ այդ անարգանքի խաչը մի աստիճան է դեպի նրա արքայական գահը տանող, դեպի գահը՝ նրա աստվածային հավիտենական փառքի: Սակայն այնտեղ, Գողգոթայում, բեկյալ սրտով նա թափում էր իր մայրական արցունքները...

Հիսուսի խաչի պատվանդանի մոտ կանգնած էր ոչ միայն նրա մայրը, այլև այնտեղ ներկա եղող ուրիշ կանայք: Առաքյալները փախել էին, սակայն կանայք չլքեցին նրան: Այնտեղ, Գողգոթայում, ամենավտանգավոր տեղում էին գտնվում. նրանք: Բոլորի աչքի առաջ նրանք ի լուր աշխարհի բարձրաձայն վկայում էին, թե իրենք կողմն են Քրիստո-

սի: Նրանց բոլորի հետ առաքյալներից մեկը, սակայն, կանգնած էր Քրիստոսի խաչի ոտքին: Հովհաննեսն էր դա: Սա նա էր, որ վերջին ընթրիքին գլուխը դրել էր Քրիստոսի կրծքին:

Այնտեղ, Գողգոթայում, նա պատվերներ ստացավ մեռնող Վարդապետից: Ինչպիսի պատվերներ: Իր անպատմելի տառապանքների մեջ Քրիստոս նկատել էր լաց եղող իր մորը: Մեկ հասկանալի է, որ նա աղոթել էր իրեն խաչողների համար և ուշադրություն էր նվիրել ապաշխարող ավազակին, քանի որ նա եկել էր փնտրելու և փրկելու կորստյան մատնվածին: Սակայն որքա՞ն ավելացավ Քրիստոսի փառքը Գողգոթայում իր մոր հանդեպ ցուցաբերած հոգատարությունից: Հովսեփը՝ Մարիամի ամուսինը, արդեն կենդանի չէր, իսկ ինքը՝ Հիսուս, մեռնում էր... Մահանալիս նա ի՞նչ կարող էր թողնել մորը. միայն մեկ բան՝ որդուն ի դեմս Հովհաննեսի: Ահա ինչով է պայմանավորված Քրիստոսի երրորդ խոսքը Գողգոթայում. «Ո՛վ կին. ահա՛ քո որդին»... իսկ Հովհաննեսին՝ «Ահա՛ քո մայրը»: Եվ «այդ օրվանից Հովհաննեսը նրան վերցրեց իր մոտ»: Հնարավոր է, որ Հովհաննեսը Գողգոթայից հեռացրած լինի Մարիամին, և նա ամենասարսափելի տեսարանը՝ իր որդու հոգևարարը, տեսած չլինի:

Ի՞նչ կարելի է ասել այն բոլորից հետո, ինչ մենք տեսել ենք Գողգոթայում: Այնտեղ Քրիստոս միայն քնքուշ վերաբերմունք չըցուցաբերեց իր որբևայրի Մոր նկատմամբ. իր փառքի գահի բարձունքից Հակոբոս առաքյալի թղթի միջոցով նա ասում է. «Սուրբ և անարատ կրոնավորությունը... այս է. այցելել որբերին և այրիներին իրենց նեղության մեջ» (Հակոբ. Ա 27): Այս խոսքերը հատկապես լավ պետք է գիտենան և միշտ կատարեն բոլոր հովիվները, քարոզիչները և եկեղեցու այլ սպասավորները: Կենսագործելով այս խոսքերը՝ մեր աչքի առաջ ունենանք առատկերը խաչյալ Քրիստոսի, որ աղքատ քնքուշ վերաբերմունք էր ցուցաբերել իր միայնակ Մոր հանդեպ:

#### ՔՐԻՍՏՈՍԻ ԶՈՐՐՈՐԴ ԽՈՍՔԸ ԽԱՉԻ ՎՐԱ

«Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՛ր թողեր վիս» (Մատթ. ԲԷ՝ 46): Քրիստոսի այս խոսքերի վերաբերյալ եկեղեցու մեծ բարենորոգիչ Մարտին Լութերն ասել է, որ դրանք Ավետարանի ամենաղծվար ըմբռնվող խոսքերի շարքին են պատկանում, քանի որ դրանք խոսում են Աստծուց մոռացված Աստծո՞ւ մասին: Այո՛, եթե Աստված Աստծուն ասում է՝ «Դու ինչո՞ւ թողեցիր ինձ», այդ հասկանալի, իրոք, դժվար է: Սակայն չը-

մոռանանք, որ այս խոսքերն արտասանված են Քրիստոսի բերանից, որը կախված էր խաչից որպես ներկայացուցիչը բոլոր դարերի՝ իր վրա բարձած աշխարհի բոլոր մեղավորների մեղքերը: Մենք խոր երկյուղածությամբ ենք հիշում «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» խոսքերը, քանզի դրանք ասված են Քրիստոսի կողմից, երբ նա մարմնավորում էր մեղքը համայն աշխարհի: Քրիստոսի այս խոսքերում թաքնված է Գողգոթայի ամբողջ իմաստը, մեր Փրկչի մահվան և բոլոր տառապանքների իմաստը:

Գողգոթայի վրա իշավ երեքժամյա թանձր խավար, որը մարդկային տեսողությունից թաքցնում էր Գողգոթայի սարսափելի պատկերը: Անիմաստ են այս խավարի պատճառը բացատրելու փորձերը, դրանք կման խորհուրդ մինչև Քրիստոսի գալուստը: Ս. Գրոց հետապնդողներն աշխատում են գտնել այդ հերեկային խավարի խորհուրդը: Ի միջի այլոց կա այն կարծիքը, որ այդ խավարը կարծես բնության սուգն էր տիեզերքի Ստեղծիչի խաչելության առիթով: Բայց արդյոք այն չի՞ ասում մեր սրտերին, որ դա դժոխքի խավար էր: Համենայն դեպս այդ խավարը առավել ցնցեց Գողգոթան, քան այն երկրաշարժը, որ հաջորդեց դրան: Կարելի է պատկերացնել մի խոր քարացածություն, որը Գողգոթայում պաշարել էր մարդկանց և նորանց մատնել լուրջության: Լուռ էր և խաչված Քրիստոսը:

«Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» խոսքերը մի խոր խորհուրդ ունեն իրենց մեջ: Դրանք միաժամանակ մեր առջև բաց են անում խաչյալ Փրկչի սիրտը: Դրանք մեզ բացահայտում են, թե ինչպիսի ապրումներ ունեցավ Քրիստոս Գողգոթայում:

Ֆիզիկական թանձր խավարի պահին Քրիստոս ապրեց մի այլ, ավելի թանձր խավար՝ դժոխքի խավարը: «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» խոսքերով Քրիստոս արտահայտեց Աստծուց անջատված, Աստծուց լքված մարդկային հոգու ահավոր ապրումը: Դա դժոխքի չարչարանքների բուն էության արտահայտությունն է:

Մարդիկ ինչպիսի ձևերով ասես չեն ներկայացրել դժոխքը և ինչպիսի ձևերով չեն պատկերացրել այնտեղի տառապանքները: Իտալացի մեծ բանաստեղծ Դանթեն, օրինակ, դժոխքը նկարագրել է խորխորատի ձևով, պատերին մի քանի բաժանումներ է արել և հատակին տեղ է տվել աշխարհի մեծագույն մեղավորներին: Դանթեն դժոխքի հատակին է տեղավորել Հուդային, որը Քրիստոսին դավաճանողն էր: Դժոխքի ուրիշ պատկերներ էլ կան. օրինակ՝ դժոխքը պատ-

կերվում է որպես անշեշ բոց, որի մեջ վառվում են մահվան դատապարտվածները, բայց չեն մոխրանում: Մեծահարուստի և Ղապարոսի առակում Քրիստոս ևս խոսում է դժոխքի «կրակի» մասին, իհարկե ոչ տառացիորեն (Ղուկ. ԺԶ 24):

Դժոխքի իրական պատկերը, սակայն, մեզ տրված է Գողգոթայում խաչված Քրիստոսի «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» խոսքերով: Դժոխքի էությունը մարդկային հոգու մերժված լինելն է Աստուծո կողմից: Հենց դրանում է Աստուծո «բարկության» էությունը և պատիժը՝ տրված մեղքի դիմաց՝ դժոխքում գտնվող ամեն մի մեղավոր կարող էր կրկնել Աստծուն ուղղված «ինչո՞ւ թողեցիր ինձ» խոսքը: Սակայն դա չի նշանակում, որ դժոխքում կհնչեն նման խոսքեր: Քրիստոս դժոխքի այլ արձագանքների մասին էլ է արտահայտվել. նա պատկերավոր խոսում է «լացի» և «ատամների կրճատմի» մասին (Մատթ. ԻԵ 30): Քրիստոսի բացականչությունը Գողգոթայում՝ «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» մի ճիշ է դժոխքի հատակից դուրս եկած, ուր Փրկիչը, որպես աստվածային հատուցում, մեղքի բաժակը խմեց ամբողջությամբ: Քրիստոսի այս խոսքերը պարզ ասում են, որ դժոխքը այն վայրն է, ուր Աստված բացակա է, և ուր մարդ իր փորձով կհասկանա, թե ինչ է նշանակում Աստծուց լքված լինելը:

Աշխարհում չկա մի անկյուն, ուր Տերը չըհասնի իր սիրով: Արևի ճառագայթները հասնում են անգամ մինչև խոր ծովի հատակը, և այնտեղ տեղի է ունենում բարերար ներգործություն, չնայած մարդիկ կարող է այն չնկատեն: Աստուծո սերն էլ այդպես կարող է հասնել Աստծուց ամենից ավելի հեռացած մարդուն և նրան բերել մեծ բարիքներ, մինչդեռ մարդը դրանք ընդունում է իբրև բնական մի բան և ոչ թե, իր կարծիքով, Աստծուց ուղարկված: Ահա թե ինչու երկրի վրա ապրող ոչ մի մարդ չի հասկանա երբեք, թե ինչ է նշանակում Աստուծո բացակայությունը: Երկրի վրա այնքան բազմազան «միջոցներ» կան, որոնք նպաստում են, որ մարդիկ իրենց սրտերում խեղդեն Աստուծո կարոտը: Միայն դժոխքն է այն վայրը, ուր մարդիկ կզգան Աստուծո բացակայությունը:

Քրիստոսի «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» խոսքերում կարծես լսելի են նաև ցնծուն բացականչությունները: Քրիստոս կարծես ասում է համայն աշխարհին. «Աստված ինձ լքեց, որպեսպի բոլորիդ իրավունք տա հավիտյանս լինելու Աստուծո հետ»: Եվ ամենից առաջ այդ իրավունքից կարողացել է օգտվել Գողգոթայում ապաշխարած ավապակը:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՍՔԸ  
ԳՈՂԳՈԹԱՅՈՒՄ

«Ծարավի եմ» (Հովհ. ԺԹ 28): Մեր քաղաքների և երգեցողությունների մեջ ինչ ձևով էլ որ ներկայացնենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին Գողգոթայում, պետք է իմանալ, որ նրա ամենախոր տառապանքները այդ երեք-ժամյա խավարի տառապանքներն էին: Դրժոխքն ապրելուց հետո Քրիստոս տկարացավ և իր թույլ վիճակում արտասանեց այդ մեկ հատիկ խոսքը՝ «Ծարավ եմ»: «Ծարավ եմ» խոսքը այն միակ խոսքն էր, որով Քրիստոս արտահայտեց իր ֆիզիկական տառապանքների ամբողջությունը, ինչպես որ «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» խոսքով արտահայտեց իր հոգեկան տառապանքների ամբողջությունը Գողգոթայում: Խաչվածության ահավորությունը, այսինքն խաչին զամված լինելուց առաջացած ցավը, ապա վեց ժամ նրա վրա կախված մնալը՝ այս ամենը Քրիստոս տարավ անտրտունջ և վարակիչ համբերությամբ:

Եվ այսօր կրկին ու կրկին լսելի է Քրիստոսի «Ծարավ եմ» խոսքը: Որքա՞ն մեղավոր ենք մենք, ավա՜ղ, որ անուշադիր ենք Քրիստոսի այս խոսքի հանդեպ: «Ծարավ եմ» խոսքն այսօր արտահայտվում է երկու ձևով. նախ՝ Քրիստոս այդ խոսքն արտահայտում է աջխարհում իր կրտսեր եղբայրների բերանով: Իր աղ կրտսեր եղբայրներից ու թուրքերից մեկի միջոցով Քրիստոս ասում է. «Ծարավ էի, և ինձ ջուր տվիք», կամ՝ «Ծարավ էի, և ինձ ջուր չտվիք» (Մատթ. ԻԵ 35, 42):

Դեպի մարդը եղած մեծ ուշադրությունը պետք է լինի Քրիստոսի ամեն մի աջակերտի բնորոշ գիծը: Հին Կտակարանի Հովսեփի կյանքը մարդու նկատմամբ ցուցաբերված ուշադրությունն նշանավոր օրինակ է: Ծննդոց գրքում կարդում ենք (Խ 5—8). «...երազ ի միում... տեսիլ երազոյ տակառապետին և մատակարարին՝ որ էին արքային Եգիպտացոց, մինս էին ի բանտի անդ: Եմուտ առ նոսա Յովսեփ ընդ առաւօտն, և ետես վնոսա, և էին խռովեալք: Եհարզ ցնեքքնինսն Փառաւոնն որ էին ընդ նմա ի բանտի անդ առ տեառն նորա և ասէ. ընդ՞ի տոտում են երեսք ձեր ասօր: Եւ նոքա ասեն ցնա. եռազ տեսաք, և ո՞ս ոք է որ մեկնիզէ ցնա: Եւ ասէ ցնոսա Յովսեփ... պատմեօք ինձ»:

Մեծ օտուտ «տեսիլ դեմքեր» կարող են օտտ հալո՞ւվել: Մենք տեսնո՞ւմ ենք առույթ նոսա՞: Միթե Քրիստոս ամեն մի տխրաւեմ մարդու միջոցով մեն չի՞ ասում, որ օտուտսնք մեր սերը ծարավ եղողին ոչ միայն

խոսքով, այլ՝ գործով: Եվ մենք ունենք միջոցը սրբելու լաց եղողի արցունքը, քանի որ մենք ՎՔրիստոս ունենք, ունենք նրա մեծ մխիթարությունը, մեր սրտերը լի են նրանով եղած ուրախությամբ, մենք ունենք նրա խոսքը:

Քրիստոս ծարավ է՝ ոչ միայն ի դեմս իր փոքր եղբայրների և թուրքերի: Նա ասում է «Ծարավ եմ» նաև իր անունից: Ո՞րն է ուրեմն այսօր Քրիստոսի ծարավը: Այնտեղ, Գողգոթայի խաչի վրա, նա տառապում էր ֆիզիկական ծարավով, սակայն այդ ծարավն այսօր այլ է. դա ծարավն է նրա սրտի, ծարավը նրա հոգու: Ինչպիսի՞ն է նրա ծարավն այսօր: Այնքան բավմերես է այն, որ դժվար է մեզ համար այն լրիվ ըմբռնել: Սակայն որոշ չափով պետք է իմանալ, թե ինչումն է կայանում Քրիստոսի ծարավն այսօր: Քրիստոս իր հետևորդների խորունկ սիրո ծարավն ունի: Իսկ մենք կնորոգանո՞ւմ ենք արդյոք հագեցնել նրա այդ ծարավը: Եվ, վերջապես, նա ծարավի է մեր մաքրության և սրբության: Ահա այն, ինչ հատկապես մոռանում ենք մենք: Քրիստոսի «Ծարավ եմ» խոսքը թող խոր թափանցի մեր հոգիներում:

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԽՈՍՔԸ  
ԳՈՂԳՈԹԱՅՈՒՄ

«Ամենայն ինչ կատարեալ է» (Հովհ. ԺԹ 30): Վերևում հիշված Քրիստոսի հինգ խոսքերը խաչի վրա չարչարվող Քրիստոսի խոսքերն էին: Նրա վեցերորդ և յոթերորդ խոսքերն էլ մեռնող Քրիստոսի խոսքերն են: Գողգոթայի խաչը Քրիստոսի չարչարանքների պարփակումն է և նրա մահվան անկողինը: Ահա թե ինչու Գողգոթայի վրա չարչարվող և մահացող Քրիստոսը օրինակ կարող է ծառայել ինչպես իրենց մահճում պառկած հիվանդների, այնպես էլ «մահվան հովտում» գտնվող մեռնողների համար: Այլ խոսքով՝ Գողգոթայի խաչյալ Քրիստոսը մեզ՝ իր աշակերտներին ուսուցանում է, թե ինչպես պետք է տանել մեր չարչարանքներն ու հիվանդությունները և ինչպես պետք է մեռնել:

Մեր ուշադրությունը սևեռենք Քրիստոսի հետևյալ խոսքի վրա. «Ամեն ինչ կատարված է»: Կատարված է՝ նշանակում է իրականացված է: Ի՞նչն է կատարված և ի՞նչն է իրականացված: Կատարվել, իրականացվել է այն, ինչի համար Քրիստոս եկել էր աշխարհ: Քրիստոսին հավատացողներս և նրան սիրողներս գիտե՞նք արդյոք, թե ինչպիսի մեծ նպատակի համար էր եկել նա աշխարհ: Կարդանք Հովհաննես Ավետարանչին. «Ես քեզ փառավորեցի երկրի վրա. կատարեցի այն գործը, որն ինձ տվիր, որ անեմ» (Հովհ.

ԺԷ 4): Ինչպիսի՜ պարզությամբ է խոսում Քրիստոս իր վրա դրված նպատակի մասին: Նա ասում է, որ իր երկրային կյանքի նըպատակը եղել է Աստուծո փառաբանումը: Նրա բոլոր հրաշքների նպատակը, արդարև, Աստուծո փառաբանումն է, այսինքն՝ Քրիստոս աշխարհի եկավ, որպեսզի մարդկանց ցույց տա, թե ինչպիսին է նրանց երկնային Հայրը: Այս մասին նա պարզ կերպով պատասխանել է Փիլիպպոս առաքյալի՝ երկնային Հորը ցույց տալու վերաբերյալ իրեն ուղղած մեկ հարցին: «Հիսուս նրան ասաց. այսքան ժամանակ ձեզ հետ եմ, Փիլիպպոս, և ինձ չճանաչեցի՜ր. ով ինձ տեսավ, տեսավ Հորը. իսկ դու ինչպե՜ս ես ասում, թե՛ Հորը մեզ ցույց տուր: Չե՛ս հավատում, որ ես Հոր մեջ եմ, և Հայրը իմ մեջ» (Հովհ. ԺԴ 8—10): Քրիստոսի ողջ կյանքը երկրի վրա երկնային Հոր փառաբանումն էր:

Սակայն նա Աստծուն ոչ մի տեղ այնպես չի փառաբանել, ինչպես Գողգոթայում, խաչի վրա: Քրիստոսի խաչը Աստուծո գերագույն փառաբանումն է: Հենց Գողգոթայի խաչի վրա ի հայտ եկավ մեղավոր մարդկության նկատմամբ Աստուծո գերագույն սերը: Չե՛ որ Քրիստոս մեռավ մեղավորների համար: Քրիստոսով Աստված իրեն հաշտեցրեց աշխարհի հետ, և այդ հաշտությունը ձեռք է բերված միայն Քրիստոսի արյունով:

Քրիստոս խոսում է նաև աշխարհ գալու իր մյուս նպատակի մասին: Կարդանք նրա խոսքերը Ղուկասի ավետարանում (ԺԹ 10). «Մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին»: Երկրի վրա Քրիստոսի ողջ կյանքը չարչարանքի կյանք էր և նա ի վուր չէ, որ կրում է «տառապանաց այրի և հիվանդություններ ճաշակողի» անունը (Եսայի ԾԳ 3): Հերովդես թագավորը փնտրել էր նրան՝ սպանելու համար... Նապարեթում նրա մաքուր սիրտը տառապեց ի տես քաղաքի չարությունների, որի համար էլ մարդիկ ասացին. «Իսկ կարելի՜ է, որ Նապարեթից մի որևիցե լավ բան դուրս գա» (Հովհ. Ա 46): Նրա մեծ ծառայության օրերին, Պաղեստինի գյուղերում ու քաղաքներում, թվում էր, թե բոլոր մարդիկ հավաքվելու էին նրա շուրջը: Սակայն, ավա՜ղ, նրա հանդեպ եղած թշնամությունը, ընդհակառակն, գնալով աճեց, մինչև որ նրա թշնամիները Պոնտացի Պիղատոսի առջև դրանք սկսեցին աղաղակել. «Խաչի՜ր նրան, խաչի՜ր նրան»: Եվ համակ սեր եղող Քրիստոսին առաջնորդեցին դեպի Գողգոթա՝ խաչելու...

Ի՛նչն էր այն, որ Քրիստոսի զգացած ամենօրյա դառնությունը քաղցրացնում էր: Այդ դառն բաժակում նա տեսնում էր աշխարհում բոլոր մեղավորներին փրկելու միակ

ուղին: Եվ նա կաթիլ առ կաթիլ, ունյա առ ունյա խմում էր այդ «Փրկության բաժակից»: Սակայն ամենից դառնը Գողգոթայի կաթիլներն էին: Եվ Գողգոթայում ամենադառն ունյալ այն պահն էր, երբ Քրիստոս զգաց, որ Հորից մոռացված է, այն պահն էր, երբ նա բացական էր. «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ»:

Մեր փրկության համար Քրիստոսին մընացել էր խմելու միայն մե՛կ դառն կաթիլ՝ մահը: Այդ կաթիլն էլ խմելով՝ նա բացական էր. «Ամեն բան կատարված է»: Կատարված է դժոխքից մեղավորի փրկությունը: Ամբողջացած է երկրի վրա Քրիստոսի կյանքի այս նպատակն էլ: Կատարված է նաև այս մեծ ծրագիրը: «Ամեն ինչ կատարված է», ասել է Քրիստոս մահանալիս. կատարված է փրկության գործը:

Բոլորիս էլ սպասում է մահվան մահիճը, և մեր առջևում դրված է «ինչպիսի՜ն է փնտրելու մեր մահը» հարցը: Մեռնելիս արյոյոք կարողանալո՞ւ ենք զգալ. Քրիստոսի կողմից մեզ հանձնարարված գործը կատարված է: Իսկ ի՞նչ գործ է դա: Դա հենց այն գործն է, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, կատարել է իր երկրային կյանքի ընթացքում, այն է՝ Աստուծո փառաբանումը և մեղավորների փրկությունը: Այդ մեծ պաշտոնը մենք էլ կատարո՞ւմ ենք արյոյոք մեր երկրային կյանքի օրերում: Փառաբանո՞ւմ ենք արյոյոք մեր սիրելի Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Ծարավի՞ ենք Ավետարանի քարոզությամբ մարդկանց հոգիների փրկությանը:

Ինչո՞վ կարող ենք նպաստել մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ փառաբանության հարցում: Որքան էլ տարօրինակ թվա այս հարցը, սրանի՛ց են կախված մեր կյանքի վերջին ժամերը մեր մահվան մահճում: Եթե մենք Քրիստոսին փառաբանող կյանք ենք վարել, ապա մեր մահվան հովիտը կողողվի արևի պայծառ լույսով. կունենանք այն երջանիկ գիտակցությունը, թե մենք մեր երկրային կյանքն անցկացրել ենք վասն Քրիստոսի փառքի:

Քրիստոսի «ամեն ինչ կատարված է» խոսքը բոլոր մահվան մահիճները լուսավոր հովտի փոխարկելու ուժն ունի: Բանպի ամեն մի մեղավորի, առավել ևս ներման արժանացածի համար այդ խոսքը Քրիստոսով մեզ համար կատարված փրկության մասին է վկայում:

ՔՐԻՍՏՈՍԻ ՅՈԹԵՐՈՐԴ ԽՈՍՔԸ  
ԳՈՂԳՈԹԱՅՈՒՄ

«Հայր. ի ձեռս քո առանդեմ փողփ իմ»  
(Ղուկ. ԻԳ 46): Գողգոթայում մեռնող Քրիս-

տոսի այս վերջին խոսքերը բոլոր հավատացյալների համար պարունակում են մի քանի թանկագին ճշմարտություններ: «Ապրելու արվեստ» արտահայտությունը հայտնի է ամենքին: Այն նշանակում է՝ ապրել այնպես, որ կյանքն ի վուր չանցնի: Եթե կարելի է խոսել «ապրելու արվեստի» մասին, ապա կարելի է և խոսել «մեռնելու արվեստի» մասին: Այսպիսով՝ հարկավոր է հմտանալ երկու, իրարից իսկապես ոչ հեռու բաների մեջ՝ ապրելու արվեստի և մեռնելու արվեստի:

Ի վերջո որտե՞ղ կարելի է սովորել ապրել և որտե՞ղ՝ մեռնել: Այս հարցին մեկ պատասխան ունենք միայն՝ առ ռոտ աստվածային ուսուցիչ Հիսուս՝ Քրիստոսի: Ավետարանը երկրի վրա նրա անցկացրած կյանքի օրինակ պատմությունն է: Ավետարանն է, որ մեկ պատմում է Քրիստոսի կյանքի վերջին ժամերի մասին և նույնիսկ մեկ դարձնում վկա նրա վերջին շնչի փչումին:

Ինչպե՞ս է մահացել մեր Փրկիչը Քրիստոս: Աղոթելի՛ս է մահացել նա: Նա ապրել է աղոթքով, մեռել է աղոթելիս: «Աղոթելի՛ս», այսինքն՝ Աստծուն կառչելով:

Մահվան մահիճը այն տեղն է, ուր, առանց բացառության, մարդկանց ձեռքերը սեղմված չեն լինում, և դրանցից արձակվում է այն, ինչ նրանք բռնել էին: Քրիստոսին հավատացողը, երբ մահճում կորցնում է երկրային բոլոր գանձերի փայլը, ավելի քան երբևէ սկսում է զգալ մերձավորությունն իր Փրկչի: Մահվան մահճում հավատավոր ձեռքերն ավելի ուժեղ են բռնում Քրիստոսին և այն թանկագին արյունը, որ նա թափել է Գողգոթայում: Ինչպես որ կան մարդիկ, որոնք իրենց ամբողջ կյանքի ընթացքում ապրած լինելով առանց Աստուծո՝ միայն մահվան մահճում են կառչում նրան, այնպես էլ կան քրիստոնյաներ, որոնք Քրիստոսին և նրա թանկագին արյունը, ինչպես հարկն է, սկսում են արժեզրեկ միայն մահվան մահճում: Իսկ քանի դեռ հեռու են մահից, նրանք շատ հանգիստ են իրենց լաոդիկյան հոգեվիճակից: Դե, ուրեմն, ապրենք աղոթքով, Քրիստոսի մեջ և Քրիստոսով, և այդ ժամանակ, բնականաբար, մեր կյանքն էլ կավարտենք աղոթքի մեջ:

Քրիստոս մեռնելիս աղոթել է Ս. Գրքի խոսքերով: Հիսուս Քրիստոսին հավատացողները պետք է սովորեն Ս. Գրքի լեզուն, որովհետև դա այն լեզուն է, որ ամենից ավելի մեզ կապում է Աստուծո հետ: Մեր կյանքում կան պահեր, երբ միայն Ս. Գրքի լեզվով կարելի է արտահայտել այն, ինչ լցնում է մեր հոգին: Քրիստոս մեռնելիս աղոթեց Սաղմոսի խոսքերով՝ «Քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին»:

Քրիստոս մեռնելիս աղոթեց իր հոգու համար: Գիտենք, որ թանկարժեք մարգարիտը խեցու մեջ է գտնվում: Մեր թանկագին հոգին էլ, այդպես, ամփոփված է մեր մարմնեղեն շապիկի մեջ: Մեզ համար դժվար է շնչի և հոգու տարբերությունը հասկանալը, սակայն այն, որ մեր «հոգին» անմահ է, երբեք չի մահանում, պարտավոր ենք գիտենալ: Թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանները միախորհուրդ են հոգու անմահության ուսմունքի մեջ: Քրիստոսի վերջին խոսքը Գողգոթայում ցույց է տալիս մեր հոգու ամենահուսալի հանգրվանը, ուր ոչ մի երկրային փորձրիկ չի հասնի նրան: Մեր երկնավոր Հոր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի ձեռքերն են դրանք, հուսալի ձեռքեր: Թող այդ ձեռքերում օրեցօր հանգչի մեր հոգին...

Եղիա մարգարեն երկինք բարձրացավ հըրեղեն կառքով: Քրիստոս մուտք գործեց այնտեղ «աղոթքի թևերով»: «Հայր, քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին»: Մենք նույնպես ունենք աղոթքի այդ հրաշալի թևերը: Աղոթքի թևերով օրեցօր բարձրանում ենք դեպի լուսավոր բարձունքները և այնտեղ ձեռք ենք բերում նոր ուժ՝ քաղցրորեն և անբողջապես ծառայելու համար մեր Տիրոջը:

**Փոքր կրճատումներով ռուսերենից  
թարգմանեց՝**

**ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՔԱՐՅԱՆԸ**



Թարգմանաբար ներկայացվող «Քրիստոսի յոթ խոսքերը Գողգոթայում» հոդվածը իր ընդգրկումով կամ ենթատեքստով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում գոյություն ունեցող «Յոթվերքի» տարբերակն է:

Երկու տարբերակների մասին կասկած լինել չի կարող: Սակայն դրանց բնաբանների նույնությունն ու հարավատությունը խոսում է այն մասին, որ երկուսի աղբյուրն էլ Ս. Գիրքն է:

Մեզանում Յոթվերքը հատկապես նրանով է հայտնի, որ Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցին իր երկրորդ անվանումով կամ օժումով այդպես էլ կոչվում է՝ Յոթվերք: 1852 թվականից այստեղ է գտնվում կամ պաշտվում «Յոթվերք Տիրամայր»-ը՝ հրաշակերտ մի սրբապատկեր, որը, ըստ ավանդության, Թովմաս առաքյալի նկարածն է: Մինչև Լենինական բերվելը, ինչպես հայտնի է, այն եղել է սեփականությունը կամ պաշտամունքի առարկան արևմտահայերի (Այս մասին տես «Էջմիածին», Ը, 1973, էջ 38—39):

Շիրակի թեմում գտնվող այս ոչ շատ մեծ սրբապատկերի կենտրոնում Ս. Աստվածածինն է՝ սրտին խրված յոթ սրերով՝ խորհրդանշելը Հիսուս Քրիստոսի՝ իր Որդու հետ Գողգոթա բարձրացած և այդքան թվով տառապանքներ կրած մոր:

Սիմեոն Ծերունին ժամանակին մարգարեացել էր և ասել Տիրամորը. «Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի» (Ղուկ. Բ 35). Ա վերք: Գողգոթայում նա հիշում էր նաև հայր Հովսեփի հետ իրենց Եգիպտոս փախչելը. հրեշտակը հայտնել էր, որ Հիսուս մանուկը պիտի փրկվի կոտորածից (Մատթ. Բ 13). Բ վերք: Հիշում էր 12 տարեկան Հիսուսի կորչելը և իր մայրական սրտի ցավը (Ղուկ. Բ 42—47). Գ վերք: ...Եվ այժմ խաչի ճանապարհը իր որդու հետ (Մարկ. ԺԵ 16—49). Դ վերք: Նա ականատես է իր որդու խաչ բարձրանալուն (Մատթ. ԻԵ 35, Մարկ. ԺԵ 23—25, Ղուկ. ԻԳ 33, Հովհ. ԺԺ 25). Ե վերք: Նա վկան է Հիսուսի անշնչացած մարմնի խաչից իջեցվելուն. Զ վերք: Նա վկան է նաև նրա թաղվելուն և գերեզման դրվելուն (Մատթ. ԻԵ 59—61, Մարկ. ԺԵ 44—47), Ղուկ. ԻԳ 52—56). Է վերք:

Հիշենք, որ «Յոթվերք» թեման Արևմուտքին էլ է հայտնի: Այդ յոթ բնաբանների խորհուրդներով հուպվել են ինչպես եկեղեցական շրջանակները (Ս. Բեռնարդինոսը հեղինակ է յոթ-բնաբան աղոթքների և այլ գործերի), այնպես էլ մեծ արվեստագետներ, ինչպես, օրինակ, ականավոր կոմպոզիտոր Շառլ Գունոն (1818—1893): Այո՛, երևի քչերին է հայտնի, որ «Ֆաուստ» օպերայի հեղինակը այդ թեմայով գրել է օրատորիա, որը կոչվում է «Մահ և փրկություն»:

Հայր Ղուկաս Ինճիճյանի «Աղոթագրքի» մեջ ներառվածն էլ նույն այդ յոթ բնաբաններով եղածն է (Վենետիկ, Ս. Ղապար, 1932 թ.):

Ս. Յոթվերքը չի վրիպել անգամ մեր Հովնաթանյան նկարիչների ուշադրությունից: Նրանց ազգային ներշնչանքի մեջ հայտնի են ստեղծագործություններ, որոնցից մեկը Հայկական Սովետական Հանրապետարանում ներկայացվածն է (№ 6, էջ 568, տե՛ս նաև «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1981 թ., № 5, էջ 88—89), մյուսը՝ Շիրակի թեմի առաջնորդարանինը (Արձանագրությունը՝ «Ի վայելումն եօթն վիրաց պատկերս պարոն Ստեփանին թվ. ՌՄԼԵ»—1788.):

«Յոթնապատիկ խոցված Տիրամայրը» անծանոթ չի եղել նաև մեր բանաստեղծ Վահան Տերյանին: Նա անցյալի՝ 1915 թվականի մեր տառապյալ հայրենիքը նմանեցնելով նրան՝ գրում է.


«Ինչպե՛ս չըսիրեմ, երկի՛ր իմ կիպված,  
Պարզված վերստին սրբին սուրաայր.  
Ինչպե՛ս չըսիրե՛մ, հեղույթամբ լցված  
Դու, յոթնապատի՛կ խոցված Տիրամայր...»:

(Ընդգծումը մերն է—Ն. Ե. Ը.)

Յոթվիրաց խորհրդի և գաղափարականի մեջ պարփակված է, ինչպես երևում է, ցավակիր Ս. Աստվածածինը և մեր Տերը Հիսուս Քրիստոս, նա, ով մեղքը չէր ճանաչել, բայց մեզ համար դարձավ մեղք, «որպեսզի նրանո՛վ Աստուծո արդարությունը լինենք» (Բ Կորնթ. Ե 21):

Ն. Ե. Ը.





#### Ղ. Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

### ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի բաժանումը Հռոմի և Իրանի միջև 387 թվականին և Հին Հայաստանի պետության անկումը 428 թվականին հայերի համար առավել կենսական դարձրին իրենց ապագային ինքնուրույնությունը սպառնացող այլ ապգությունների հետ ձուլվելուց պաշտպանվելու հարցը, իրենց բազմադարյան կուլտուրայի պահպանումն ու վարձացումը: Այդ արմատական հարցի լուծման գլխավոր միջոցներից մեկը հանդիսացավ ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը, որն ամենևին էլ պատահամաբ չէ որ ծնունդ առավ և ամրապնդվեց հենց այն պահին, երբ խախտվել էր հայ ժողովրդի միասնությունը և անհետացել պետական անկախությունը:

Այդ պաշտամունքի նշանակությունն է՛լ ավելի մեծացավ հաջորդ հարյուրամյակներում. դա արդյունք էր Հայաստանի հարևան Իրանի ու Բյուզանդիայի կողմից համառորեն անցկացվող՝ հայ ժողովրդի ձուլման քաղաքականության: Սակայն, եթե մալդեպակա-նության (ինչպես ավելի ուշ՝ իսլամի) տարածման փորձերը, հակառակ արյունահեղ պայքարի զուգորդմանը, ավարտվում էին ապարդյուն, ապա ավելի մեծ վտանգ էր ներկայացնում բյուզանդական իշխանություն-

ների՝ հունական Եկեղեցու հետ հայ Եկեղեցին միավորելու ձգտումը, որի հետևանքով հայերի մի մասն ընդունել էր երկաթնակություն և վերջին հաշվով ապապգայնացել էր: Ուստի կոնկրետ պատմական այդ պայմաններում հայկական դավանանքին պատկանելությունը, որի նշանաբանը և մարմնավորումը ս. Գրիգոր Լուսավորիչն էր, նշանակում էր հայ մնալ, պահպանել հավատարմությունն իր ժողովրդի, նրա լեզվի ու պատմության, կուլտուրայի և սովորույթների նկատմամբ:

Հայտնի է, որ Քաղքեղոնի ժողովը 451 թվականին հանգեցրեց Տիեզերական Եկեղեցու պառակտմանը: Դրա հետ մեկտեղ դժվարին ժամանակներ էր ապրում Բյուզանդիան, մշտապես ժողովրդական ալեկոծումներ էին տեղի ունենում կայսրությունում, գրսից ստեղծվել էր գոթերի ներխուժման սպառնալիքը: Ջենոն կայսեր (474—491) օրոք գոթերի հետ սկսվեց նոր պատերազմ, որի ժամանակ բյուզանդացիք կրում էին անհաջողություն անհաջողության ետից մինչև Կոստանդնուպոլսի պաշարումը 481 թվականին: Միայն մեծ պիջումների գնով (գոթերին տվին Իտալիան) Ջենոնին

հաջողվեց հաջողություն կնքել: Նման պայմաններում Ձենոնը որոշ քայլեր կատարեց միաբնակների ու երկաբնակների փոխվիշողության միջոցով Եկեղեցիների հաջողության բաղադրությամբ: Ակակի պատրիարքի (472—489) հետ նրանք «Էնոտիկոն» («Միավորում») հրատարակեցին, որը բովանդակում էր այնպիսի դրույթներ, որոնք ընդունելի էին թե՛ միաբնակների, թե՛ երկաբնակների համար: Մասնավորապես, Վահան Մամիկոնյանի ղեկավարությամբ համաժողովորդական ապստամբության շնորհիվ (481—484 թթ.) Պարսկաստանից որոշակի անկախություն ստացած հայերի կողմից նախապես պաշտպանություն ապահովելու նպատակով, Ձենոնը, ըստ երևույթին Հայաստանի մարպպանի և հայ Եկեղեցու համաձայնությամբ, Բյուզանդիա տարավ և Գրիգոր Լուսավորչի ու Հռիփսիմյանց կույսերի մասունքների մի մասը: Ինչպես հաղորդում է սկյւրադիքայությունների հիման վրա իր «Հայոց պատմության» մեջ XIII դարի հայ պատմագիր Կիրակոս Գանձակեցին, «Եվ Ձենոն կայսեր օրերում նրա ու սուրբ Հռիփսիմյանների մասունքներից տարան Կոստանդնուպոլիս և շինելով արծաթյա տապանը, սրբերի նշխարները դրեցին նրա մեջ. յուրաքանչյուրի անունը վրան գրելով՝ վետեղեցին մարմարյա տապանում ու մատանիներով կնքեցին»<sup>1</sup>: Ըստ միջնադարյան հասկացությունների, սրբերի մասունքներին վերագրվում էին տարբեր տեսակի «հրաշքներ», ինչպես՝ հիվանդների բուժում, չար ոգու արտաքսում և նման այլ բաներ, այլև ուժ, պորություն, իրենց գտնված երկրի պաշտպանությունը, իրենց պատկանած Եկեղեցու փառքն ու հեղինակությունը և այլն: Ուստի և Ձենոնի արածը միանգամայն որոշակի իմաստ ուներ. նա մի կողմից, ս. Գրիգոր Լուսավորչին և Հռիփսիմյանց կույսերին դասում էր տիեզերական Եկեղեցու կողմից ճանաչված սրբերի շարքը, իսկ մյուս կողմից՝ բարձրացնում էր հայ Եկեղեցին և ինչ-որ չափով այն հաջողություն հունական Եկեղեցու հետ:

Սպանված Ձենոնի հաջորդ Անաստասիոս Դիկորը (491—518) հայերին, վրացիներին և աղվաններին իր կողմը գրավելու նպատակով 506 թվականին հրապարակեց հրամանագիր, որը բացեիքաց պաշտպանում էր միաբնակներին և ուղղված էր քաղքեղոնիկ-երկաբնակների և մանավանդ սասանյանների քաղաքական կողմնակիցները դարձած նեստորականների դեմ: Ինչպես նշում է հայագետ գիտնական Մ. Օրմանյանը, հայ Եկե-

ղեցին Անաստասիոսի հրամանագիրը դիտեց որպես Քաղքեղոնյան ժողովի նշանակության նվաստացումը և որպես նրան հեղինակությունից զրկող հրամանագիր<sup>2</sup>: Բնական է, որ հայկական, վրացական ու աղվանական Եկեղեցիները հավանություն հայտնեցին Անաստասիոսի այդ փաստաթղթին և հանդիսավորությամբ այն ընդունեցին նույն 506 թվականին Վաղարշապատում գումարված ժողովում:

Սակայն Անաստասիոսի միաբնակասիրական կողմնորոշումը ավելի ու ավելի հակառակորդներ էր երևան բերում հունական Եկեղեցում, և նրա մահից հետո կայսր ընտրված Հուստինիանոս I-ը (518—527) շեջտակիորեն փոխեց իր նախորդի կրոնական քաղաքականությունը. նա հանդես եկավ ընդդեմ միաբնակների, սկսեց նրանց հետապնդել, թեև հայերի հավատի նկատմամբ ստիպված էր հանդուրժողականություն հանդես բերել: Հատկանշական է, որ Հուստինիանոսի և նրան հաջորդող երկաբնակ կայսրերի օրոք մոռացության էին մատնվել ս. Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմյանց կույսերի Կոստանդնուպոլիս բերված մասունքները, ասես դադարել էր դրանց պաշտամունքը հունական Եկեղեցում: Այդ առթիվ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ երկար ժամանակ դրանք (մասունքները—Ղ. Ա.) մնում էին անհայտության մեջ. ոչ ոք չգիտեր, թե ում են պատկանում դրանք, (գիտեին) միայն, որ դրանք ինչ-որ սրբերի են պատկանում:

Այսպես շարունակվեց մինչև Բարսեղ I-ի բյուզանդական գահ բարձրանալը (867—886): Հայ պատմագրի վկայությամբ՝ այդ կայսեր և հայոց թագավոր Աշոտ Բագրատունու (886—891) իշխանության օրոք մասունքներով տապանակի գաղտնիքը հայտնաբերվեց շնորհիվ մի «հրաշքի», որը պատահել էր «չար ոգուց» տառապող մի պատանու հետ: Եվ ահա, երբ պատանին աղոթում էր այն տաճարում, ուր գտնվում էին սրբերի մասունքները, «դևը բարձրացրեց պատանուն, գցեց սրբերի տապանի վրա. նա աղաղակում և ասում էր. «Հայոց լուսավորիչ սուրբ Գրիգոր, մի տանջիր ինձ, և դու, տիկին Հռիփսիմե, եկար ինձ տանջելու, և դու Գայանե, տանջում ես ինձ»: Եվ այս էր աղաղակում երկար ժամանակ»<sup>3</sup>:

Այդ լսելով մարդիկ զեկուցեցին թագավորին: (Թագավորը) հրամայեց բանալ տապանակը: Եվ երբ այն բացին, պայծառ

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, քարգլ., առաջաբանը և ծանոթ. Վարագ Առաքելյանի: Երևան 1982, էջ 27—28:

<sup>2</sup> Орманян М. История армянской церкви. М., 1914, с. 35.

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում, էջ 28:

լույսով փայլատակեցին սրբերի մասունքները: Կայսրը հրամայեց ոսկեպոծել մարմարյա տապանակը և վրան գրել սրբերի անունները, որպեսզի ամեն ոք գիտենա, թե ո՞ւմն է այդ տապանակը:

Այս ամենի մասին, վերադառնալով, Աշոտ թագավորին պատմեց կայսեր ներքինիներից մեկը: «Նա լսելով՝ փառք տվեց Աստծուն. ու այդ օրը նշանակեցին սուրբ Գրիգորի տուն, որ աղուհացի վեցերորդ շաբաթում շաբաթ օրը մինչև այժմ կատարվում է»<sup>4</sup>:

Սակայն գոյություն ունի հայկական աղբյուրներում տարածված նաև մի այլ վարկած, որի համաձայն ս. Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմյանց կույսերի մասունքները պահվելիս են եղել Դափնայի Սուրբ Երրորդության եկեղեցում և հայտնաբերվել են նույն պատանու հետ տեղի ունեցած «հրաշքի» օգնությամբ, Միքայել III կայսեր (842—867) և Թեոփորա կայսրուհու (842—856) օրոք, Փոտի պատրիարքության (857—867) ժամանակ, կրկին 877—886 թվականներին: Ինչ վերաբերում է Բարսեղ I-ին, ապա նա ավելի ուշ էր Աշոտ Բագրատունուն հաղորդել տեղի ունեցածի մասին<sup>5</sup>:

Հարց է ծագում՝ ինչո՞վ էր պայմանավորված բյուզանդական իշխանությունների և հունական եկեղեցու նոր հետաքրքրությունը ս. Գրիգոր Լուսավորչի նկատմամբ, ի հետևանք որի, ըստ երևույթին, տեղի էր ունեցել նաև բուն «հրաշքը»: Այն օգնում է նաև պարզելու, թե երկու վարկածներից ո՞րն է ճիշտ, և դրանով իսկ որոշելու հայ սրբի պաշտամունքի ծնունդը Բյուզանդական կայսրությունում:

Այն պատճառների մասին, որոնք հունական եկեղեցուն դրեցին Հայաստանում պետական եկեղեցու հիմնադրի հատուկ պաշտամունքին, հակառակ վերջինիս ակնհայտ թշնամությանը առաջինի նկատմամբ, գոյություն ունեն մի շարք կարծիքներ: Դրանցից առավել տարածվածը դրա պատճառը տեսնում է Բյուզանդիայի կայսերական գահը ապօրինաբար գրաված մակեդոնացի հասարակ գյուղացի Բարսեղ I-ի ձգտման մեջ, որով նա ուզում էր իր ծագումը կապել հայկական Արշակունյաց ցեղի (հարստության) հետ<sup>6</sup>:

Մի կողմ թողնենք Բարսեղ I-ի հայկական ծագման, Արշակունյաց ցեղի հետ նրա ունեցած կապերի, նրա մասին հայ պատմագիրների հաղորդած մյուս տեղեկությունների

հարցը, դրանք մեր թեմայի սահմաններից դուրս են: Մեզ համար կարևոր է մի այլ բան. որ *Բարսեղը քաղկեդոնական է եղել*, այլապես նա չէր կարողանա գրավել բյուզանդական գահը և օգտվել հունական եկեղեցու հովանավորությունից, նույն պատճառների պաշտպանությամբ: Ասվածը վերաբերում է իրոք հայկական ծագում ունեցող բյուզանդական կայսրերին (ինչպես նաև այն հայերի ճնշող մեծամասնությանը, որոնք ղեկավար դիրք են ունեցել կայսրությունում), նրանք բոլորը եղել են ոչ թե հայկական, այլ հունական եկեղեցու հետևորդներ: Հաշվի չառնել այդ հանգամանքը՝ նշանակում է աչքաթող անել միջին դարերի մարդու աշխարհայեցողության էական հատկանիշը, որի համար *որոշիչը ոչ թե սպալին, այլ կրոնական պատկանելությունն էր*: Ուստի Բարսեղ I-ը թե՛ նույնիսկ հայ էր, ապա այնքան էր «հունականացած», որ հայ ծագումից նրա մեջ ոչինչ չէր մնացել: Դա հաստատվում է նրա կրոնական քաղաքականությամբ, որը ոչնչով չէր տարբերվում հայ եկեղեցու նկատմամբ հունական եկեղեցու վարած քաղաքականությունից: Այդ քաղաքականությունը բնորոշվում էր հայ եկեղեցու հանդեպ թշնամությամբ, նրան միավորման ստիպելու ձգտումով: Այս տեսանկյունից երևան է գալիս Սահակ Պարթևին վերագրվող՝ Գրիգոր Լուսավորչի պատրիարքական Աթոռի վերականգնման մասին եղած «մարգարեության» անվավերությունը, մի ավանդություն, որը ակներևաբար ծնունդ էր առել ոչ թե հայկական, այլ հունական միջավայրում և ոչ թե մինչև Բարսեղ I-ի գահ բարձրանալը, այլ՝ դրանից հետո: Ս. Գրիգոր Լուսավորչի անունը տվյալ կոնտեքստում օրգանական կապի մեջ չի գտնվում Բարսեղ I-ի անձնավորության և գործունեության հետ և վերջինիս համար չէր կարող Բյուզանդիայում հայ սրբի պաշտամունք ստեղծելու պատճառ ծառայել:

Բյուզանդիայում ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի տարածման ժամանակի ու պատճառների վերաբերյալ հարցի պատասխանը պետք է փնտրել, ինչպես միշտ, որևէ կոնկրետ պատմական հանգամանքի մեջ, տվյալ դեպքում՝ IX դարի կեսերի Բյուզանդիայում, մի շրջան, որը բնորոշվում էր կայսրության աշխարհական ու հոգևոր իշխանությունների կողմից հերետիկոս պավլիկյանների չորս շարժման դեմ ուղղված սուր և լարված պայքարով: Հայտնի է, որ այդ շարժումը Հայաստանում ծնունդ էր առել, որոշ գիտնականների ենթադրությամբ, VI դարում, իսկ մյուսների ենթադրությամբ՝ VII դարում: Հայ եկեղեցու ձեռնարկած մի-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>5</sup> Տե՛ս Ս. Տեր-Ներսիսյան՝ «Հայ արվեստը միջին դարերում»: Երևան, 1975, էջ 65—66:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 66:

ջոցների շնորհիվ պավլիկյանները ստիպված էին հեռանալ Հայաստանից: Նրանց հիմնական մասը տեղափոխվեց Բյուզանդիայի իշխանության տակ գտնվող Արևմտյան Հայաստան, ուր լայն տարածում էր գտել այդ հերետիկոսությունը: Արդեն Հուստինիանոս II-ը (685—695 և 705—711), պավլիկյան շարժման թափից վախեցած, հրաման տվեց դաժանագույն կերպով դատաստան տեսնել նրա հետևորդների նկատմամբ: Ինչպես վկայում է Պետրոս Սիկիլիացին, նրանց այրում էին կենդանի<sup>7</sup>: Սակայն պավլիկյանների հերետիկոսական աղանդը չհաջողվեց վերացնել, և պայքարը նրանց դեմ փոփոխակի հաջողությամբ շարունակվում էր Հուստինիանոսի հաջորդող գրեթե բոլոր կայսրերի օրոք:

Բյուզանդիայի համար առանձնապես վճռական դեր էր խաղում այդ պայքարը Միքայել II-ի օրոք (842—867) և Բարսեղ I-ի թագավորության սկզբին, երբ պավլիկյանները, տաղանդավոր պորափար Բրիստեփորոսի ղեկավարությամբ, ներխուժեցին Բյուզանդիայի խորքերը և գրավեցին Եփիսոսը: Պավլիկյանների դեմ 868 թվականին Բարսեղի ձեռնարկած արշավանքը ավարտվեց բյուզանդական զորքերի ջախջախմամբ, և ինքը՝ կայսրը, հապիվ խուսափեց գերի ընկնելուց<sup>8</sup>: Բարսեղն ստիպված էր խաղաղության բանակցություններ սկսել՝ Բրիստեփորոսի մոտ ուղարկելով պատվիրակություն Պետրոս Սիկիլիացու գլխավորությամբ: Հույն պատմագիր Հենեսիոսը հաղորդում է, որ «Թագավորը Բրիստեփորոսին գրում է՝ առաջարկելով նրան խաղաղություն կնքել և խաղաղասեր ու գթասիրտ լինել... բավարար համարելով իր վարած պայքարը՝ նրանից (Բարսեղից) ստանալ ոսկի, արծաթ ու հագուստ և դադարել քրիստոնյաներին գերելուց ու կոտորելուց»: Ի պատասխան Բրիստեփորոսը Բյուզանդիայից պահանջել էր հրաժարվել Փոքր Ասիայից՝ սպառնալով հակառակ դեպքում գահընկեց անել Բարսեղին: Դա Պավլիկյան շարժման ուժեղ վերելքի ժամանակաշրջանն էր, երբ թվում էր, թե «Բյուզանդիայի արևելյան մարզերի ապստամբած գյուղացիությունը իրոք կկարողանա թողափել Կոստանդնուպոլսի լուծը և ամրապնդել պավլիկյան պետությունը»<sup>9</sup>: Դրա հետ մեկտեղ պավլիկյաններին նոր ուժ տվեց

բազմաթիվ հայ թողնակեցիների՝ Հայաստանում ծնունդ առած այդ աղանդի հետևորդների մասնակցությունը նրանց շարքերում: Ընդ սմին, այդ աղանդը սոցիալական իմաստով նման էր պավլիկյանականությանը և գրեթե համընկնում էր նրան իր հայացքներով: Ու թեև վիթխարի ջանքերի գնով Բարսեղ I-ին հաջողվեց ջախջախել պավլիկյաններին, սակայն բուն հերետիկոսությունը արմատախիլ չէր արվել, շարունակում էին գոյություն ունենալ հերետիկոսների համայնքները, մերթ՝ գաղտնի, իսկ մերթ նաև բացահայտ կերպով այն տարածվում էր Բյուզանդիայի սահմաններից դուրս՝ Եվրոպայում, Հին Ռուսիայում և այլ վայրերում:

Ուշագործություն դարձնենք այն խանգամանքի վրա, որ ս. Գրիգոր Լուսավորչի մատուցածը հայտնաբերելու և հունական Եկեղեցում նրա պաշտամունքը սահմանելու ժամանակը համընկնում էր հայ Պավլիկյանների շարժման բուն վերելքի հետ, որ սպառնում էր Բյուզանդական կայսրության բուն իսկ գոյությանը: Դա ամենևին էլ պատահականություն չէր և չէր կարող լինել, եթե ելնենք մի կողմից այն բանից, որ Եկեղեցու առջև միջին դարերում դրված հիմնական խնդիրը ժողովրդական պանգավածներին քրիստոնեության ոգով դաստիարակելն էր, նրանց գիտակցության վրա ազդելը, իսկ մյուս կողմից՝ այն, որ Հայաստանի քրիստոնեացման ուղղությամբ իր գործունեության մեջ ս. Գրիգոր Լուսավորիչը ուժեղ պայքար էր մղում ոչ միայն հեթանոսությունն արմատախիլ անելու օգտին, այլև՝ բուն քրիստոնեության մեջ բույն դրած աղանդների դեմ: Ազաթանգեղոսի «Հայոց պատմություն» գործում բերված է ս. Գրիգոր Լուսավորչի «Տեսիլքը», որտեղ նա մերկացնում է հայերի մեջ եղած հավատալուսններին և նպոլում նրանց: Ելնելով Եվանգելիոսի «Եղծ աղանդոց» գրքի տվյալներից՝ քրիստոնեական վարդապետությանը հակադրվող բազմապիսի ուսմունքները (իուրեմ փիլիսոփաների, պրաղաշտականության, մանիքեականների, մարկիոնական և մեսայան աղանդների) գոյություն ունեին արդեն ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակ, բնական է, որ քրիստոնեության այդ հակառակորդները պետք է մերկացվեին նրա «Տեսիլքում»: Հետևապես, հունական Եկեղեցին ս. Գրիգոր Լուսավորչին վերագրելով հերետիկոսության դեմ պայքարողի առաքելություն և նրան դասելով աղանդավորների այնպիսի հակառակորդների շարքը, ինչպիսիք էին Մակարիոս Եփեսացին, Անտոնիոս Մեծը, Կոսմա Քաղկեդոնացին և ուրիշներ, տվյալ ավանդույթը փոխ էր առել հայկական Եկեղեցուց: Ավելացնենք,

<sup>7</sup> Полезная история Петра Сицилийского . . . — в Р. М. Бартикан, Источники для изучения павликианского движения. Ереван, 1961, с. 138.

<sup>8</sup> Sba История Византии в трех томах, т. II. М., 1969, с. 175.

<sup>9</sup> Նույն տեղում:



Նկ. 1. Ս. Գրիգոր Լուսավորիչ  
(Վ. Պոլսի սուրբ Սոփիայի տաճար, IX դ.)

որ հենց այդպես էր ընկալվել ս. Գրիգոր Լուսավորիչը նաև Հին Ռուսիայում, հետո միայն նա ընդունվել էր որպես հայ Եկեղեցին մարմնավորող հոգևորական:

Ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Բյուզանդական կայսրությունում արտահայտվել էր նրանով, որ նրա մատուցները Բարսեղ I-ի օրոք տեղափոխվել էին հունական Եկեղեցու սրբություն սրբոցը հանդիսացող Կոստանդնուպոլսի սուրբ Սոփիայի տաճարը, իսկ նրա որմնանկարային դիմապատկերը նկարվել էր սուրբ Սոփիայի տաճարի հարավային գմբեթի ներսում, առավել պաշտելի սրբերի շարքում: Ս. Գրիգոր Լուսավորիչը պատկերված էր ըստ հույների մոտ ընդունված սխեմայի՝ հասակով մեկ, եպիսկոպոսա-

կան զգեստով, դեմքը դեպի դիտողները, մի ձեռքում Ավետարանը, իսկ մյուս ձեռքը՝ օրհնանքի համար բարձրացրած դիրքում. մակագրություն՝ ΓΡΗΓΟΡΙΟΣ ΑΡΜΕΝΙΑΣ («Գրիգորիոս Հայ»), որը կարելի է կարդալ «Γρηγόριος Της (կամ Ο Της) Μεγαλης Αρμενίας» այսինքն՝ «Գրիգորիոս Պատրիարք Հայոց»<sup>10</sup> (Նկ. № 1): Իր ոճով այդ նկարը շատ նման է Գրիգոր Նապիանավացու քարույների ձեռագրում եղածին, որը կատարված էր Բարսեղ I կայսեր և Եվդոկիա կայսրուհու պահանջով (880—883)<sup>11</sup>:

<sup>10</sup> Տե՛ս Ս. Տեղ-Ներսեսյան... էջ 64:

<sup>11</sup> Նույն տեղում:



Նկ. 2. Ս. Գրիգոր Լուսավորիչ  
(Վ. Պոլսի ս. Աստվածածին եկեղեցի, XIV դ.)

Սուրբ Սոփիայի տաճարից հետո ս. Գրիգոր Լուսավորչի որսնանկար պատկերները հայտնվեցին նաև ուղղափառ մյուս եկեղեցիներում՝ Բյուզանդիայում և նրա սահմաններից դուրս։ Ինչպես այժմ պարզված է՝ հետևյալ եկեղեցիներում. Փոյուզիայի Սեբաստիա (X դ.), Սալոնիկի Պանագիա (XI դ.), Թուկիդայի Ղուկասի (XI դ.) եկեղեցիներում, Բուլղարիայի Ջեննիի վանքում (XIV դ.), Կոստանդնուպոլսի Գերերանելի Աստվածամոր (XIV դ.) (նկ. № 2), Միստրայի Աթենտիկոյի (XIV դ.), Ռումինիայի Բալինեշտիի, Որոնեստիի, Կուրա-Մոտրոլուի

և Հյուրեպի եկեղեցիներում<sup>12</sup>։ Հայտնի հալադետ Ներսես Ալիսյանի հաղորդմամբ՝ Նեապոլում 930 թվականին կառուցվել է մի եկեղեցի, որը «գտնվում էր սուրբ Սեբաստիանի Գրիգոր Լուսավորչի պաշտպանության ներքո»<sup>13</sup>, իսկ իտալական մի շարք եկեղեցիներում գոյություն ունեն մի ավանդություն, ըստ որի դրանցում զետեղված են

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 66։

<sup>13</sup> Ալիսյան Ն., Գրիգոր Լուսավորչի տոները նեապոլիտանյան եկեղեցիներում։ Վ. Հնագիտական հետապոտություններ, հատ. 5. Վիեննա, 1953, էջ 44։

հայ սրբի մասունքների մասնիկները, ինչպես օրիանկ՝ Ապուլիայի Նարդոյ քաղաքի եկեղեցում<sup>13</sup>։ Ս. Գրիգոր Լուսավորչի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են տրվում «Աթոսի սուրբ լեռան ուղեցույցում» և սրբությունների ու նրա այլ տեսարժան վայրերի տեղեկատու գրքում<sup>14</sup>, ըստ որի սրբի ոտքի ոսկորը պահվում է Քսիրոնի վանքում, որը հիմնադրվել է V դարում և նորոգվել X դարում<sup>15</sup>, մասունքի մասնիկները՝ սուրբ Պանտելեյմոնի ռուսական վանքի Աստվածածնի երկրորդ տաճարում, որը հիմնադրվել է X դարում, գլուխը և կաշվով ձեռքը՝ սուրբ Աթանասի մայր տաճարում<sup>16</sup>։ Աթոսում էր գտնվում նաև հունական եկեղեցի Հայաստանի Լուսավորչի անունով<sup>17</sup>։

Բյուզանդիայում ս. Գրիգոր Լուսավորչի հատուկ պաշտամունքի մի այլ դրսևորումն է եղել այն, որ նրա անունը մտցված է եղել եկեղեցական օրացույցների մեջ, և նրա հիշատակը սկսել է ամեն տարի նշվել սեպտեմբերի 30-ին։ Այդ մասին առաջին հիշատակությունները հանդիպում են IX դարի հունական Ավետարանին կից Կոստանդնուպոլսի տոնացույցում, IX դարի հունական Ավետարանին կից Սինայյան տոնացույցներում<sup>18</sup>, Հոլմսի երգասացի Կանոնում, Բատոնիների IX դարի հռոմեական եկեղեցու Մարտիրոսագրության մեջ<sup>19</sup>։ Հետաքրքրական է 1742 թ. Նեապոլում հայտնաբերված օրացույցը՝ գրված մարմարե երկու սալաքարերի վրա և նույնպես IX դարին պատկանող, ուր, ըստ 12 ամիսների, արձանագրված է սրբերի, դրանց թվում նաև ս. Գրիգոր Լուսավորչի (և Հռիփսիմյանց կույսերի) հիշատակը<sup>20</sup>։

IX դարին է պատկանում նաև ս. Գրիգոր Լուսավորչի (ու Հռիփսիմյան կույսերի) համառոտ և ընդարձակ վարքի տարածումը բյուզանդական գրականության մեջ։ Ինչպես նշում է Ս. Տեր-Ներսեսյանը, Ագաթանգեղոսի շարադրմամբ հայ սրբերի ճգնավորությունը VIII դարի սկզբին Հայաստանի սահմաններից դուրս սակավ հայտնի էր։ Այդ ապացուցվում է արարե եպիսկոպոս Գեորգի

նամակով՝ գրված 714 թվականին, ի պատասխան ոմն ճգնավորի՝ ս. Գրիգոր Լուսավորչի մասին արած հարցումի։ Սակայն արդեն VIII դարի վերջին Ագաթանգեղոսը թարգմանված էր հունարեն և «բոլոր կրթված մարդիկ գիտեին այդ բնագիրը»։ Այսպես, Նիկիիորոս պատրիարքը (806—815) իր քարուկներից մեկում մեջբերումներ է արել Գրիգոր Լուսավորչի՝ Խորվիրապ իջեցվելուց առաջ արտասանած աղոթքից, իսկ նույն աղոթքից մի քանի նախադասությունների հանդիպում ենք 824 թ. մահացած Բուրանիայի Մեդիկիոն վանքի վանահայր Նիկիտայի «ձառնտիրում»։ «Կանկած չկա,— գրում է Ս. Տեր-Ներսեսյանը,— որ նույն IX դարում Ագաթանգեղոսի գրքի համառոտ բովանդակությունը տեղ է գտել սրբոց վարքերում, օրինակ, Պատմոս կղզու 226 սրբերի վարքում, որն այժմ դասում են ավելի շուտ IX, քան X դարին»<sup>21</sup>։ Գրիգոր Լուսավորչի (և Հռիփսիմյանց կույսերի) ժողովրդականացմանը, նրա պաշտամունքի ավանդույթների ամրապնդմանը շատ բանով նպաստել է Սիմեոն Մետափրաստեսի կողմից ստեղծված նրա վարքի համառոտ խմբագրությունը՝ հիմնված ագաթանգեղյան ապքի վրա։ Այն մտել է հունական Վարք սրբոցի, ձառնցների ու Հայսմավորքների կազմի մեջ, թարգմանվել է այլ լեզուներով<sup>22</sup>։

Հունական ձեռագիր հուշարձաններում հայտնվում են նաև ս. Գրիգոր Լուսավորչի պատկերները (մանրանկարները)՝ Բարսեղ II-ի վերը նշված մենուդգիայում (X դ.), Մետափրաստեսի մենուդգիայում Բրիտանական թանգարանի ժողովածուից (XI դ.), Օքսֆորդի Բոուլմանի գրադարանում պահվող ձեռագրում (XIV դ.)<sup>23</sup> և այլն։ Բացի գրավոր հուշարձաններից, ս. Գրիգոր Լուսավորչի կերպարը՝ մարմնավորվել է նաև քանդակագործության մեջ, որի մասին վկայում է արծաթյա դրվագակերտ եռածալ մասնատուփի մեկ հասած միակ օրինակը, որն այժմ պահվում է Էրմիտաժի (Լենինգրադ) Արևելքի բաժնի ժողովածուում։ Այնտեղ հայ սուրբը ներկայացված է եռածալի ձախ կողմում եպիսկոպոսի հագուստով՝ փիղոնով ու խաչապարո ռուներով նախորդում, երկու ձեռքով գիրքը բռնած, գլխին ծածկոց՝ կաթողիկոսի բարձրագույն իշխանության խորհրդանիշը։

<sup>14</sup> Путеводитель по св. Афонской горе и указатель святынь и прочих ее достопримечательностей, 1893.

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 135—138:

<sup>18</sup> Архим. Сергий. Полный месяцеслов Востока, т. I. Восточная агиология, с. 4, 7, 26, 74—76, 132, 226 и др.

<sup>19</sup> Его же, т. II. Святой Восток, с. 26.

<sup>20</sup> Ն. Ալինյան... էջ 22:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Տե՛ս Անայան Վ. Ս. V—XVIII դդ. հայկական գրագիտություն, հատ. I, Երևան, 1959, էջ 151—213: Н. Я. Марр, Крещение Армян, Грузин, Абхазов и Алагов св. Григорием, СПб, 1905.

<sup>23</sup> Ս. Տեր-Ներսեսյան, էջ 66:

Նկարի ելքերին կա հետևյալ մակագրությունը՝ «Ար. Գրիգոր Լուսավորիչ»<sup>24</sup>:

Բյուզանդիայում ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի հաստատման գործում հսկայական դեր խաղաց Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքը: Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով՝ հենց նրան է պատկանում Կոստանդնուպոլսի ս. Սոֆիա տաճարում հայ սուրբի պատկերի պետեղման նախաձեռնությունը<sup>25</sup>, ինչպես նաև նույն տեղում նրա մատուցելու պետեղումը: Այս առումով ուշադրության արժանի է Փոտի նամակը Չաքարիա կաթողիկոսին, ուր բացառիկ բարձր գնահատական է տրված հայերին քրիստոնյա դարձնելու՝ ս. Գրիգոր Լուսավորչի սիրանքի նշանակությանը, որը նրան դասում է տիեզերական Եկեղեցու առավել ականավոր գործիչների շարքը<sup>26</sup>: Ըստ երևույթին, պատահական չէ, որ Փոտ պատրիարքին են վերագրում Բարսեղ Լ-ի կեղծ ապագախությունը, ըստ որի նա ս. Գրիգոր Լուսավորչի հետ միասին ծագում էր նույն տոհմից՝ Արշակունիներից: Որոշ գիտնականներ սրանով են բացատրում, ինչպես վերևում ասվեց, հայ


սուրբի պաշտամունքը Բյուզանդիայում: Բացի Բարսեղ Լ-ի կրոնական քաղաքականության և քաղկեդոնականության վերաբերյալ ասվածից, մոռացության է մատնվում կարևոր և անառարկելի այն փաստը, որ հենց Փոտ պատրիարքն է հանդիսանում «Մանիքեականների (այսինքն՝ Պավլիկյանների) երկրորդ վերասերման մասին» երկի հեղինակը, ուր նա, որպես հունական Եկեղեցու ղեկավար, գաղափարախոսական անհաշտ պայքար էր մղում այդ աղանդի դեմ:

Այսպիսով, մեզ հասած նույնիսկ ոչ շատ տեղեկություններից դատելով՝ IX դարի կեսերից սկսած Բյուզանդիայում հաստատվում է ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը: Այդ պաշտամունքը Բյուզանդիայում մերթ ևրվել էր, մերթ վերստին կենդանանում, նայած քաղաքական ու սոցիալական պայքարի վայրիվերումների: Այլ կերպ ասած՝ եթե հունական Եկեղեցում նույնիսկ հաստատված էր ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը, ապա այդ պաշտամունքի աստիճանը ամեն անգամ պայմանավորված է եղել կայսրությունում տիրող կոնկրետ-պատմական իրադրությամբ: Այս հանգամանքը մեզ հնարավորություն է տալիս հասկանալու նաև այն, թե ինչո՞վ էր պայմանավորված ս. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Հին Ռուսիայում, հակառակ ռուս Եկեղեցու անբարեհաճ վերաբերմունքին հայոց դավանանքի նկատմամբ:

<sup>24</sup> А. Я. Каковкин, Об изображении Григория Просветителя на реликварии. 1923 г. — Вестник общественных наук АН Арм. ССР, 1971, № II.

<sup>25</sup> Ս. Տեր-Ներսեսյան, էջ 66:

<sup>26</sup> Նույն տեղում:



## ՆԵՐՔՈՂԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## 1

Գրական հիմնական ժանրերը ծագել և ձևավորվել են դեռևս անտիկ գրականության մեջ: Ներքողը՝ նույնպես: Նա անցել է վարձագման երկար ուղի: Պահպանելով տիպաբանական կայուն հատկանիշները՝ ներքողը միաժամանակ պատմականորեն մի շարք փոփոխություններ է կրել թե՛ բովանդակակիր առանձին տարրերի և թե՛ ձևական ուղղվածքային վանապան հատկանիշների առումով: Առաջ են եկել ներքողի նոր տեսակներ ու ձևեր, որոնք ապգային տարբեր գրականությունների մեջ ձեռք են բերել յուրահատուկ գծեր և հատկանիշներ<sup>1</sup>:

Ասենք, սակայն, որ հին Հունաստանում, դեռևս գրական այդ ժանրի ձևավորման ժամանակ, կային ներքողի տարբեր ձևեր՝ իրենց տարբեր անուններով: Այսպես, օրինակ՝ *ἐπινίκια*<sup>2</sup>, որը սովորաբար մարպական մրցումներում հաղթողի մեծարման գովերգություն էր, հաղթանակի երգ<sup>3</sup>, *ἑρχομιαστικός*<sup>4</sup>

և *ἑρχόμενος*<sup>5</sup>, որոնք գովասանական ճառեր էին, գովք, դրվատ, *πανηγυριστός*<sup>6</sup> և *ἐπαίνος*<sup>7</sup>, որոնք նույնպես գովեստներ, ներքողական ճառեր էին և կարող էին կոչվել նաև այլ կերպ<sup>8</sup>: Հունարեն այս անվանումներն իրար նկատմամբ գտնվում են համանիշային նույն հարաբերության մեջ, ինչ հայերեն **ներքող, ներքողյան, դրվատ, գովեստ, գովք, գովասանություն, գովերգություն** և նման մի քանի այլ բառեր: Հայերենը չունի հունարեն այդ բառերի փոխառություններ: Հունարեն **էնկոմիա** բառն է միայն, որ **ներքող, գովեստ** իմաստով մեկ անգամ օգտագործել է Փավստոս Բուզանդը: Խոսելով Ներսես Պարթևին Կեսարիայում հայոց կաթողիկոս օծելու արարողության մասին՝ Փավստոսը գրում է. «Ապա ձեռնադրեցին զնա, և հանին նստուցին յաթոռ եպիսկոպոսութեանն, և պատուէին զնա և բազումք ասէին նմա **էնկոմիա**, որ ասի թէ Հոգի Սուրբ հանգեալ ի սա»<sup>9</sup>:

Հայերեն ներքող բառը ձևակալվորեն համապատասխանում է հունարեն *ἐνχομιαστικός* կամ *ἑρχόμενος* բառին: Բառի ստուգաբանությանը հանգամանորեն անդրադարձել է ակադեմիկոս Հր. Աճառյանը: Վկայակոչելով «Պիտոյից գրքի» սահմանումը՝ նա գտնում է, որ հու-

<sup>1</sup> *Տե՛ս* «Краткая литературная энциклопедия», М., 1968, т. V, стр. 569—572.

<sup>2</sup> «Древнегреческо-русский словарь», составил И. Х. Дворецкий, т. I, М., 1958, стр. 625.

<sup>3</sup> *Մ. Գալսարյանի բնորոշմամբ*՝ «Эпиникий—это хоровая песня в честь победителя на спортивных состязаниях священных игр, исполнявшаяся обычно на родине победителя во время всенародного чествования при его возвращении».—В книге «Поэтика древнегреческой литературы», М., 1981, стр. 290.

<sup>4</sup> «Древнегреческо-русский словарь», т. I, стр. 453.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 453:

<sup>6</sup> «Древнегреческо-русский словарь», составил И. Х. Дворецкий, т. II, М., 1958, стр. 1228—29.

<sup>7</sup> «Древнегреческо-русский словарь», т. I, стр. 580.

<sup>8</sup> *С. М. Радциг*, История греческой литературы, М., 1977, стр. 150—166, 373—377.

<sup>9</sup> «Փավստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց» Ս. Պետրբուրգ, 1883, էջ 61:

նարենն չ' մասնիկը նշանակում է ներ, չ' «տոն, փողոցներում երգելով հանդես», իսկ չ' «գյուղ, արվարձան», ուստի հայերեն ներքող բառը ծագում է հունարենից՝ ներ-փողոց բառացի պատճենարկմամբ, որը հնչյունափոխվելով դարձել է ներքող կամ ներքողեան<sup>10</sup> և, ըստ Նոր Հայկական բառարանի, նշանակում է «Գուլ, գովեստ, գովասանություն, գովաբանություն, դրուատ, դրուատիք, երգ կամ ճառ գովեստական»<sup>11</sup>:

Ներքողը հայ գրականության մեջ սկզբնավորվել է 5-րդ դարում: Ներքողը սրբախոսական գրականության կենսունակ ժանրերից է, որը, սակայն, ցարդ չի արժանացել հատուկ ուսումնասիրության: Հայ իրականության մեջ ներքողը հանդես է եկել թեմատիկ-կառուցվածքային և ոճաարտահայտչական այն կերպարանափոխությամբ, որն արդեն մշակվել էր քրիստոնեական առաջին դարերի բյուզանդական գրականության մեջ:

Սկզբնավորվող հայ գրականությունը բյուզանդական մշակույթն ընկալում էր արդեն նրա մեջ տեղի ունեցած գաղափարախոսական բեկման հայեցակետից: Հայ մատենագրությունը չունի մայրենի գրականության հին ավանդներ, որոնց հետ հաջվի նըստելու, ընդունելու կամ մերժելու խնդիր հարուցվեր: Այդպես չէր սակայն բյուզանդական իրականության մեջ: Հունա-լատինական հայրաբանական և սրբախոսական գրականությունը մի կողմից հենվում էր դեռևս կենդանի անտիկ ավանդույթների վրա, ընդունում կամ մերժում էր դրանք, մյուս կողմից՝ մշակում էր նոր թեմաներ ու սկզբունքներ՝ պատմահասարակական պահանջներին և գեղարվեստական նոր մտածողությանը համապատասխան: «Բյուզանդական գրական առանձին ժանրերի պատմությունը, գրում է Լ. Ա. Ֆրեյբերգը, — առատ նյութ է տալիս այն դիտարկումների համար, թե ինչպես է անտիկ պոետիկայի գրելաձևի մեջ ստեղծագործական ուղիղ ժառանգականությունը խախտվում բյուզանդական տարրերով, որոնք սկզբում ծագում են քրիստոնեական փիլիսոփայության ազդեցությամբ, ապա Բյուզանդիայում և Արևմուտքում աստիճանաբար կազմավորվող ֆեոդալական հարաբերությունների ազդեցությամբ և, վերջապես, բյուզանդացիների ստեղծագործության այն ազդեցությամբ, որը

նկատելի կերպով երևան է գալիս 9—10-րդ դարերում»<sup>12</sup>:

Սակայն եթե բյուզանդական գրական ժանրերի մեջ նկատելի է անտիկ ավանդների ժառանգականությունը, իսկ ժողովրդական բանահյուսության ազդեցությունը հետագայում է, որ դառնում է շոշափելի, ապա սկզբնավորվող հայ գրականության գրեթե բոլոր ժանրերում խորապես զգալի է հայ բանահյուսության կենդանի ավիշը, որն էլ ազգային ինքնատիպության դրոշմ է դրել հայ մշակույթի և մատենագրության վրա:

Ներքողի, իբրև գրական ժանրի, տեսական սահմանումը ևս մեզ է անցել բյուզանդացիներից: Ժանրի տեսական սահմանումը և նրա հատկանիշների բնութագրումը կա «Պիտոյից գրքում»: Այդ գիրքը բովանդակում է անտիկ ճարտասանության իմասական դրույթները, որոնք շարադրված են ըստ Ափոնիոսի «Հռետորական արվեստի» սկզբունքների և ծառայել է որպես ճարտասանության ուսուցման ձեռնարկ: Գրքի թարգմանությունը, ինչպես նաև առանձին մասերի հեղինակությունը, վերագրվում է Մովսես Խորենացուն<sup>13</sup>:

Ժանրի մասին այստեղ ասված է. «Ներքողեան է բան արտադրական եղելոյ բարեաց...»<sup>14</sup>: Այստեղ արդեն առկա է ներքողի, իբրև ժանրի էական հատկանիշի, ըմբռնումը. ներքողը բարի գործերի, առաքինության գովերգությունն է:

Ներքողի սահմանումն ավելի հստակ է Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» ձեռնարկում, որը նույնպես հայերեն էր թարգմանված 5-րդ դարում: Ըստ Թեոնի՝ «Ներքողեան է բան՝ որ երևեցուցանէ մեծութիւն ըստ առաքինութեան գործոյ և այլոց բարեաց պարորոշեցելոց դիմացելոց»<sup>15</sup>: Այսինքն՝ ներքողն այն խոսքն է, որը ցույց է տալիս որոշակի անձանց մեծությունը՝ ըստ առաքինության գործի և բարի այլ հատկանիշների: Այս միտքն անվերապահորեն ընդունելի է եղել հայ միջնադարյան գրականության մեջ: Ներքող հյուսե-

<sup>12</sup> Л. А. Фрейберг, Античное литературное наследие в византийскую эпоху, в кн. «Античность и Византия», М., 1975, стр. 14.

<sup>13</sup> С. С. Аревшатян, Формирование философской науки в древней Армении (V—VI вв.), Ереван, 1973, стр. 18, 148—149, 160—162.

<sup>14</sup> «Արքոյ իորն մերոյ Մովսէսի խորեանցոյ, Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 413:

<sup>15</sup> «Թեովնեայ Յաղագս ճարտասանական կրթութեանց», աշխատությամբ պրոֆ. Հակոբ Մանանդյանի, Երևան, 1938, էջ 130:

<sup>10</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 445:

<sup>11</sup> «Նոր բառգիրք Հայկական լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 416:

յու կարգն ու կանոնները լայն կիրառություն են ունեցել վարքերի, ճանքերի, գովեստների և, մինչև իսկ, պատմագրության մեջ: Ինչպես ցույց է տվել ակադ. Մ. Աբեղյանը, Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ ներբողյանի բնավորություն ունի Տիգրան Մեծին նվիրված հատվածը (Գիրք Ա, գլ. ԻԱ—ԻԴ և ԼԱ):

Տեսական միտքը, սակայն, միջին դարերում քիչ է անդրադարձել ժանրին: 12-րդ դարի 40-ական թվականներին Հաղբատի վանահայր Վարդան Վարդապետը Ներսես Շնորհալուն խնդրում է գրել Դավիթ Անհաղթի՝ խաչին նվիրված ներբողի մեկնությունը<sup>16</sup>: Շնորհալին գրել է ոչ միայն ծավալուն մեկնությունը, այլև տաղաչափել է ներբողը՝ պարզ և դյուրամատչելի դարձնելով այն<sup>17</sup>: Շնորհալին շոջափում է ներբողի գրության տեղի, ժամանակի, շարժառիթների հարցերը, ինչպես նաև բնութագրում է ներբողը որպես գովասանություն, «որով ճոխացուցանե ի խորությոն պասացեալն»<sup>18</sup>: Այս դիտողության մեջ ուշագրավ է նյութի ընդլայնման ասելիքը՝ ճոխացնելու և ծաղկեցնելու մասին կետը: Առանց ճոխ ու ծաղկուն ոճի չկա ներբող:

Խաչատուր Էրպրումցին (1666—1740) ներբողը համարում է ապացուցական ճառերի մի տեսակ: Ըստ Էրպրումցու՝ ապացուցական ճառերի նյութը մարդկանց գովելի կամ պարսավելի հատկանիշներն են, և հեղինակը «որք գովութեանց արժանիք են՝ երգաբանն է գովաբանէ», իսկ «որք արժանիք են պարսառանաց՝ վատաբանն է պարսառէ»<sup>19</sup>: Այլ կերպ ասած՝ «պատճառք գովասանութեանց են կատարելությունք» և, բնականաբար, պարսավանքի են արժանի թերություններն ու մոլությունները: «Գովասանն է բան, որով երկարապես գովի ինչ և գովաբանի»<sup>20</sup>—ահա ներբողի նրա սահմանումը, ուր ակներև է, որ Էրպրումցին ներբողը նույնացնում է գովեստի, գովասանքի հետ:

Էրպրումցու մտքերը քննադատաբար յուրացրել և վարձագրել է Ստեփանոս Ազոնցը (1740—1824): Ներբողաբանությունը նա համարում է կացողական հանդես, հանդիսավոր ճառ: «Կացողական հանդեսն, որ և ներբողական կոչի,—գրում է նա,—ի գլխատրագոյն գործոց իւրմէ առեալ վանուն, և

ըստ Յունաց «πειθιστικόν» ասացեալ, պարունակէ վեբբող և պարսառ»<sup>21</sup>:

Ազոնցին գրեթե հարասում է Մատթիա Գարագաշյանը (1818—1903): Նա ևս ներբողը համարում է կացողական, տոնահանդեսային, ներբողական ճառի տեսակ և, Ազոնցի նման, նրա ծագման ակունքներն իրավացիորեն տեսնում է հին հունական տոնական հանդեսների, սրբապան մարպիսադերի և զոհամատուցման ծեսերի մեջ: Գարագաշյանը սակայն բավարարվում է նշելով, որ ներբողն այլ բան չէ, քան գովություն<sup>22</sup>:

Այսպիսով, ներբողն անխտիր համարվել է դրվատական ճառի տեսակ, որի էական հատկանիշը գովասանությունն է՝ լինի անձ, իր, կրոնական սրբություն, եկեղեցական տոն և այլն: Ներբողի մեջ պատմողական տարրը գրավում է քիչ տեղ, նյութի ճարտասանական ընդլայնումը՝ առավելագույն: Ներբողը համեմատաբար փոքր ծավալի գեղարվեստական ստեղծագործություն է, որի մեջ պատմողական տարրը գրավում է նվազագույն տեղ, մատուցման քնարականությունն ու ճարտասանական գովասանությունը՝ առավելագույն:

## 2

Թեմատիկ առումով լայն է ներբողի ընդգրկման շրջագիծը: Ըստ Պիտոյից գրքի՝ ներբողի նյութ կարող են լինել՝ ա) «պղծման, որպես պղծմութենէս, կամ պղծատուն», բ) «վիրս, որպես վարդարություն, կամ վողջախոհություն», գ) «պժամանակս, որպես պգարուն, կամ պամառ», դ) «պտեղիս, որպես պանդաստան, կամ վնառահանգիստ», ե) «պանբան կենդանիս, որպես պձի, կամ վարջառ», Վ) «պտունկս, որպես պձիթենի, կամ վորթ»<sup>23</sup>: Ակներև է անտիկ աշխարհընկալման և քրիստոնեական աշխարհայեցողության սահմանագիծը. անտիկ աշխարհում ներբողի նյութը մարդն է, երկրայինը, մինչդեռ քրիստոնեության դարաշրջանում նահատակներն են ու սրբերը, կրոնական սրբություններն ու եկեղեցական տոները, մարդու բարեպաշտությունը, հոգևոր սխրանքը, աշխարհությունը: Էական տարբերությունը, սակայն, թեմատիկայի մեջ չէ, այլ՝ գաղափարական մեկնակետի և գեղարվեստական մարմնավորման: Հայ ներբողագրությունը բացառա-

<sup>16</sup> Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 302:

<sup>17</sup> Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վեներտիկ, 1873, էջ 264:

<sup>18</sup> Մատենադարան, ձեռ. № 6816, էջ 6ա:

<sup>19</sup> «Ճարտասանութիւն արարեալ և շարդրեցեալ ի խաչատուր Էրպրումցոյ առուածաբան վարդապետէ», Վեներտիկ, 1713, էջ 167:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>21</sup> Ստեփանոս Ազոնց, Ճարտասանութիւն, Վեներտիկ, 1775, էջ 390:

<sup>22</sup> Մատթիա Գարագաշեան, Արուեստ ճարտարախօսութեան, Վիեննա, 1844, էջ 187:

<sup>23</sup> Մովսես Խորենացի, Մատենագրութիւնք, էջ 413:

պես տոգորված է քրիստոնեական աշխարհայեցողությամբ:

Հայ մատենագրության մեջ հիշատակվում են տարբեր ներբողներ: Անշուշտ այլ է վարքագրական ներբողը, այլ՝ ներբողական գովեստը, այլ՝ դամբանականը: Որոշակի հստակություն չկա, սակայն, ժանրի տարբերակման մեջ: Կան հեղինակներ, որոնք իրենց նույնաբնույթ գործերին տալիս են տարբեր անուններ և, ընդհակառակն, հաճախ տարբեր գործեր կոչվում են միևնույն անունով: Այս երևույթը հատկապես նկատելի է գրիչների մոտ: Այնուհանդերձ հաճախադեպ է ներբողյան անվանումը: Այդ հասկացությունն արդեն լայն շրջանառություն ուներ 5-րդ դարում:

Ներբողի տեսակների մասին հնագույն աղբյուրը Թեոնի երկն է: Նա ընդունում է ներբողի երեք տեսակ. կենդանի մարդուն նվիրված գովեստ, վախճանվածի մասին գերեզմանական ճառ և աստվածներին ձոնված օրհնաբանություն: «Եւ սոցա է, որ ի կենդանիս ուրոյն այժմ **ներբողեան** կոչի, և է, որ ի մեռեալս՝ **մակգերեզմանական**, և է, որ յաստուածս՝ **օրհնութիւն**»<sup>24</sup>: Հունա-հռոմեական քրիստոնեական գրականության մեջ ևս ներբողները հիմնականում եղել են **գովասանական** կամ մեծարման, **գոհաբանական** կամ շնորհավորական և **դամբանական** կամ թաղման: Անտիկ գրականության մեջ գովասանական ներբողները դարձան քաղաքական հրապարակախոսության ձև: Բյուզանդական գրականության մեջ քաղաքական ներբողի փայլուն օրինակ է Եվսեբիոս Կեսարացու՝ Կոստանդին Մեծի գահակալության երեսնամյակին նվիրված ներբողը՝ արտասանված 335 թ. հուլիսի 25-ին<sup>25</sup>: Այն արդեն ներթափանցված է քրիստոնեական աշխարհայացքի տիրապետող գաղափարախոսությամբ:

Դամբանական ներբողները ևս բարձր գեղարվեստականության են հասել հին Հունաստանում: Անտիկ գրականության լավագույն դամբանականներից է Իսոկրատեսի՝ Կիպրոսի Էվգորաս արքայի մահվան առթիվ գրած ներբողը: Բյուզանդական գրականության մեջ դամբանական ներբողի գեղեցիկ նմուշներից է Գրիգոր Նապիանպացու՝ Բարսեղ Կեսարացու հիշատակին նվիրված դամբա-

նական ճառը<sup>26</sup>, ուր մարդու գովասանությունն արդեն վերածվում է եկեղեցական գործչի վարքի և կերպարի ներբողմանը՝ քրիստոնեական կրոնա-բարոյագիտական ըմբռնումների տեսանկյունից: Այդ դամբանականը, որն արդեն 5-րդ դարում թարգմանվել էր հայերեն, նկատելի հետք է թողել հայ դամբանական ներբողագրության վրա:

Բյուզանդական գրականությունը հարուստ է ներբողական վարքերով: Դրանց մի պզակի մասը նույնպես թարգմանված էր հայերեն: Դա նկատելի ազդակ է հանդիսացել հայ վարքագրության ձևավորման և նրա ուրույն գծերի մշակման վրա: Ներբողական վարքի դասական օրինակ է Հովհան Ոսկեբերանի՝ Գրիգոր Լուսավորչին նվիրված վարքագրական ներբողը, որը թեև հայերեն թարգմանվել է 1141 թվականին, բայց հայերին հայտնի էր դեռևս գրվելու թվականից, քանի որ Ոսկեբերանն այն գրել էր «ի խնդրոյ հայալիս ուրումն եպիսկոպոսի և վարդապետի համապգոյ նորին Դեոսկորոս անուն կոչեցելոյ և այլ ևս յոգնախումբ բազմութեան, որք ժողովեալ էին յաւուր յիշատակի մեծահռչակ տօնի նորին սուրբ Լուսաւորչին Արևելեան աշխարհին»<sup>27</sup>: Ոսկեբերանի այս ներբողը ևս խոր հետք է թողել հայ միջնադարյան ներբողագրության վրա:

Նաչատուր Էրզրումցին ընդունում է գովասանական ճառերի տասը տեսակ. 1-ին՝ **ուրախական**, «որ լինի ի վերայ ծննդեան», 2-րդ՝ **անվանագովական**, այսինքն՝ անվանակոչական, 3-րդ՝ **շնորհավորական**, «որով շնորհաւորեմք ումեք զբարի և զերջանկութիւն ինչ», 4-րդ՝ **ողբական**, այսինքն՝ ցավակցական, 5-րդ՝ **հարսանյաց**, «որով գովաբանին պարկեշտք հարսանիք և սուրբ ամուսնութիւն», 6-րդ՝ **հայցական** կամ **խընդրողական**, «յորում հայցեմք և խնդրեմք զիր ինչ յումեքէ», 7-րդ՝ **շնորհակալական**, «յորում շնորհակալ լինիմք վասն ընկալեալ բարեացն», 8-րդ՝ **նվիրական**, նվեր, պարգև, ընծա ստանալու առթիվ, 9-րդ՝ **հանդիսական**, այսինքն՝ հրավերի, ընդունելության և, վերջապես, **սգավորական**, այսինքն՝ սգո կամ թաղման<sup>28</sup>:

Ներբողների տեսակների սահմանման հաջորդ փորձն արել է Ագոնցը: Ըստ նրա ներբողական ճառերը լինում են ութ տեսակ. 1-ին՝ **ծննդյան**, 2-րդ՝ **հարսանյաց**, 3-րդ՝ **սգո** կամ **թաղման**, 4-րդ՝ **շնորհակալական**, 5-րդ՝

<sup>24</sup> Թեոն Ալեքսանդրացի, Յաղագս ճարտասանական կրթութեանց, էջ 130:

<sup>25</sup> Н. В. Брагинская, Эон в «Похвальном слове Константину» Евсея Кесарийского в кн. «Античность и Византия», стр. 286.

<sup>26</sup> В кн. «Кавказ и Византия», выпуск II, Ереван, 1980, стр. 161—216.

<sup>27</sup> «Սոփերք», Դ, էջ 3:

<sup>28</sup> Նաչատուր Էրզրումցի, ճարտասանութիւն, էջ 167—187:

խրախակցական, 6-րդ՝ ողբի, 7-րդ՝ հայրենիքից պանդխտելու և, վերջապես, 8-րդ՝ պանդխտությունից ետ գալու<sup>29</sup>: Ազոնցը տվել է դրանցից յուրաքանչյուրի սահմանումը: Հասկանալի է, որ ծննդյան ներբողն ասվել է սովորաբար երեխայի ծննդյան առթիվ, հարսանյացը՝ հարսանիքի, սգինը՝ մահվան և այլն: Ինքնատիպ է հայրենիքից պանդխտելու և պանդխտի վերադարձի առթիվ ասված ներբողների՝ որպես առանձին տեսակի առանձնացնելու մոտեցումը: Պանդխտությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրի տխուր հետևանք էր, և այդ թեման առանձնապես լայն արձագանք է գտել բանաստեղծության մեջ, հատկապես 15-րդ դարից սկսած:

Ըստ Մ. Գարագաշյանի՝ ներբողական ճառերը լինում են վեց տեսակ. կացրդից (տոնական, մեծարման), ծննդոց (ծննդյան), առազաստի (հարսանեկան), հաղթության, գոհության և թաղման<sup>30</sup>: Նա տվել է դրանցից յուրաքանչյուրի սահմանումը՝ մասամբ հետևելով Ազոնցին: Այսպես, օրինակ, ըստ Ազոնցի՝ «Ճառ սգոյ այն է, զոր սովորություն է ասել ի թաղման մեռելոց, կամ ի տարեդարձի՝ յատուր թաղման»<sup>31</sup>, իսկ ըստ Գարագաշյանի՝ «Թաղման ճառ այն կոչի, զոր կամ ի նմին իսկ ատուր յուղարկաւորութեանն, կամ ի դարձի տարւոյն առնեն»<sup>32</sup>:

Ներբողների տեսակները իրականում ավելի քիչ են: Ըստ էության տարբերություն չկա նշանավոր անձի մեծարման և, ասենք, զորավարին հաղթության առթիվ ձևաված ներբողների միջև, քանի որ երկուսի բովանդակությունն էլ կազմում է անձի գովասանությունը: Սակայն ակներև տարբերություն կա, ասենք, զորավարին՝ նրա հաղթության առթիվ ասված մեծարման ներբողի և, մյուս կողմից, նրա մահվան առթիվ ասված դամբանական գովասանության միջև: Այդպես էլ ոճակառուցվածքային և բովանդակային որոշակի տարբերություններ կան մի կողմից կրոնական տոնի օրվան, եկեղեցական սրբություններին և, մյուս կողմից, նահատակներին, պատմական նշանավոր անձանց, կենդանի և վախճանված գործիչներին նվիրված ներբողների միջև:

Ելնելով ներբողների բովանդակակիր տարրերի հիմնական հատկանիշներից և նրանց ոճաձևական ընդհանրություններից՝ մենք

ընդունում ենք ներբողի երեք տեսակ. 1-ին՝ գովասանական ներբող (գովք, գովեստ, դրվատ, գովասանություն, երգաբանություն, ներբողական ճառ), 2-րդ՝ վարքագրական ներբող (ներբողական վարք, ներբողյան պատմագրաբար, վարք ներբողյան, դրվատիք), 3-րդ՝ դամբանական ներբող (ներբողական ողբ, ճառ գերեզմանական, եղերերգություն, բան ողբերգական): Անշուշտ այս բաժանումը ևս ինչ-որ չափով պայմանական է և այլ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ միավորող հատկանիշներն ավելի շատ են, քան տարբերակիչ յուրահատկությունները:

## 3

Արդ, որո՞նք են ներբողի տիպաբանորեն կայուն և պատմականորեն փոփոխվող հատկանիշները: Ներբողի կայուն հատկանիշները երեքն են՝ նախաբան, բուն նյութ և վերջաբան: Ըստ Պիտոյից գրքի՝ ներբողը պետք է սկսել նախաշավիղից. «Եւ ի գովելն պարտ և արժան է նախաշաւիղ առնել ըստ տեղոյ պատճառին»<sup>33</sup>: Նախաշավիղ բառն այստեղ համարժեք է հունարեն *προσέλευσις*<sup>34</sup>, հայերեն՝ նախաբան, մուտք, առաջաբան, նախերգանք, ներածություն և համանիշ այլ բառերին: Նախաբանի հիմնական խնդիրը հանգում է առաջադիր նյութի՝ անձի, տոնի, իրի և այլն ներբողման անհրաժեշտության հիմնավորմանը: Նախաբանների տարբերություններն ու բազմազանությունը կախված է հեղինակի անհատական ոճից: Մի դեպքում այն կարող է լինել փառաբանություն, մի այլ դեպքում՝ ճարտասանական դիմում, երրորդ դեպքում՝ քնարական վեղում, չորրորդ դեպքում՝ նամակաձև մուտք և այլն: Նախաբանների բազմազանության մեջ գեղարվեստական ուրույն թարմություն ունեն քնարական սկիզբները: Դրանց հիմնական միտքը այն է, որ ներբողի նյութի իմաստն ավելի վսեմ է, խորհուրդը՝ խոր, քան կարող է պատշաճորեն մատուցել հեղինակը: Հեղինակը մերթ խոստովանում է իր ուժերի տկարությունը, մերթ ստեղծագործական շնորհ է հայցում Սուրբ Հոգուց, մերթ օգնություն է խնդրում ունկնդիրներից՝ չջեղվելու նյութից և այլն: Անշուշտ, սեփական ձիրքի այս ինքնանվաստացման մեջ կա նաև անկեղծ շեշտ: Ներբողը լինելով ձոխ, պերճ ու զարդարուն ոճի արտահայտություն՝ հեղինակներից պահանջում էր նորակերտ բաների և արտահայտությունների ձոխություն, փոխաբերությունների թարմություն, մտքերի

<sup>29</sup> Ստեփանոս Ազոնց, ճարտասանություն, էջ 416—434:

<sup>30</sup> Մատթիա Գարագաշյան, ճարտարախօսություն, էջ 187—252:

<sup>31</sup> Ստեփանոս Ազոնց, ճարտասանություն, էջ 418:

<sup>32</sup> Մատթիա Գարագաշյան, ճարտարախօսություն, էջ 218:

<sup>33</sup> Մովսես Խորենացի, Մատենագրություն, էջ 413:

<sup>34</sup> «1) Вступление, введение, 2) вступительная песнь, прелюдия, 3) хвалебная песнь, гимн, 4) начало» «Древнегреческо-русский словарь», т. II, стр. 1392.

ինքնատիպություն, որոնք էլ ենթադրում են ստեղծագործական կարողություն, երևակայության թռիչք, տաղանդ ու ճաշակ: Որպես օրինակ բերենք միայն Վարդան Արևելցու՝ Գրիգոր Լուսավորչի որդիներին և թոռներին նվիրված ներբողի մուտքը. «Բաղձանք սըրտի իմոյ բորբոքի և տկարութիւն անձին իմոյ նահանջեալ կասեցուցանէ ի յօժարութենէ: Յոյս առ Աստուած ստիպէ, և սէր սրբոցն փութացուցանէ, բայց անարժանութիւն իմ ոչ տայ համարձակել. վարանեալ գոմ յերկուցունց և տարակուսեալ ի մէջ ծփանաց, երկընչիմ ի մեծութենէ իրիս և վարհուրիմ ի հեղգութեանցն սպառնալեաց»<sup>35</sup> և այլն:

Ներբողի մյուս կայուն հատկանիշը բուն նյութն է՝ պատումը, որը համարժեք է հուսարեն *διήγησις*<sup>36</sup> և հայերեն բովանդակություն բառերին: Ըստ Պիտոյից գրքի՝ նախաբանից հետո պետք է ներկայացնել գործը. «Եւ ապա վմեծ գլուխ ներբողինի դնել զգործըն»<sup>37</sup>: Պիտոյից գիրքը պահանջում է բուն նյութը տալ այսպիսի կարգով. նախ՝ «դնել զպզգն, և զնոյն բաժանել. ի գառառս, և ի նախածնողս, և ի հարս: Ապա զսնունդն. և բաժանել յոսումն և ի վարժս, և յօրէնս»<sup>38</sup>: Այս կարգը, սակայն, պարտադիր չի եղել ոչ հեղինակների և ոչ էլ տեսաբանների համար: Թեոն Ալեքսանդրացին, օրինակ, նշում է այլ կարգ. «Յետ նախերգանին՝ անդէն իսկ յաղագս քաջատոհմութեանն ասասցուք, և այլոցն՝ որք արտաքոյ, և յաղագս մարմնոյ բարեաց»<sup>39</sup> և այլն:

Այսպիսով՝ բուն նյութի մարմնավորման հիմնական մասերը չորսն են՝ ա) ծնողների և ծննդավայրի մասին, բ) ուսման և դաստիարակության մասին, գ) հոգևոր և մարմնական գեղեցկությունների մասին և դ) գործի, աշխատանքի մասին: Այս չորս տարրերը՝ նախաբանի և վերջաբանի հետ, հիմք են տվել Ռ. Համիլտոնին ներբողի կառուցվածքի մեջ տեսնելու վեց տարր<sup>40</sup>: Հայ վարքագրական ներբողների մեջ հիմնականում պահպանված են այդ տարրերը, թեև հեղինակներն ազատ են զգացել այս կամ այն տարրն ընդարձակելու և նույնիսկ անտեսելու մեջ:

Հայ ճարտասանական ձեռնարկները անդ-

րադարձել են նաև ներբողների հորինման եղանակներին՝ ելնելով ժամանակի գործոնից: Ազոնցի բնութագրմամբ՝ ներբողները լինում են արվեստական և բնական: Արվեստականն այն է, «յորժամ ոչ հայելով ի կարգ ժամանակին՝ անխտիր վամենայն առ սահմանադր գլուխս ինչ ըստ արուեստին վերածեմք», այսինքն՝ հեղինակը չի պահպանում ժամանակի հաջորդականությունը, դեպքերի կարգը, ավելի շատ գովերգում է, քան ներկայացնում, «Իսկ բնական կարգն է, յորում կարգ պատմութեան և ժամանակի պահի»<sup>41</sup>, այսինքն՝ պահպանվում է թե՛ ժամանակի կարգը և թե՛ հերոսի կյանքի ու գործի բնական ընթացքը: Ժամանակի կարգ ասելով Ազոնցը նկատի ունի «յառաջ քան զծրնունդն», «յայն, որ ընթացքս կենաց» և ապա «յայն, որ զկնի մահուն զհետ գայ»<sup>42</sup>:

Գարագաշյանը ևս ընդունում է ներբողների հորինման երկու եղանակ՝ «ըստ հնարագիտութեան և ըստ բնութեան»: Հնարագիտության եղանակն այն է, «յորժամ առանց խնամ ունելոյ կարգի ժամանակին, որ ասելոցն են հնարիք ի գլուխս ինչ բովանդակին», իսկ «բնութեան կարգ ասի, յորժամ պատմութեան և ժամանակին կարգ պահի»<sup>43</sup>:

Ներբողի երրորդ կայուն հատկանիշը վերջաբանն է, որը համապատասխանում է հուսարեն *ἐπιλόγος*<sup>44</sup> և հայերեն ամփոփում, ավարտ, երակացություն, հորդորակ բառերին: Վերջաբաններին բնորոշ է մի ընդհանուր գիծ՝ բարեխոսության հայցում մեղքերից թողություն գտնելու և երկնային արքայության արժանանալու համար: Այլ կերպ ասած՝ վերջաբաններում մեծ տեղ են գրավում խնդրվածքները, մաղթանքները և այլն: Հայ ներբողագրության մեջ վերջաբանն ունի ընդգծված ազգային երանգ: Այստեղ է, որ ներբողագիրն արձագանքում է ժամանակի հույզող հարցերին, երբեմն ոգեկոչում անցյալի հերոսական ոգին՝ հանուն ներկայի, այստեղ է, որ նա հեռագծում է իր քաղաքական բաղձանքի ըղձալի պատկերը, արտահայտում հայրենասիրական և մարդասիրական իր խոհերն ու մտքերը: Նկատելի է, սակայն, մի օրինաչափություն. խնդրվածքների բնույթը համահնչուն է գրականության վարգագման

<sup>35</sup> «Սոփերք», հ. Ժ, Վենետիկ, 1854, էջ 5—6:

<sup>36</sup> «1) рассказ, повествование, изложение, 2) изложение сути дела». «Древнегреческо-русский словарь», т. I, стр. 403.

<sup>37</sup> Մովսես Խորենացի, Մատենագրությունը, էջ 413:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 413:

<sup>39</sup> Թեոն Ալեքսանդրացի, Յաղագս ճարտասանական կրթութեան, էջ 134:

<sup>40</sup> Տե՛ս «Поэтика древнегреческой литературы», стр. 304.

<sup>41</sup> Ստեփանոս Ազոնց, ճարտասանություն, էջ 391:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 391:

<sup>43</sup> Մատթիա Գարագաշյան, Արուեստ ճարտարապետութեան, էջ 188:

<sup>44</sup> «1) Заключение, вывод, 2) заключительная часть речи, эпилог, 3) пояснительное добавление, пояснение», «Древнегреческо-русский словарь», т. I, стр. 621.

և ժամանակի հասարակական-քաղաքական պահանջների ոգուն:

Այսպիսով, ներքողի կառուցվածքային կայուն հատկանիշներն են՝ նախաբանը՝ առաջադիր նյութի ներբողման հիմնավորմամբ, բուն նյութը՝ առանձին մասերի դրվատմամբ, և վերջաբանը՝ հեղինակի խնդրվածքներով և մաղթանքներով:

## 4

Պահպանելով կրոնաուցողական իրենց նշանակությունը և պաշտպանելով քրիստոնեական վարդապետության գաղափարները՝ հայ գրականության վարձագման առաջին շրջանի (5—10 դդ.) ներբողները, սակայն, այդ խոհերն ու պացոններն արտահայտում են կենդանի իրականության մարդկային հարաբերությունների պատկերմամբ, որոնք էլ ներբողը դարձնում են ընթերցանության հետաքրքիր նյութ: Անկախ ներբողի տեսակից՝ կենսական այդ ճշմարտությունները բացահայտվում են նյութի քրիստոնեական մեկնաբանման և հեթանոսության հետ նրա ունեցած հարաբերության, պայքարի և հակադրության ձևով: Ներբողելի անձի համար ոչինչ էր երկրային փառքը, աշխարհայինը: Լակարն Քրիստոսի իղեպան էր, հոգով անմահանալը: Ներբողագիրն ունկնդրի, հետևվաբար և՛ ընթերցողի առաջ բացում էր մի նոր աշխարհ, հարուցում նոր մտքեր ու հույսեր: Խաչը իր չէր, այլ խորհրդանիշ՝ օժտված աստվածային պորտիքով, եկեղեցին հավաքատեղի չէր, այլ Աստծու տուն, հոգևոր մայր, առանց որի անմատչելի է երկնային արքայության ուղին, Վարդավառը հեթանոսական ծաղկավարդի տուն չէր, այլ Քրիստոսի պայծառակերպության հանդես, պայելի լույսը նյութի տարր չէր միայն, այլև անիմանալի լույսի պատկեր և այլն: Կարճ ասած՝ քրիստոնեությունը հաստատելու համար մերժվում էր կռապաշտությունը: Նորը բացատրվում էր հինը: Գաղափարների այդ հակամարտությունը սուր էր և հետաքրքիր: Հինը դեռևս արմատախիլ չէր արվել, նորը դեռևս չէր արմատավորվել ամբողջ ուժով:

Որոշ վերապահումով՝ հայ առաջին ներբողագիր պետք է համարել Կորյունին: Նրա «Վարք Մաշտոցի» երկը մոտենում, բայց չի նույնանում ներբողի հետ: Այդ երկը հայ գրերի գյուտի և նրա ստեղծողի՝ Մեսրոպ Մաշտոցի մասին առաջին և հավաստի աղբյուրն է: Պատմական փաստերը Կորյունը շարադրում է սեղմ, Մաշտոցի կյանքի դրվագները՝ վարքին բնորոշ գծերով, իսկ նրա գործն ու հիշատակը պանծացնում է ներբողին հատուկ ճոխությամբ: Սա էլ հիմք է տվել այդ երկը

կոչելու մերթ ներբողյան<sup>45</sup>, ներբողական վարք<sup>46</sup>, մերթ վարք<sup>47</sup> կամ պատմություն<sup>48</sup>: Կորյունի երկն իրականում վարք է՝ իր իսկ բնորոշմամբ՝ «պատմություն վարուց»:

Հայ ներբողագրության կենտրոնական հերոսը, եթե կարելի է այսպես ասել, Գրիգոր Լուսավորիչն է: Նրան նվիրված են մի շարք ներբողներ հայ գրականության վարձագման բոլոր դարերում: Անմիջականորեն նրան նվիրված ներբողներից բացի, Լուսավորչի կերպարն անբաժան կերպով հանդես է գալիս նաև նրա որդիներին՝ Արիստակեսին, Վրթանեսին, թոռանը՝ Ներսես Պարթևին, իր տոհմի հետագա շառավիղներին՝ Գրիգորիս Վկայսերին, Ներսես Ընդհալուն, Ներսես Լամբրոնացուն, ժամանակակիցներին՝ Տըրդատ Մեծին, Հռիփսիմեին և նրա ընկերուհիներին, Գայանեին և այլ անձանց նվիրված ներբողներում: Լուսավորչի կերպարը գծված է սրբախոսական գրականությանը բնորոշ լիցեալականացման մոտեցմամբ: Ամենուր Լուսավորչի մասին կենսագրական դրվագների աղբյուրը Ագաթանգեղոսի Պատմությունն է, ավելի ճիշտ՝ Գրիգոր Լուսավորչի մասին այն վարքը, որը, ինչպես նշում է Մ. Աբեղյանը, եղել է Ագաթանգեղոսի աղբյուրներից մեկը: «Դա եղել է Ս. Գրիգորի մի վարք, հավանորեն 4-րդ դարու մի գործ, համառոտ մի պատմություն Ս. Գրիգորի, պատմական արժեք ունեցող մի երկ, որից օգտվել է հեղինակն իր գործը խմբագրելիս»<sup>49</sup>:

Լուսավորչին նվիրված ներբողներ են գրել բազմաթիվ հայ հեղինակներ. Գրիգոր Սարկավազապետը (Ջ դ.)<sup>50</sup>, Հովհաննես Սարկավազը (ԺԱ—ԺԲ դդ.)<sup>51</sup>, Վարդան Արևելցին (ԺԳ դ.)<sup>52</sup>, Հովհաննես Երվակացին (ԺԳ դ.)<sup>53</sup>, Առաքել Սյունեցին (ԺԴ—ԺԵ

<sup>45</sup> Կ. Մեխիք-Օհանյան, «Վարք Մաշտոցի» ժանրը և պատմագրական նշանակությունը, էջ 49—52: Տես «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964:

<sup>46</sup> Քնարիկ Տեր-Ղափյան, ԺԱ—ԺԵ դարերի հայ վարքագրությունը, Երևան, 1980, էջ 32:

<sup>47</sup> Մ. Ավդալբեգյան, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, Երևան, 1971, էջ 63:

<sup>48</sup> Ա. Տեր-Ստեփանյան, Կորյուն, էջ 19—24: Տես «Հայ մշակույթի նշանավոր գործիչները, 5—18-րդ դարեր», Երևան, 1976, գրքում:

<sup>49</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 182:

<sup>50</sup> «Սուփերք», հ. Դ, էջ 126—156:

<sup>51</sup> «Սուփերք», հ. Ե, Վենետիկ, 1853, էջ 5—36:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 41—82: Տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. № 8775, էջ 221ա—242բ:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 85—164: Տե՛ս նաև՝ «Գիրք որ կոչի Յաճախապատում», Կ. Պոլիս, 1824, էջ 294, 345:

դդ.)<sup>54</sup>, ուշ միջնադարում Պաղտասար Դպիրը (ԺԷ—ԺԸ դդ.)<sup>55</sup> և այլք: Այս բոլոր ներբողների գաղափարական կիսակետը ըստ էության հանգում է խորենացու հակիրճ ձևակերպմանը. Գրիգոր Պարթևը լուսավորեց «վամենայն Հայս լուսով աստուածգիտութեան» և վերացրեց «վխաւար կռապաշտութեանն» (Գիրք Բ, գլ. ԴԲ):

Այս մեկնակետից էլ բացահայտել են նրա կերպարը: Լուսավորչին նվիրված ներբողներից լավագույնը պատկանում է Հովհան Ռակբերանին՝ բյուզանդական գրականության մեջ<sup>56</sup>, իսկ հայ գրականության մեջ՝ Հովհաննես Երզնկացուն<sup>57</sup>: Երզնկացին նյութը բաժանել է չորս մեծ հարցերի՝ տոնի օրվա, որ համընկնում է զարնան ներբողմանը, տոնահանդեսի վայրի գովերգմանը, որ Սեպուհ լեռն է, ուր ձգնել է Լուսավորիչը, բուն նյութի շարադրանքին, որ Լուսավորչի հոգեվոր սխարանքի պատումն է և, վերջապես, տոնի խորհրդի բացահայտմանը՝ ըստ ժամանակի հասարակական-քաղաքական խնդիրների: Երզնկացին հետևում, բայց գերի չի մնում ներբողի ավանդական կառուցվածքին: Նախաբանը նա գրել է բանակապով (աքրոստիքոս), որը հոդում է «Յոհաննես»: Նա ևս իրեն տկար է համարում վսեմ նյութը մատուցելու և խնդրում է ունկնդիրներին, որպեսզի մաքրեն իրենց սրտերի տախտակները՝ այնտեղ հավատի հեղինակի՝ Լուսավորչի պատկերը դրոշմելու համար. «կենդանագրել ի ձեզ զտիպ պատկերին, նկարել յոգիս ձեր զգեղեցկատես հասակն գովելի փառատոյ հեղինակին»<sup>58</sup>: Ներբողը գրված է ոչ միայն տիպիկ արձակով, այլև՝ ուղղակի տեղ-տեղ չափածո: Երզնկացին համարձակորեն ներբողի բարձր տրամադրությանը ներհյուսում է ողբերգական շունչը՝ ստեղծելով հուպական լարված մթնոլորտ: Առանձնապես աչդու է ներբողի վերջաբանը: Այստեղ նա, բանասեր Ա. Սրապյանի խոսքերով ասած, «մեծ հայրենասերի խորը կսկիծով և սրտի ցավով»<sup>59</sup> գծում է ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի ծանր կացությունը, որը հրապարակախոսական արդիական հնչեղություն է հաղորդում ներբողին. «Ողբա՛ աշխարհ և

ազգ Հայաստանեայց, որ երբեմն համանման երկնի լուսալայծառ աստեղօք լցեալ, այսօր լսեմացեալ կրկին խաւարաւ, մեղաց ասեմ և նեղչացն, ամպովք ծածկեալ», մի ժամանակ ծաղկապարդ պարտեզ՝ «այսօր իբր դաշտ ապականութեան տգեղացեալ տխրութեամբ կայք, և անկարդեալ, փ սեպհական գաւառք հայրենի յօտարալեզու ազգաց տիրեցան, և գաւազանք մեղաւորաց ի վիճակս արդարոց մտին, վասն փ արդարք զձեռս իւրեանց յանիրաւութեան գործս ձգեցին»<sup>60</sup>: Ներսես Պարթևի նշխարների գյուտի առթիվ գրված իր ներբողում ևս Երզնկացին անդրադառնում է ժամանակի հույզող խնդիրներին, հայ ժողովրդի ծանր դրությանը, նրա տխուր ճակատագրին. «Հալածական եղաք և ոչ գոյ մեզ հանգիստ»,—ասում է նա,—«բնակություն մեր ի նժդեհություն»<sup>61</sup>, իսկ վերջաբանում հայցում է Աստծուց՝ «ի պատերազմունս թշնամեաց՝ վամենազօր աշոյն օգնություն, ցրուեալ և մոլորեալ ոչխարացս՝ աստուածային և քաղցր ձայնիս վերստին դարձեալ ժողովումն»<sup>62</sup>:

Քրիստոնեության հաստատման և կռապաշտության մերժման պայքարի գաղափարը ցայտուն արտահայտություն է գտել Մովսես Խորենացու՝ Հռիփսիմե կոպսին և նրա ընկերուհիներին նվիրված ներբողում<sup>63</sup>: Այդ ներբողը հանուն նոր հավատի կյանքը փոխերելու, մարմնական տանջանքներն արհամարհելու և նահատակի լուսապսակի արժանանալու գեղեցիկ օրինակություն է, ուր, ըստ էության, տարփողվում է գիտակցական մահով անմահանալու գաղափարը: Խորենացին վարպետորեն է Հռիփսիմեի կյանքի դրվագների պատմությունը միահյուսում նրա անձի ու գործի գովերգման հետ: Պատումի խորենացիական ինքնատիպությունը, սակայն, գործողությունների լարվածության և զգացումների շիկացման մթնոլորտի մեջ է: Թվում է՝ կարդում ես բազմամբոխ ռազմի տեսարանի մասին, ուր ամեն ինչ գտնվում է շարժման ու բախման մեջ: Խորենացու համար հոգևոր նպատակի վեհությունը ոչ միայն հավատ է, այլև՝ համոզմունք: Մարմինն աղտեղի կրքերի աղբյուր է, մեղքերի ակունք, հոգին՝ աստվածային լույսի մասնիկ, աստվածայինի պատկեր: Մարմնից բարձրանալ դեպի հոգևորը, երկրայինից դեպի երկնայինը, հեթանոսական տգիտության խավարից դեպի աստվածաճանաչության լույսը: Սա էր, ըստ Խորենացու, Հռիփսիմեի և նրա ընկերուհիների կյանքի իմաստն ու սխրանքի վե-

<sup>54</sup> Առաքել Սիւնեցի և իր քերթումները, ուսումնասիրությանը հ. Մկրտիչ Պատուրեանի, Վենետիկ, 1914, էջ 8—15:

<sup>55</sup> «Գիրք որ կոչի Յաճախապատում», էջ 372—383:

<sup>56</sup> «Սոփերք», հ. Դ, Վենետիկ, 1853, էջ 3—89:

<sup>57</sup> «Սոփերք», հ. Ե, Վենետիկ, 1853, էջ 3—160 ( ):

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 90—91:

<sup>59</sup> Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 68:

<sup>60</sup> «Սոփերք», հ. Ե, էջ 147—148:

<sup>61</sup> «Սոփերք», հ. Ե, Վենետիկ, 1853, էջ 59:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>63</sup> Մովսես Խորենացի, Մատենագրությունը, էջ 325:

հույությունը: Այս ընդհանրացմամբ էլ նա հորդորում է հետևել նրանց օրինակին. «Սոցալ նախանձաւորք լիցուք ամենեքեան՝ նմանապէս սիրել Վերիստոս, որպէս զի ընկալցուք պողորմութիւն»<sup>64</sup>:

Հեթանոսության դեմ պայքարն արտացոլվել է նաև կրոնական սրբություններին՝ Խաչին, Եկեղեցուն, Ծաղկապարզի, Վարդավառի և այլ տոներին նվիրված ներբողներում: Այստեղ մի կողմից մեկնաբանվում է տոնի միատիկ խորհուրդը՝ կրոնական ջերմեռանդությամբ ունկնդիրներին համակելու համար, մյուս կողմից՝ դա հակաճառություն, ընդդիմախոսություն է աղանդավորական այս կամ այն մտածողության դեմ: Խաչին նվիրված իր ներբողը Դավիթ Անհաղթը գրել է Գյուտ կաթողիկոսի (461—478) պատվերով՝ հակաճառելու համար այն աղանդավորներին, որոնք քարոզում էին, թե «ոչ գոլ Մարիամ աստուածածին, և ոչ խաչն Աստուծոյ՝ խաչ, այլ գողոց պատժարան»<sup>65</sup>: Ո՛րն է խաչի խորհուրդը, ինչո՞ւ պետք է պաշտել այն: Իրավացի՝ են արդյոք աղանդավորները, և եթե ոչ՝ ապա ինչո՞ւ: Դավիթը հերքում է աղանդավորներին նոր հավատի գաղափարական երակետից: Խաչի պորությունը ոչ թե այն է, որ նա, ինչպես հեթանոսներն են ուզում, ձյան պես սառեցներ կամ հրի պես վառեր մարդուն, այլ այն, որ նա «մեզ ի մահուանէ ի կեանս առնէ փոխադրութեան առիթ»<sup>66</sup> և իմանալի կամուրջ է՝ երկինք ելնելու համար: Այսպես էլ, ըստ Անանիա Նարեկացու (10-րդ դ.), կաթողիկե եկեղեցին մի ճանապարհ է, որը տանում է դեպի «յանխառն և յանանցական կենացն կենդանութիւն»<sup>67</sup>: Անանիան եկեղեցուն դիմառնաբար դիմում է իբրև մոր. մարդու հոգևոր ծննդի մայրն է նա: Նա է փարատում հոգու խավարը, նա է ցրել կռապաշտության մութը. «Դու վթանձրամած խաւարն կռապաշտական աղջամղջին նսեմութեան փարատեցեր և փամատարած զգերապանցիկ յուսոյն զճառագայթս անձառ և անհաս սիրոյն Քրիստոսի յերկրի մերում սփռեալ տարածեցեր»<sup>68</sup>:

<sup>64</sup> Մովսես Խորենացի, Մատենագրությունք, էջ 375:

<sup>65</sup> Դավիթ Անհաղթ, Մատենագրությունք, Վենետիկ, 1932, էջ 6:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>67</sup> «Գիրք որ կոչի ժողովածու», Կ. Պոլիս, 1747, էջ ՆԾԱ—(451):


<sup>68</sup> Նույն տեղում, էջ ՆԶ (480):

Ներբողագրության մեջ կերպարը պետք է մաքրված լինի անհատական, անձնական, մասնակի, որոշակի գծերից: Կյանքի և անձի բավականությունը ներբողի մեջ առհասարակ վերածվում է վերացարկված միաձևության՝ սրբության և մեղքի հակադրությամբ: Կենդանի անձի, բնավորության փոխարեն ներբողագիրը գծում է իդեալի ուղղագիծ լուսակերպար: Ներբողի մեկնակետի և վախճանակետի շրջագիծն անցնում է հավատի նույն ծիրով: Սրբի նույնիսկ պատմական մեծագործությունը դիտվում է միայն որպես Նրա հավատի արգասիք: Հեղինակի բարոյագիտական հայացքներն էլ խարսխված են հավատի նույն հիմքի վրա: Հավատն է եղել սրբի կյանքի նպատակը, նրա հոգևոր սրբությանի աղբյուրը, և ներբողն էլ հենց այդ նպատակի փառաբանությունն է: Ահա թե ինչու ներբողի հերոսը պատկերվում է անհատական նվազագույն գծերով և, ընդհակառակն, իբրև բարեպաշտ հավատացյալի տիպար, ամենաընդհանուր գծերով: Նրա գերազույն բաղձանքն է մերձենալ, հաղորդվել, նմանվել Աստվածորդուն՝ մահից հետո հոգով Նրա մեջ անմահանալու համար: Որքան էլ մարմնական գեղեցկության, ուժի, վայելչակալության գովքը համարվում է սրբի կերպարի ամբողջացման պահանջներից մեկը՝ ըստ ներբողի տեսության, իրականում, սակայն, դա նպատակ չէ: Ներբողագիրը սովորաբար բավարարվում է մեկ-երկու բարեմասնության հպանցիկ նշումով, քանի որ մարմնական գեղեցկության գովերգությունը կհակասեր մարմնականի նկատմամբ միջնադարում ընդունված բացասական վերաբերմունքին: Արտաքին գեղեցկությունը դիտվում էր որպես հոգևոր, ներքին գեղեցկության տեսանելի արտահայտություն: Հերոսի մարմնական գեղեցկության ներբողման այս յուրահատկությունն առանձնապես վառ է արտահայտվել Հովհան Օձնեցու (մահ. 728 թ.)՝ Հռիփսիմե կույսի գեղեցկության դրվատման մեջ<sup>69</sup>: Նա իր խնդիրն է համարում տալ Հռիփսիմեի գեղեցկության պատկերը «ըստ ներքին մարդոյն, որ երկնային թագաւորին է հաճելի»<sup>70</sup>:

#### (Շարունակելի)

<sup>69</sup> «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», Լ. 7, Երուսաղեմ, 1974, էջ 295—296:

<sup>70</sup> Նույն տեղում, էջ 295:



## Յ Ո Ւ Ց Ա Կ

### ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ\*

№ 598

ԶԱՅՆԱԳՐԵԱԼ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՀԱՐԱՎԱՆԻ  
(Մասն Ա.)

**Թերթերը՝** 327:— **Պրակները՝** 9, յուրաքանչյուրը 36 թերթից:— **Մեծությունը՝** 20.6×13.3×2.7 սմ:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած շատ բարակ թուղթ: Թթ. 268ա—327բ ավելացված են հետագայում, ավելի սպիտակ, մաքուր և հաստ թղթեր են:— **Կապը՝** սըրճագույն կաշվով և մոմաթով ծածկված հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական սրճագույն բարակ թուղթ: Բացի այդ սկզբում կա նաև չորս հաստ սպիտակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—2ա, 266բ—327բ:— **Տողերը՝** 9:— **Գլծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և հայկական նոր խապեր:— **Ձարդագրություն՝** ձեռագրում կան մատիտով նկարված օվալաձև գեղեցիկ մի պսակ, կապված ծաղիկներից և տերևներից (թ. 2բ), մոր և մանկան լատինական գուռավոր տըպված մի նկար, կպցված թղթին (26բ), սև թանաքով նկարված շատ հասարակ երեք պարոներ (47ա, 113բ և 265բ), ինչպես նաև սև թանաքով նկարված հասարակ երկու պարզագրեր (Ը—253ա և Կ—256ա):—

**Գրիչը և Ծաղկողը՝** Եղիշև Թորոսյան (1869—1922):— **Պատվիրատուն՝** անկայտ:— **Ժամանակը՝** 1883 թ. մարտի 1-ից մինչև 1889 թ. մարտի 4:— **Վայրը՝** Արաբկիր (Թուրքիա): **Ծանոթագրություն՝** Կահիրեի քահանաներից Տ. Սահակ ավագ քահանա Հաքարյանը 1975 թ. դեկտեմբերի 20-ին ձեռագիրը նվիրել է Մայր Աթոռի ձեռագրատան՝ Տ. Արսեն Եպիսկոպոս Բերբերյանի ձեռամբ: Ձեռագրատունն այն ստացել է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբեր 1982 թ.:

#### ԲՈՎԱՆՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.—Կանոն ծննդեան սրբոյ Աստուածածնին ի ծնողաց իւրոց ի Յովակիմայ և յԱննայէ:

Թ. 12բ.—Կանոն ծննդեան սրբոյ Աստուածածնի:

Թ. 19բ.—Կանոն Անտեաց սրբոյ Աստուածածնի:

Թ. 27ա.—Կանոն Աստուածայայտութեան ձրագալուցի

Պօլսեցի հեղինակութեւ: քնդօրինակեալ:

Թ. 41բ.—Կանոն Աստուածայայտութեան, Առաջին աւուրն, չափաւոր և ծանր Գր.:

Թ. 50բ.—Կանոն երկրորդ աւուրն:

Թ. 57բ.—Կանոն երրորդ աւուրն:

Թ. 66բ.—Կանոն չորրորդ աւուրն:

Թ. 74ա.—Կանոն հինգերորդ աւուրն:

Թ. 82բ.—Կանոն վեցերորդ աւուրն:

Թ. 89բ.—Կանոն եօթերորդ աւուրն:

Թ. 96ա.—Կանոն ութերորդ աւուրն:

Թ. 107բ.—Մեծացուցէք Յարութեան Տ (եա) ռն:

Թ. 121բ.—Կանոն Տեանընդառաջին:

Թ. 131բ.—Կանոն սրբոյն Անտոնի անապատակաւի:

Թ. 136բ.—Կանոն սրբոյն Թէոդոսի թագաւորի:

Թ. 140ա.—Շարական Տրդատայ թագաւորին:

Թ. 141ա.—Կանոն Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն:

Թ. 148ա.—Կանոն սրբոյն Ստեփանոսի նախավըկայի:

Թ. 159ա.—Կանոն սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի:

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № 1 և Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № 1 և Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № 1 և Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № 1 և Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № 1 և Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № 1 և Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № 1 և Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № 1 և Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № 1 և Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № 1 և Գ—Ժ-ից, 1978 թվականի № 1 և Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № 1 և Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № 1 և Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № 1 և Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № 1 և Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից, 1983 թվականի № 1 և Բ—Գ-ից, Է—Ժ-ից, 1984 թվականի № 1 և Բ—Գ-ից և Ե-ից:

Թ. 170թ.—Կանոն որդեգրողն որոտման սրբոց առաջնությունն Յակովբայ և Յովհաննու:

Թ. 180թ.—Կանոն համարեն առաջնություն:

Թ. 189ա.—Կանոն եօթնասուտն և երկու առաջնություն Բրիստոսի փրկչին:

Թ. 196ա.—Կանոն Յովհաննու մարգարեին:

Թ. 212թ.—Կանոն սրբոյն Սարգսի պորավարին:

Թ. 213ա.—Կանոն բուն Բարեկենդ (ա) նի:

Թ. 219թ.—Կանոն երկրորդ Կիրակեի Աղուհացից:

Թ. 229ա.—Կանոն երրորդ Կիրակեի Աղուհացից

պահոց:

Թ. 244թ.—Կանոն չորրորդ Կիրակեի Աղուհացից

պահոց:

Թ. 253ա.—Շաբաթ տուն է սրբոց Քառասնից:

Թ. 256ա.—Կանոն հինգերորդ Կիրակեի Աղուհացից:

Թ. 266ա.—Ցանկ օրհնությանց, Հարցից, Մեծա-

ցուցեից, Ողորմեայից, Մանկանց և Ստեղծեաց:

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2թ.—Չայնագրեալ Երզնգողութիւնք Շարականի

1883 Մարտ 1 (գրված է երկու անգամ)

Ընդօրինակեաց Եղիշէ Թորոսեան

յԱլզ (ային) Կ (եղորնական) Ուսումնարանի

Եղիշէ Թորոսեան:

Թ. 12ա.—1889 մարտ 4, Կեդր. ուսումնարան:

Թ. 26ա.—յԱրաբկիր քաղաքի

(18) 8- մայիս 31 ի Կեդր. ուսումն.

Եղիշէ Թորոսեան:

Թ. 31ա.—Այս եղանակ չարագրուած ձեռքս անցած է և այնպէս օրինակած եմ, բայց ասկէ անդին զըրուածները կրկնակի սրբագրուած են Պետրոս Էֆէնտի Փողարեանէ:

Ե (ղիշէ) Ե. Թ (որոսեան):

Թ. 102թ.—Հոս (միաբանութեամբ) տուն մը սրբագրուած չլլալուն համար տեղ կը թողում: Ե. Թ.:

Այս տունն ևս սրբագրուեցաւ: 89/11 սեպտ.:

Թ. 121ա.—Եղիշէ Թոր. (գրված է մի եռանկյան մեջ):

Թ. 140թ.—Միւս երկու տունն ալ այս եղանակաւ կերգուին:

Թ. 180ա.—[18] 89/4 օգոստոս:

Թ. 188թ.—Միւս տուններն ևս այս ընթացքով են և այս եղանակաւ կերգուին:

Թ. 212ա.—15 օգոստ (ոս) [18] 89: Ե. Թ.:

Թ. 250ա.—[18] 89/9 օգոստոս: Ե.:

Թ. 263ա.—Այս ընթացքով են մնացեալ տուններն ալ:

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա ոսկեգույնով գրված է)

Չայնագրեալ Շարական—1:

(Պահպանակի վրա—թերթ Դա և Դբ)

Շանթութիւն

Հայկական նօթերով ձայնագրուած մեր շարականներու այս երկու ձեռագիր հատորները (այսինքն Ք. 598 և 599—Ն. Մ.) ընդօրինակած է, Արաբկիրի Կեդրոնական ուսումնարանի ուսուցիչ, Արաբկիրցի Եղիշէ Թորոսեանը, 1883 թուականին:

Ան յետոյ եկած է հոս Եգիպտոս և եղած է երաժշտութեան ուսուցիչ Գահիրէի Գալուստեան Ալզ. վարժարանին, և դպրապետ Ս. Ածածին մայր տաճարին:

Իր մահէն շատ վերջ, երբ ես քահանայ ձեռնադրուեցայ 1940 Յունուար 28-ին, Եգիպտոսի, Սուտանի և Հայեջիստանի առաջնորդ, երջանկայիշատակ Ս. Մամբրէ Եպիսկոպոս Սիրունեանէ, գնեցի այս գիրքերը Գահիրէի Վահան Չարդարեան գրավաճառատունէն:

Այն ատենները Գահիրէի հայութիւնը կը հաշուէր շուրջ 25 հազար, իսկ Աղէքսանդրիայինը 12 հազար: Կային նաև սակաւաթիւ հայեր փոքր քաղաքներու մէջ: Գահիրէն ուներ երկու եկեղեցի, Աղէքսանդրիա (ն) մէկ, իսկ Չակապիկ նաև մէկ եկեղեցի. իսկ Գահիրէ ուներ 9 քահանաներ, իսկ Աղէքսանդրի (ան) 4 քահանաներ. Չակապիկը Գահիրէի կապուած էր:

Այժմ Գահիրէն ունի Ս. Գր (իգոր) Լուսաւորիչը, իսկ Աղէքսանդրիա (ն) Ս. Պօղոս Պետրոսը. առաջինին մէջ կը պաշտօնավարենք ես և Արժ. Ս. Նարեկ Յրունճեանը. իսկ Աղէքսանդրիա միայն Ս. Վարազ Պէլլերեանը ու նաև անպաշտօն Ս. Չաւէն Եպիսկոպոս Չինչինեանը վարչականօրէն:

Իսկ իբր հայութիւն. Գահիրէ կը հաշուէ շուրջ 8 հազար, իսկ Աղէքսանդրիա շուրջ 2 հազար:

Ուրախ եմ որ մեր Ս. Էջմիածնի Վեհարանի դիւանապետ Գերաշնորհ Տէր Արսէն Եպիսկոպոս Պերպերեան, ինք ինծի առաջարկեց և յանձն կառնէ յօգնութիւն իր հետ տանելու և Ս. Էջմիածնի մատենադարանին յանձնելու տոյն երկու գրքերը:

Սահակ Ա. քնյ. Շաքարեան  
Ձէթունցի:

20 դեկտ. 1975

Գահիրէ:

(Չորս տեղ կա Ս. Սահակ քահանայի օվալաձև անձնական կնիքը, թ. 2թ, 107ա, 158թ և 266ա, որի չափերն են 5.7×3.6 սմ., որի վրա գրված է հետևյալը երկու լեզվով)

Սահակ Ա. Քահանայ Շաքարեան

Գահիրէ

1940

La Caire

Archiprêtre S. Chakarian

Թ. 244թ.— Arabkir.

№ 599

# ԶԱՅՆԱԳՐԵԱԼ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՆՔ ՀԱՐԱԿԱՆԻ (Մասն Բ.)

**Թերթերը՝ 327:— Պրակները՝ 10:— Մեծությունը՝**  
20.5×13×2.5 սմ:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած  
շատ բարակ թուղթ: **Թթ. 268ա—327բ** հետագայում  
ավելացված են, ավելի սպիտակ, մաքուր և հաստ  
թուղթ են:— **Կազմը՝** սրճագույն կաշվով և մոմաթով  
ծածկված հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝**  
սկզբում և վերջում մեկական սրճագույն բարակ  
թուղթ: Բացի այդ սկզբում կա նաև չորս հաստ սպի-  
տակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար, սակայն կազմի  
մի մասը պոկված է:— **Գրությունը՝** միասյուն:— **Դա-  
սարկ թղթերը՝** 1բ, 255ա, 258ա—260բ, 266բ, 273ա—  
273բ, 287բ, 293ա—327բ:— **Տողերը՝ 9:— Գծումները՝**  
թուղթն ինքնին զծավոր է:— **Գիրը՝** շղագիր և հայ-  
կական նոր խազեր:— **Ջարդագրություն՝** ձեռագրում  
կան հասարակ մի վարդագիր (4-թ. 4ա), ծաղիկ  
(50ա), եռանկյուն վարդ (135ա), երկու փղերիկ խա-  
չիկներ (166ա և 171ա) և հասարակ մի վարդ  
(255ա):— **Գրիչը և Ծաղկողը՝** Եղիշե Թորոսյան  
(1869—1922):— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամա-  
նակը** 1883 թ. օգոստոսի 15-ից մինչև 1889 թ. սեպ-  
տեմբերի 20:— **Վայրը՝** Արաբկիր (Թուրքիա):— **Ծա-  
նոթագրություն՝** Կահիրեից (Եգիպտոս) S. Սահակ  
սովագ քահանա Շաքարյանը 1975 թ. մայիսին, Նա-  
խորդի հետ, նվեր է ուղարկել Մայր Աթոռի ձեռա-  
գրատան, ձեռամբ S. Արսեն Եպիսկոպոս Բերբերյա-  
նի: Ձեռագրատունն այն ստացել է Նոր Վեհարանի  
գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Թ. 2ա.**—Շարունակություն Աղուհացից Կիրակեի  
վերջին հարցին:

**Թ. 4ա.**—Կանոն վեցերորդ Կիրակեի աղ (ուհա) ցից:  
**Թ. 23բ.**—Շաբաթ տոն է Յարութեանն Ղազարու:  
**Թ. 24բ.**—Կանոն Ծաղկավարդի:  
**Թ. 32ա.**—Մանկունք Մեծի երկուշաբթին:  
**Թ. 33բ.**—Կանոն մեծի հինգշաբթի:  
**Թ. 39բ.**—Հարց մեծի ուրբաթու:  
**Թ. 43բ.**—Կանոն մեծի շաբթու:  
**Թ. 51ա.**—Օրհնություն Ջատկի առաջին աւուրն:  
**Թ. 56բ.**—Հարցք Յարութեան ըստ ութն ձայնից շա-  
րականի երգոց:

**Թ. 129ա.**—Կանոն Համբարձմանն Քրիստոսի:  
**Թ. 151բ.**—Կանոն Պենտեկոստեի Ա. աւուրն:  
**Թ. 165բ.**—Կանոն Վարդավառի առաջին աւուրն:  
**Թ. 173բ.**—Կանոն Վարդավառի Բ.րդ աւուրն:  
**Թ. 176ա.**—Կանոն Վարդավառի Գ. աւուրն:  
**Թ. 181ա.**—Կանոն Վերացման խաչի Ա. աւուրն:  
**Թ. 185բ.**—Կանոն խաչվերացի Բ. աւուրն:  
**Թ. 187բ.**—Կանոն Վերացման խաչի Զ. աւուրն:  
**Թ. 189ա.**—Վերացման խաչի Է. աւուրն:  
**Թ. 196բ.**—Կանոն Վարագայ խաչին:  
**Թ. 199ա.**—Կանոն Գիտ խաչի:

**Թ. 205բ.**—Կանոն սրբոյ Յակոբայ Մծբնայ հայրա-  
պետին:

**Թ. 209բ.**—Շարական Մանկանցն Բթղմի:

**Թ. 210բ.**—Կանոն սրբոց հրեշտակապետաց:

**Թ. 217ա.**— Կ. Շարական սրբոյն Յովհաննու Ոս-  
կեբերանին:

**Թ. 219ա.**—Շարական սրբոյն Բարս (ե) դի հայրա-  
պետին:

**Թ. 220բ.**—Շարական Նիկողայոսի հայրապետին:

**Թ. 223բ.**—Շարական սրբոց Սուքիասանց:

**Թ. 225բ.**—Շարական Սրբոյն Վահանայ Գողթնաց-  
ոյն:

**Թ. 230բ.**—Շարական Սրբոց Ղանդեանց:

**Թ. 238ա.**—Աւագ օրհնութիւն Ած. յարութ:

**Թ. 240ա.**—Աւագ օրհնութ. ալ.:

**Թ. 242ա.**—Աւագ օրհնութ. բձ.:

**Թ. 243բ.**—Աւագ օրհնութ. բլ.:

**Թ. 245ա.**—Աւագ օրհնութ. գձ.:

**Թ. 247ա.**—Աւագ օրհնութ. գլ.:

**Թ. 248ա.**—Աւագ օրհնութ. դձ.:

**Թ. 250ա.**—Աւագ օրհնութ. դկ.:

**Թ. 251բ.**—Հարց բլ.:

**Թ. 254ա.**—Երգ Դուռն բացեքի:

**Թ. 255բ.**—Կանոն Աշխարհամատրան Կիրակեի:

**Թ. 261ա.**—Սկզբնաւորութիւնք օրհնութեանց ըստ  
ուրթն ձայնից:

**Թ. 263ա.**—Սկզբնաւորութիւնք հարցից ըստ ութն  
ձայնից:

**Թ. 265ա.**—Սկզբնաւորութիւնք ստեղծեաց:

**Թ. 266ա.**—Ցանկ օրհնութեանց, հարցից, մանկանց  
և ստեղծեաց, որ յերկրորդ հատորիս:

**Թ. 267ա.**—Բայց մեզ Տէր:

**Թ. 268ա.**—Ալեղութ հրեշտակապետաց տօնին:

**Թ. 270ա.**—Կցորդ:

**Թ. 274ա.**—Կանոն Վարդավառի Ա. աւուր:

**Թ. 283բ.**—Ի տօնի խաչվերացի:

Երեկոյեան ի ժամ խաչվերացի:

**Թ. 286բ.**—Ս. Ած. շր. որ վանարատ...

**Թ. 288ա.**—Կանոն Վարագայ խաչին:

**Թ. 292ա.**—Հարց Տօն Կաթողիկէի Գձ:

(Թթ. 267ա—292բ տարբեր գրչի ձեռագիր է, որ  
հետագայում է գրված):

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

**Թ. 1ա.**— Զայնագրեալ  
Երգեցողութիւնք Շարականի  
Մասն Բ,  
սկսեալ  
1883, 15 օգոստ (ոս)  
Արաբկիր

յԱզգ (ային) Կեդր (ոնական) Ուսումնարանի:

**Թ. 4բ.**—Ասոր տակ կերթան մնացեալ տուներն ևս:

**Թ. 23բ.**—Յովհաննու Տէր երկնիցին և Աւագ շա-  
բաթի մակին նման երգել սովորութիւն է:

**Թ. 33ա.**— [18] 83/16 օգոստ (ոս):

- Թ. 50ա.—[18]83/18 օգոստ (ոս) 83 Արաբկիր:  
յԱզգ (ային) Կ. ուսումնարանի:  
Թ. 55բ.—Չափաւոր գրութիւնը սրբագրեալ է ի  
Պետրոս Էֆենտի Փողարեանէ:  
Թ. 56ա.—Վերջ:  
Թ. 74բ.—(Այս ընթացքով են միւս տուններն ալ):  
Թ. 85ա.—[18]83 (24 օգոստ (ոս) Ե.:  
Թ. 106ա.—Գործատունը Աւագ ուրբաթու հարցին  
է. գիտ և ասա:  
Թ. 108ա.—Եղիշէ Թ.:  
Թ. 124ա.—Բ.դ. տողի գրութիւնը շիտակ և գոր-  
ծածական է:  
Թ. 153ա.—Մնացեալ տուններն ևս այս եղանակաւ  
կերգուին:  
Թ. 155բ.—Այս հարցը հետեւեալ գրածն տեղափո-  
խեալ է և յաջորդ հարցը նոյնն է:  
Թ. 185բ.—Այսպէս կերգուին մնացեալ տուններն ևս:  
Թ. 188ա.—Այսպէս կերգուին մնացեալ 4 տուններն  
ալ:

Թ. 193ա.—Եղիշէ Թորոսեան.

1883/10 սեպտ (եմբեր) :

Թ. 196ա.—Վերջ պարանակեալ ստեղծուին:

Թ. 210ա.—Ի ժամ /8 գիշերոյ

[18]83 /12 սեպտեմբեր:

Թ. 231բ.—1883/15 սեպտ. գիշերը ժամը 4 ուկէսին  
այս շարականը գրելու ատենս ուխտ մը ըրի Այ առ-  
ջն, անպատճառ պիտի կատարեմ: Ե. Թ.:

Թ. 243ա.—(Ծանօթութիւն) Հոս տեսնուած ճաշուն  
սխալմամբ բկ. ձայնը գրուած է. հետևաբար բձ. ձա-  
շուն պէտք է բկ. ճաշուն տեղն գտնել և երգել որ  
ասոր յաջորդող օրհնութ. ներքնն գրուած է:

Թ. 244բ.—Ծանօթ. Բկ. ճաշուն սխալմամբ բձ.ին  
ներքն գրուած է, ուստի հոս գրուածը երկրորդ ձայնն  
է. կարգին գիտ և երգէ:

Թ. 246բ.—Եթէ կուպես օգտուի, միշտ աշխատէ.  
բաղձանքներդ պսակեալ են անտարակոյս:

Թ. 265բ.—Աշխատութեան վերջ

Եղիշէ Թորոսեան:

Ի քսան սեպտ. ամսոյ յամի Փրկչական  
ի հազար ութն հարիւր ութսուն և ինն թուական:

ՀԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա ոսկեգույնով գրված է)

Չայնագրեալ Շարական—2

(Պահպանակի վրա—թերթ Բա)

Armenian Vicarage

Ivema Gardens

London W. 8

England.

(Չորս տեղ կա Տ. Սահակ քահանայի օվալաձև  
անձնական կնիքը, թթ. 2ա, 117բ, 246բ և 287ա, որի  
չափերն են 5.7×3.6 սմ., որի վրա գրված է հետև-  
յալը երկու լեզվով)

Սահակ Ա. Քահանայ Շարաբեան  
Գահիրէ  
1940

Le Caire  
Archiprêtre S. Chakarian.

№ 600

ՊՈՆԵՄ

Թերթերը՝ 19:— Պրակները՝ 3, անկանոն:— Մե-  
ծությունը՝ 16.3×9.6×0.8 սմ.:— Նյութը՝ դեղնած և  
կեղտոտած միջակ հաստությամբ թուղթ:— Կազմը՝  
կանանչ թղթով ծածկված հաստ սովորաբար:—  
Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ բավարար:—  
Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 19բ:—  
Տողերը՝ 20:— Գծումները՝ մատիտով քաշված:— Գի-  
րը՝ նոտրգիր:— Չարդագրություն՝ ձեռագրում կան  
շատ հասարակ երկու վարդեր: Թ. 1ա-ում թանաքով  
նկարված է արեգակը և մեջը մի խաչ, ապա արե-  
գակի ճառագայթները, չորս ճյուղ և տերևներ, իսկ  
Թ. 18-ում էլ՝ գծերով մի վարդանկար: Այս երկու  
թերթերում կան երկու հասարակ վարդագիր (Ե—Հ):  
—Գրիչը և Ծաղկողը՝ անհայտ:— Ժամանակը՝ 19-րդ  
դար:— Վայրը՝ անհայտ:— Ծանոթագրություն՝ փոք-  
րիկ մատյանն ստացված է Նոր Վեհարանի գրադա-  
րանից 17 նոյեմբերի 1982 թ.:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Չեռագիրը պարունակում է երկու պոեմներ, առա-  
ջինը երկար, իսկ երկրորդը՝ կարճ:)

Թ. 1ա.—Գետովաբե մեծ դքսուհի (ի) գլխէն անցածն  
հոս կը խօսի (այս պոեմը բաղկացած է 168 տունե-  
րից, յուրաքանչյուրը չորս տող է):

Թ. 18ա.—Երգ ի վր ունայնութե աշխարհի (այս  
պոեմը բաղկացած է 11 տուներից, յուրաքանչյուրը  
հինգ տող է, բացի 1, 5 և 11-րդ տուները, որոնք 6  
տող են):

#### ՀԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի ներսի կողմը գրված է)

Նորոքեաց Սերոբէ Չաթալպաշեան, ի Նոր Նախի-  
ջնան, ի 1881 ամի 6 հոկ.ի:

Ի գրոց Ս. Չաթալբա (ջեան) :

Թ. 19ա.—1843 ապր. 29, Պ. խոպիլով:

Ս. Փրկիչ իմ:

1843 ապր. 29 ...


Թ. 19բ.—Բէթորդ:

ա բ գ... (գրչափորձ—երեք անգամ):  
Ած իմ:

(Շարունակելի)


**«ЭЧМИАДЗИН»**  
**ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА**  
**(ИЮНЬ 1984 г.)**

1. Проповедь Его Святейшества Вазгена I, произнесенная в кафедральном соборе по случаю праздника Первопрестольного св. Эчмпадзина, 24 июня 1984 г. (стр. 3—5).
2. Визит Его Святейшества Вазгена I, Председателю Совета Министров Арм. ССР тов. Ф. Т. Саркисяну, 25 июня 1984 г. (стр. 6).
3. Энциклика Католикоса всех армян Вазгена I об утверждении избрания епископа Гюта Нагашяна предстоятелем армянской епархии Парижа, 5 июля 1984 г., № 1271. (стр. 7—8).
4. Сообщение (пастырский визит Католикоса всех армян Вазгена I в Аргентину, Бразилию и Уругвай, с 30 апреля по 1 июня с. г.) (стр. 9—10).
5. Сообщение (личные встречи Католикоса всех армян Вазгена I с Католикосом Киликийского престола Гарегином II в Париже, 13—15 июня 1984 г.) (стр. 11).
6. Пребывание делегации восточной и западной армянской епархий США в Первопрестольном Эчмпадзине с 27 июня по 6 июля с. г. (стр. 12).
7. Собрание в Духовной Академии, посвященное пастырскому визиту Католикоса всех армян Вазгена I, в Аргентину, Бразилию и Уругвай, 27 июня 1984 г. (стр. 13).
8. Пребывание участников церковных хоров восточной армянской епархии США в Первопрестольном Эчмпадзине, с 17 мая по 12 июня с. г. (стр. 14—15).
9. Посещение Первопрестольного Эчмпадзина группой паломников из Франции, 31 мая 1984 г. (стр. 15).
10. Дьякон Вардкес Мкртчян.—Торжество по случаю завершения учебного года в Духовной Академии, 9 июня 1984 г. (стр. 16—18).
11. Церковная хроника. Новости. Описание литургии, проповедей и других торжеств, имевших место в соборе св. Эчмпадзина в июне (стр. 19—20).
12. Шен Ма (Архиепископ Торгом Манукян).—Сын Арменин (стихотворение). (стр. 21).
13. Собрание, посвященное защите прав человека, созданное по инициативе Конференции европейских церквей в Болгарии, с 3 по 6 июня 1984 г. (стр. 23—30).
14. Проф. Вараздат Арутюнян.—Начинания в области строительства, предпринятые первопрестольным Эчмпадзином в 1956—1980 гг. в период правления Католикоса всех армян Вазгена I. (исследование). (стр. 23—30).
15. А. В. Карев.—Семь слов Христа на Голгофе (исследование: перевод с русского епископа Нарека Шакаряна). (стр. 31—39).
16. Г. В. Айвазян.—Кульг Григория Просвятителя в Византийской Империи (исследование). (стр. 40—47).
17. Аршалуйс Казинян.—Пенегрик в средневековой армянской литературе (исследование). (стр. 48—56).
18. Список рукописей, поступивших в Первопрестольный Эчмпадзин (№№ 598—600). (стр. 57—60).



**"ETCHMIADZIN"**  
**OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN**  
**(JUNE 1984)**

1. The sermon of His Holiness given in the Cathedral on the occasion of the feast of Holy Etchmiadzin, 24-th June 1984 (pages 3-5).
2. The visit of His Holiness to Mr. Fadey D. Sarkissian, the president of Ministers' council of the Armenian SSR, 25-th June 1984 (page 6).
3. The encyclical of His Holiness about the confirmation of the election of Bishop Kyood Naccashian, as prelate of Paris Armenians, 5-th June 1984, No. 1271 (pages 7-8).
4. Communiqué (about the pastoral visit of His Holiness at Argentina, Brazil and Uruguay from 30-th April until 1 st of June 1984)—(pages 9-10).
5. Communiqué (about the personal brotherly meetings in Paris of His Holiness and the Catholicos Garegin II of the Great House of Cilicia during 13-15-th June 1984) (page 11).
6. The delegation of the Eastern and Western Armenian dioceses of U.S. A. in the Holy See during the days from 27-th June until 6-th of July 1984 (page 12).
7. Meeting in the hall of the Theological Seminary, on the occasion of the pastoral visit of His Holiness at Argentina, Brazil and Uruguay, 27-th June 1984 (page 13).
8. The members of choirs of the Eastern Armenian diocese of U.S.A. in the Holy See, from 17-th May until 2-nd of June (pages 14-15).
9. The visit to the Holy See of the French pilgrims, 31-st May 1984 (page 15).
10. Deacon Vardges Mkertchian—The final feast in the Theological Seminary, 9-th June 1984 (page 16-18).
11. Divine liturgy services and sermon delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of June (pages 19-20).
12. Shen Mah (Archbishop Torgom Manougian)—Son of Armenia (poetry) (page 21).
13. Meeting in Bulgaria devoted to the defence of the human rights, with the initiative of the Conference of the European Churches, 3-6-th June 1984 (page 22).
14. Prof. Varazdat Harutiunian—The history of the architectural activity of the Holy See of St. Etchmiadzin, during the patriarchate of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians (1956-1980) (study)—(pages 23-30).
15. A. V. Karev—The seven speeches of Christ in Golgotha (Study. The translation from Russian by Bishop Narek Shakarian)—(pages 31-39).
16. Gh. V. Ayyazian—The worship of the Saint Gregory the Illuminator in the Byzantine empire (study)—(pages 40-47).
17. Arshaloos Ghazinian—The panegyric in the Armenian literature of the Middle centuries (study)—(pages 48-56).
18. Nubar Mikaelian—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers 598-600 (pages 57-60).



## „ETCHMIADZINE“

ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE  
(JUN 1984)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 24 juin 1984 dans la cathédrale à l'occasion de la fête de Saint-Etchmiadzine (pages 3—5).
2. Visite de Sa Sainteté à M. Fadéy T. Sarkisian, président du Conseil des Ministres de la R.S.S. d'Arménie (25 juin 1984)—(page 6).
3. Dans son encyclique No. 1271 du 5 juillet 1984, Sa Sainteté confirme l'élection de l'évêque Kude Naccachian comme prélat des Arméniens de Paris (pages 7—8).
4. Communiqué de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant la visite pastorale de Sa Sainteté aux communautés arméniennes d'Argentine, de Brésil et d'Uruguay, du 30 avril au 1er juin 1984 (pages 9—10).
5. Communiqué concernant les rencontres fraternelles à Paris de Sa Sainteté Vasken Ier, catholikos de tous les Arméniens, et de Sa Sainteté Karèkine II, catholikos de la Grande Maison de Cilicie, du 13 au 15 juin 1984 (page 11).
6. Visite officielle à Saint-Etchmiadzine de la délégation du diocèse des Arméniens des Etats Unis, du 27 juin au 6 juillet 1984 (page 12).
7. 27 juin 1984, réunion au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine à l'occasion de la visite pastorale de Sa Sainteté en Amérique Latine (page 13).
8. Les membres des chœurs du diocèse oriental des Arméniens des Etats Unis à Saint-Etchmiadzine, du 17 mai au 2 juin 1984 (pages 14—15).
9. Visite des pèlerins français à Saint-Etchmiadzine (31 mai 1984)—(page 15).
10. Diacre Vartguès Mekertchian—9 juin 1984, réunion au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine à l'occasion de la clôture de l'année scolaire 1983—1984 (pages 16—18).
11. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de juin 1984 (pages 19—20).
12. Chen Mah (archevêque Torgom Manoukian)—„Fils d'Arménie (poème)—(page 21).
13. Réunion pour la défense des droits de l'homme tenue du 3 au 6 juin en Bulgarie par l'initiative de la Conférence des Eglises Européennes (page 22).
14. Prof. Varazdat Haroutiunian—Histoire des travaux de construction réalisés par le Saint-Siège d'Etchmiadzine dans les années 1956—1980 du patriarcat de Sa Sainteté Vasken Ier (suite)—(pages 23—30).
15. A. V. Karev—Les sept propos de Jésus au Calvaire (traduit du russe par l'évêque Narek Chakarian)—(pages 31—39).
16. G. Ayvazian—Le culte de saint Grégoire l'Illuminateur dans l'Empire byzantin (étude)—(pages 40—47).
17. Archalouis Ghazinian—Le panégyrique dans la littérature médiévale arménienne (étude) (pages 48—56).
18. Index des manuscrits reçus au Saint-Siège d'Etchmiadzine et placés sous les numéros 598—600 (pages 57—60).



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                                                            |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի քարույր՝ արտասանված Մայր տաճարում կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի առթիվ . . . . .                                                                | 3  |
| Այցելություն Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ մեծահարգ Ֆադեյ Ս. Սարգսյանին . . . . .                                                                               | 6  |
| ԱՄՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Տ. Գյուլտ եպիսկոպոս Նազգաշյանի ընտրությունը հաստատելու մասին որպես Փարիզի հայոց առաջնորդ . . . . .                                  | 7  |
| Հաղորդագրություն . . . . .                                                                                                                                                 | 9  |
| Հաղորդագրություն . . . . .                                                                                                                                                 | 11 |
| ԱՄՆ-ի հայոց արևելյան և արևմտյան թեմերի պատվիրակությունը Մայր Աթոռում . . . . .                                                                                             | 12 |
| Հավաքույթ հոգևոր ճեմարանի հարկի տակ . . . . .                                                                                                                              | 13 |
| ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի դպրաց դասերի անդամները Մայր Աթոռում . . . . .                                                                                                    | 14 |
| Ֆրանսիացի ուխտավորների այցելությունը Մայր Աթոռ . . . . .                                                                                                                   | 15 |
| ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ—Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում . . . . .                                                                                                   | 16 |
| ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ—Եկեղեցական բեմ. լուրեր . . . . .                                                                                                                              | 19 |
| ԵՆՆ ՄԱՀ (ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ)—Ձավակ Հայուն . . . . .                                                                                                                   | 21 |
| Մարդու իրավունքների պաշտպանության նվիրված ժողով Բուլղարիայում . . . . .                                                                                                    | 22 |
| ՊՐՈՖ. ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Պատմություն Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության օրոք (1956—1980) . . . . . | 23 |
| Ա. Վ. ԿԱՐԵՎ—Քրիստոսի յոթ խոսքերը Գողգոթայում . . . . .                                                                                                                     | 31 |
| Ղ. Վ. ԱՅՎԱԶՅԱՆ—Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Բյուզանդական կայսրությունում . . . . .                                                                                        | 40 |
| ԱՐԸԱԼՈՒՅՍ ՂԱԶԻՆՅԱՆ—Ներբողը միջնադարյան հայ գրականության մեջ . . . . .                                                                                                      | 48 |
| Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . . .                                                                                                               | 57 |
| „Эчмиадзин“ официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . . .                                                                                                       | 61 |
| „Etchmiadzin“ official journal of Holy Etchmiadzin . . . . .                                                                                                               | 62 |
| „Etchmiadzine“ organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine . . . . .                                                                                                     | 63 |



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ**  
**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ.**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 25.06.1984 թ.: Ստորագրված է տպագրության 2.08.1984 թ.:  
 Տպագրական 4 մամուլ+1 ներդիր, թուղթ 60×84<sup>1</sup>/<sub>2</sub>, պատվեր 523

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1984 թ.